Օրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

IFOAM ORGANICS INTERNATIONAL

oasi ORGANIC AGRICULTURE SUPPORT INITIATIVE

ICARE INTERNATIONAL CENTER FOR AGRIBUSINESS RESEARCH AND EDUCATION

AUSTRIAN DEVELOPMENT AGENCY

Հայաստանում օրգանական գյուղատնտեսության ոլորտի կարողականության զարգացման ռազմավարություն և ծրագիր

ՀԱՅԱՍՏԱՆ ՕՐԳԱՆԱԿԱՆ ARMENIA ORGANIC

Առաջարկություններ և հանձնարարականներ
ԱՀԿՄԿ (ICARE)-ի և Օրգանական գյուղատնտեսության շարժումների միջազգային դաշնության (IFOAM – Օրգանիքս Ինթերնեշնլ) կողմից

Ուսումնասիրությունը կատարվել է Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության (OASI), Ավստրիական զարգացման գործակալության (ADA) և Եվրոպական միության հովանու ներքո:

Երևան - Բոնն, մարտ 2017թ.

Տիտղոսաթերթում ցույց է տրված Հայաստանի ազգային օրգանական լոգոն, որն օգտագործվում է սերտիֆիկացված օրգանական արտադրանքի վրա, ինչպես սահմանված է 2009 թ-ի. հունիսի 26-ին ընդունված N 704-Ն որոշման մեջ:

Լրացուցիչ տեղեկությունների մասին կարող եք ծանոթանալ սույն հրապարակման գլուխ 1.3-ում:

Հապավումներ և կրճատ ձևեր 4
Ամփոփագիր 6
1 Ներածություն 8
1.1 Համատեքստ և նախապատմություն 8
1.2 Հայաստանի օրգանական գյուղատնտեսության ոլորտի ակնարկ 9
1.3 Ներկայիս քաղաքականության և ռազմավարության հետ կապված հարցեր 11
2 Մեթոդաբանություն 13
2.1 Հարցազրույցներ, ֆոկուս խմբերով քննարկումներ և գնահատումներ 14
2.2 Աշխատաժողովներ և ոլորտի զարգացման վերաբերյալ երկխոսություններ 14
2.3 Համադրություն 15
3 Առկա կարողությունները և կարողությունների զարգացման կարիքները 20
3.1 Ոլորտի կարողականությունը 20
3.2 Հաստատութենական կարողություններ 22
3.3 Անհատական կարողություններ 26
4 Ոլորտի ենթադրվող ռազմավարություն 31
4.1 Հավանության արժանացած ռազմավարական տարրեր 31
4.2 Զարգացման նպատակները և խնդիրները 33
4.3 Շահակիցների դերն և առաքելությունը 37
5 Կարողականության զարգացման ռազմավարություն 39
5.1 Հենանիշ 1) Արդյունավետ և հարակայուն օրգանական հաստատություններ 40
5.2 Հենանիշ 2) Հաղորդակցություն և խթանում 41
5.3 Հենանիշ 3) Օժանդակություն նորարարությանը 42
5.4 Հենանիշ 4) Նպաստավոր քաղաքական միջավայր 44
6 Կարողականության զարգացման գործողությունների տարբերակներ 45
6.1 Կարողականության զարգացման հենանիշ 1: Օրգանական գյուղատնտեսության ոլորտում գործող արդյունավետ և հարակայուն հաստատություններ 45
6.2 Կարողականության զարգացման հենանիշ 2. Հաղորդակցություն և խթանում 50
6.3 Կարողականության զարգացման հենանիշ 3. Օժանդակություն նորարարությանը 53
6.4 Կարողականության զարգացման հենանիշ 4. Նպաստավոր քաղաքական դաշտ. 59
7 Եզրակացություններ 62
8 Հավելվածներ 64
8.1 Օգտագործված գրականության ցանկ 64
8.2 Աշխատաժողովի օրակարգը 65
8.3 Հարցաշարեր 66

Հապավումներ և կրճատ ձևեր

ԱԶԳ (ADA)	Ավստրիական զարգացման գործակալություն
ԱԶՀ (ADC)	Ավստրիական զարգացման համագործակցություն
ՀԱԱՀ	Հայաստանի ազգային ագրարային համալսարան
ՕԳՀԱԳԾ	Օրգանական գյուղատնտեսության Հայաստանի ազգային գործողությունների ծրագիր
ՕԳՀՀ	Օրգանական գյուղատնտեսության հայկական հիմնադրամ
ԳԱՄԿ	Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններ
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀԿՀԱԱԾՄ	Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի
BOKU	Բնական ռեսուրսների և կենսական գիտությունների համալսարան
ՔԱՐԴ (CARD)	Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն
ՀՄ	Օրգանական հավաստագրման մարմին
COROS	Օրգանական չափորոշիչների ընդհանուր նպատակներ և պահանջներ
ՀԱԳ	Համայնքից աջակցվող գյուղատնտեսություն
ԵՄ	Եվրոպական միություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
HEKS/EPER	Շվեյցարիայի բողոքական եկեղեցիների օգնության ընկերություն / Entraide Protestante Suisse
ICARE (ԱՀԿՄԿ)	Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն
IFOAM	IFOAM-Օրգանիքս Ինթերնեշնլը գլոբալ ամպհովանի օրգանական կազմակերպություն է
IOAS	Օրգանական հավատարմագրման միջազգային ծառայություն
IQF	Որակի միջազգային դաշնություն
MAAN	Լեռնային ագրոէկոհամակարգերի գործողության ցանց
ԳՆ	Գյուղատնտեսության նախարարություն
ՏԶՆՆ	Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԲՊՆ	Բնապահպանության նախարարություն
NABU	Բնության և կենսաբազմազանության պահպանության միություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՕԳ	Օրգանական գյուղատնտեսություն
ՕԳԱՆ (OASI)	Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն

ՄԵՀ	Մասնակցային երաշխիքային համակարգեր
ՄՏԶ	Մասնակցային տեխնոլոգիաների զարգացում
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՌԶԳ (SDA)	Ռազմավարական զարգացման գործակալություն
ԶՀՇԳ (SDC)	Զարգացման և համագործակցության շվեյցարական գործակալություն
SMART	Կոնկրետ, չափելի, հասանելի, իրատեսական, սահմանված ժամկետում
TIPI	IFOAM-ի տեխնոլոգիական նորարարության հարթակ
UNEP	ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր
ԱՄՆ ՄԶԳ	Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՄՆ ԳԴ	ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտ
ՄԿՈՒ	Միջին մասնագիտական կրթություն և ուսուցում
FiBL	Օրգանական գյուղատնտեսության հետազոտական ինստիտուտ

Ամփոփագիր

Հայաստանում օրգանական գյուղատնտեսության ոլորտի զարգացման փորձերը նախաձեռնվել են մոտ երկու տասնամյակ առաջ՝ միջազգային տարբեր նախագծերի միջոցով և տեղական ՀԿ-ների ակտիվ ներգրավմամբ: Սակայն ոլորտի ընդհանուր տեսլականի ստեղծման կամ ընդհանուր ռազմավարության մշակման ուղղությամբ համատեղ ջանքեր չեն գործադրվել՝ ոլորտի շահակիցների փոխհամաձայնեցված գործունեությունն ուղղորդելու առումով:

2016թ. ամռանը-աշնանն իրականացված՝ Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության (OASI) շահակիցների կարիքների գնահատման միջոցով բացահայտվեցին շահակիցների բոլոր խմբերի գլխավոր կարիքները, ի հայտ բերվեց ոլորտի այսօրվա կարողականությունը և ընդգծվեցին օրգանական գյուղատնտեսության ոլորտի զարգացման խոչընդոտները: Գնահատումը լրացվեց նաև երկրորդային տեղեկատվության քննությամբ ու վերլուծությամբ: Ստացված արդյունքների հիման վրա IFOAM-Օրգանիքս Ինթերնեշնլ - ԱՀԿՄԿ (ICARE) հիմնադրամ կոնսորցիումը առաջարկում է կարողականության զարգացման ռազմավարություն և ոլորտի զարգացման գործողությունների ծրագիր, որոնք կարող են ծառայել որպես ուղեցույց ոլորտի համակարգված զարգացման համար:

Գնահատման արդյունքները դասակարգվել են ըստ շահակիցների խմբերի, ներառյալ նախարարությունները, ՀԿ-ները, արտադրողները /վերամշակողները և կրթական ոլորտը: Ընդհանրապես, կարողությունների զարգացման կարիքը դիտարկվել է որպես Հայաստանում օրգանական արտադրության զարգացման համար անհրաժեշտ հիմնական գործոններից մեկը: Հարցվողները այլ պատասխանների շարքում նշել են նաև նպաստավոր միջավայրի (ոլորտում իրավանորմատիվային բազայի կատարելագործման), շուկա մուտք գործելու մեխանիզմների և գործիքների բարելավման, սպառողների շրջանում օրգանական մթերքների վերաբերյալ իրազեկության բարձրացման, արտադրական գործընթացների բարելավման և օրգանական արտադրության համար արտոնությունների ներդրման կարևորությունը:

Հաշվի առնելով ոլորտի կարողությունների՝ փաստացի և պահանջվող վիճակների միջև եղած խզումը, խորհուրդ է տրվում օրգանական գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն աջակցել՝ հիմնվելով հետևյալ չորս հենանիշների վրա. 1) օրգանական արտադրության արդյունավետ և հարակայուն հաստատություններ, 2) հաղորդակցություն և խթանում, 3) օժանդակություն նորարարությանը, 4) նպաստավոր քաղաքական դաշտ:

Ռազմավարական հենանիշ 1. Օրգանական արտադրության արդյունավետ և հարակայուն հաստատություններ. Շահակիցները միավորվում են ընդհանուր նպատակների շուրջ, ընդ որում յուրաքանչյուր շահակից ունի իր դերակատարությունը: Օրգանական գյուղատնտեսության Հայաստանի ազգային գործողությունների ծրագիրը պետք է նկարագրի, թե ինչպես են հաստատությունները համագործակցում և ինչպես են նրանց գործողությունները համակարգվում ազգային ամպհովանի կազմակերպության և գյուղատնտեսության նախարարության ներքո: Այս հենանիշը ներառում է կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունները, պահանջարկի վրա հիմնված վերապատրաստման ծրագրերի ստեղծումը և օրգանական արտադրանքի ազգային գործողությունների ծրագրի իրականացման ընթացքը:

Ռազմավարական հենանիշ 2. Հաղորդակցություն և ապրանքի առաջխաղացում. Սա շեշտադրում է հայաստանյան օրգանական գյուղատնտեսության հայեցակարգը՝ հայաստանյան հանրության առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու և բարձրորակ սննդամթերք և գյուղատնտեսական այլ ապրանքներ արտադրելու նպատակով: Հայեցակարգն օգտագործվում է օրգանական գյուղատնտեսության՝ որպես

ժամանակակից, նորարարական, արդարացի և առողջ ապրելակերպին ու շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող և որպես զուտ հայաստանյան երևույթի, ընկալումը ձևավորելու նպատակով: Օրգանական սննդամթերքին վերապահվում է վստահելի, հարակայուն, առողջարար և արժանահավատ լինելու առավելությունը: Ոլորտը հանրության հետ ակտիվորեն հաղորդակցվում է լրատվամիջոցների, **ապրանքի առաջխաղացման**, հանրային միջոցառումների և ակտիվ մարքեթինգի միջոցով: Այն զարգանում է և դառնում հասարակական քննարկման առարկա:

Ռազմավարական հենանիշ 3. Օժանդակություն նորարարությանը. Այս հենանիշը նպաստում է օրգանական գյուղատնտեսության ոլորտում հետազոտությունների և նորորարությունների իրականացմանը, որի նպատակն է արտադրողականության, շահութաբերության և հարակայունության աճը: Հետազոտություններն ուղղված են արտադրական մարտահրավերներին և անհրաժեշտ տեղեկատվություն են տրամադրում շուկայի ընդլայնման հնարավորությունների վերաբերյալ: Գյուղատնտեսական խորհրդատվական համակարգերը, բիզնեսի զարգացման համակարգերը և տեղական հավաստագրման առկայությունը նպաստում են նորարարության զարգացմանը:

Ռազմավարական հենանիշ 4. Նպաստավոր քաղաքական դաշտ. Կառավարությունը ստեղծում է օրգանական գյուղատնտեսության համար նպաստավոր միջավայր և ոլորտի ներկայացուցիչների հետ համագործակցությամբ խրախուսում օրգանական գյուղատնտեսության վերելքը: Սա ներառում է նաև դրական արտաքին էֆեկտների խրախուսման նպատակով համապատասխան քաղաքականության իրականացումը: Ոլորտի պատասխանատուների հետ սերտ համագործակցությամբ ստեղծվում է պարզ և արդյունավետ իրավական դաշտ՝ համապատասխան կանոնների կիրարկման հնարավորությամբ:

Կարողականության զարգացման ռազմավարությունը ոլորտի ընդհանուր ռազմավարությանը նպաստող հանգամանք է և ցույց է տալիս կարողությունների զարգացման առկա կարիքները՝ առաջադրված նպատակներին ու թիրախներին հասնելու համար: Այդ ռազմավարությունում տարբերակվում են ոլորտային, ինստիտուցիոնալ և անհատական կարողությունները և առաջարկվում կարողությունների զարգացման 44 միջոցներ հետևյալի համար՝ ա) շահակիցների կարողությունների ֆորմալ զարգացում (A-միջոցներ), բ) շահակիցների ուսուցում կարողությունների անհատական, ինստիտուցիոնալ և ոլորտային զարգացման և իրացման թեմաներով (B-միջոցներ) և գ) կապերի հաստատում և գիտելիքների փոխանակում (C-միջոցներ): Առաջարկվող միջոցները հիմնված են առկա կարողությունների, գնահատման միջոցով հայտնաբերված խզումների և ընդունած ռազմավարության վրա՝ վերջինիս 4 հենանիշներով հանդերձ:

Գերակա միջոցները ներառում են՝

Հենանիշ 1-ի համար. *A1 Օրգանական արտադրության ղեկավարման դասընթաց*, *A2 Օրգանական գյուղատնտեսության Հայաստանի ազգային գործողությունների ծրագրի (ՕԳՀԱԳԾ) վերաբերյալ դասընթաց*, *B1 ՕԳՀԱԳԾ-ի ուսուցում* և *C2 Ամենամյա ազգային համաժողով:*

Հենանիշ 2-ի համար. *A6 Հաղորդակցության ռազմավարության մշակման դասընթաց և B7 Սպառողական ազգային արշավների վերաբերյալ ուսուցում:*

Հենանիշ 3-ի համար: *A12 Գիտասփյուռ-խորհրդատվական ծառայության վերաբերյալ վերապատրաստում՝ միկրոմիջամտությունների մշակման ու իրականացման նպատակով:*

Հենանիշ 4-ի համար. *A22 Օրգանական արտադրության կառավարման լավագույն փորձ, A23 Շահերի պաշտպանության թեմայով վերապատրաստում* և *C7 Պետական փոխանակման ծրագրեր:*

1 Ներածություն

1.1 Համատեքստ և նախապատմություն

Հայաստանի գյուղատնտեսության ոլորտը համարվում է երկրի տնտեսության առավել կարևոր հատվածներից մեկը, ընդ որում այս ոլորտին բաժին է ընկնում երկրի ՀՆԱ-ի մոտ 20%-ը և զբաղվածության 40%-ը: Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության միջին չափը բավական փոքր է՝ մոտ 1,48 հեկտար:[1] Ոլորտի արդյունավետությունն անհրաժեշտ է ապահովել գյուղատնտեսական մթերքների արտադրության ու իրացման գործընթացների խթանման միջոցով, որին հնարավոր է հասնել բարձր հավելյալ արժեքի ստեղծմամբ: Օրգանական գյուղատնտեսության ոլորտը այն ոլորտներից է, որոնք կարող են մեծապես նպաստել գյուղական շրջանների զարգացմանը և գյուղատնտեսության շահութաբերության մակարդակի բարձրացմանը:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացումը և խթանումը սկսվել է մոտ երկու տասնամյակ առաջ: Օրգանական գյուղատնտեսության գաղափարի իրականացման և սպառողներին օրգանական մթերքի օգուտների մասին իրազեկելու նպատակով ձևավորվեցին մի շարք ՀԿ-ներ: Աշխատանքների այդ նախնական փուլում տեղական հեռուստաալիքներով անցկացվեցին օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ քարոզարշավներ, արտադրողների համար մատչելի դարձան օրգանական ներդրանքները, ստեղծվեց օրգանական գյուղմթերքի հավաստագրման հայաստանյան մարմին, ինչպես նաև օրգանական մթերք արտադրող մի քանի արտադրողներ կարողացան մուտք գործել արտահանման (գլխավորապես եվրոպական) շուկաներ: Սակայն ամբողջ արժեշղթային վերաբերող գործողությունները կատարվում էին տարբեր նախագծերի շրջանակներում, տարբեր ժամանակաշրջաններում, ուստի ոլորտի ներդաշնակ զարգացման համար պահանջվող արդյունավետությունն այդպես էլ իրողություն չէր դառնում:

Եվրամիությունից ֆինանսավորվող և Ավստրիական զարգացման գործակալությունից (ԱԶԳ/ADA) համաֆինանսավորվող և իրականացվող «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն» (ՕԳԱՆ / OASI) նախագիծը Հայաստանում մեկնարկեց 2015թ.: Նախագծի նպատակն է աջակցել ավանդական գյուղատնտեսությունից օրգանական գյուղատնտեսության հաջող անցմանը՝ շարունակաբար բարձրացնելով օրգանական մթերքների արտադրողականությունը և մրցունակությունը շուկայում: Հարակայուն զարգացման հասնելու համար, OASI-ն ծրագրել է ոլորտի սիստեմատիկ զարգացման մոտեցում: Նախագծի թիմը զուգահեռաբար միջամտություններ է անում ոլորտի իրավակարգավորման գործում, ինչպես նաև՝ երկրում օրգանական մթերքի թե՛ առաջարկի և թե՛ պահանջարկի ավելացման ուղղությամբ: Ավելի լավ արդյունքների հասնելու համար ոլորտի շահակիցների կարողությունների զարգացումն իրականացվում է Հայաստանում գործող հաստատությունների (կազմակերպությունների) հետ սերտ համագործակցությամբ: 2016թ.-ին իրականացրած գործունեության շրջանակում OASI նախագիծը դրամաշնորհների հատկացմամբ և ներդրանքների մատակարարմամբ ուղղակիորեն աջակցել է մոտ 50 ֆերմերների և վերամշակողների: Նախագիծը մեծապես բարձրացրել է բարձրացրեց օրգանական գյուղատնտեսության մասին իրազեկվածությունը ֆերմերների շրջանում և անկասկած հանգեցնելու է հայաստանյան շուկայում տեղական օրգանական մթերքի ծավալների աճին: Բացի այդ, ենթակառուցվածքների ստեղծման և իրավակարգավորման հարցերում աջակցությունը, ինչպես նաև սպառողների իրազեվածության և բարձրացման ուղղությամբ

[1] Ազգային վիճակագրական ծառայություն (2014թ. Գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալները) http://www.armstat.am/en/?nid=82&id=1860

իրականացված աշխատանքները[2] ավելացնելու են պահանջարկը օրգանական մթերքի շուկայում: Իսկ այս պահին շատ կարևոր է հասկանալ Հայաստանի օրգանական գյուղատնտեսության կարողականության հնարավոր խնդիրները և դրանց հաղթահարման ուղիները:

1.2 Հայաստանի օրգանական գյուղատնտեսության ոլորտի ակնարկ

Օրգանական գյուղատնտեսության ոլորտում առաջին միջամտություններին, որպես հիմնական դոնորներ, աջակցել են շվեյցարական HEKS-EPER կազմակերպությունը և Զարգացման և համագործակցության շվեյցարական գործակալությունը (SDC)՝ ԱՄՆ գյուղդեպարտամենտի, ԱՄՆ ՄԶԳ-ի և ԵՄ-ի հետ համագործակցությամբ իրականացված զանազան նախագծերի միջոցով:

Ներկայումս Հայաստանում իրականացվում է բանջարեղենի, մրգի, հացահատիկի, հատապտուղների, առվույտի օրգանական արտադրություն, վայրի ուտելի բույսերի հավաքչություն, ինչպես նաև օրգանական մեղվաբուծություն: Վերամշակող ընկերությունները տեղական և միջազգային շուկայի համար արտադրում են օրգանական հյութեր, նեկտարներ, կոնցենտրատներ, պյուրեներ, սառեցված մթերքներ, բուսական թեյեր, չրեր և հաց:

Աճում է հավաստագրված օրգանական ֆերմերային տնտեսությունների և վերամշակող ընկերությունների թիվը: Եթե 2009թ.-ին օրգանական մշակության տակ դրված էր 1500 հա հողատարածություն, ներառյալ վայրի բույսերի հավաքչության տարածքները (օրգանական հավաստագրում ունեցող 8 տնտեսություններ, 6 վերամշակող ու արտահանող ձեռնարկություններ), ապա 2012թ.-ին օրգանական արտադրության տակ կար արդեն 19000 հա հողատարածություն, ներառյալ վայրի բույսերի հավաքչության տարածքները և ավանդականից օրգանականի փոխարկվող տարածքները: Օրգանական մեղվափեթակների թիվը 2013թ. կազմում էր 530, որոնք արտադրում էին ընդհանուր առմամբ 16000 տոննա մեղր[3]: Ներկայումս Հայաստանում գործում են 46 հավաստագրված օրգանական տնտեսավարող սուբյեկտներ, ընդ որում դրանց ցանկը ներառում է վայրի հավաքչությամբ և վերամշակմամբ զբաղվող 8 տնտեսավարող, 18 գործարանային արտադրություն, 10 վերամշակող ձեռնարկություն, մեղր արտադրող 2 տնտեսավարող, ինչպես նաև 7 մեղվաբույծներ և օրգանական պարարտանյութի մեկ ներկրող[4]:

Ավելանում են նաև հայաստանյան օրգանական արտադրանքի արտահանման հնարավորությունները: Հայաստանը օրգանական մթերքի արտահանումը սկսել է 2008թ.: Արտահանվող հիմնական օրգանական մթերքներն են օրգանական արտադրության մրգերն ու հատապտուղները և վայրի ուտելի բույսերը, ինչպես օրինակ՝ արագ սառեցման ենթարկված արտադրանքը, հյութերը, խմիչքները, կոմպոտները և մեղրը: Ընդ որում առաջարկի ծավալները չեն բավարարում շուկաներում առկա պահանջարկը: Արտահանման հիմնական շուկաներն են Ռուսաստանը և Եվրամիությունը: Ակնկալվում է, որ շուկաները կընդլայնվեն դեպի ԱՄՆ, Կանադա և ասիական երկրներ:

---

[2] Ավստրիական զարգացման գործակալություն - http://www.entwicklung.at/en/ada/news/detail-en/artikel/organic-agriculture-support-initiative-oasi-proj-1/

[3] Նունե Դարբինյան, Օրգանական սննդամթերքի հետազոտություն « Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» դրամաշնորհային 2-րդ ծրագրի շրջանակում (ECAPDEV No. TF05171), 2014.

[4] Էկոգլոբի կայք - http://ecoglobeorganic.com/operators/ - 27.02.2017թ.-ին հրապարակված ցանկ

Ոլորտի քաղաքականությունը մշակվում է քաղաքականությամբ զբաղվող մի քանի կառույցների կողմից՝ գյուղատնտեսության նախարարությունը, Անտառային պետական մոնիտորինգի կենտրոնը, բնապահպանության նախարարությունն իր կենսառեսուրսների կառավարման գործակալության հետ, ինչպես նաև տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը: Գյուղատնտեսության նախարարությունը պատասխանատու է օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ համապատասխան քաղաքականության և օրենսդրության մշակման, ինչպես նաև դրանց կիրառման համար: Թվարկված մնացած բոլոր գերատեսչությունները մասնակցում են այդ փաստաթղթերի վերանայմանը և մեկնաբանություններ անում քաղաքականության իրականացման առաջարկված միջոցառումների հնարավոր ազդեցությունների վերաբերյալ:

2002թ.-ից ի վեր ոլորտի զարգացմանն աջակցում է տեղական հավաստագրող մարմին ԷԿՈԳԼՈԲ կազմակերպությունը: Հայրենական, ԵՄ և արտահանման այլ շուկաների համար ԷԿՈԳԼՈԲ-ն առաջարկում է օրգանական հավաստագրում՝ «Կանաչ Կովկաս» մասնավոր չափորոշչի համաձայն: Կազմակերպությունը նաև հավատարմագրված է DAkkS-ի կողմից՝ ԵՄ-ի շուկաների, FOAG-ի կողմից՝ Շվեյցարիայի շուկաների և ԱՄՆ գյուղդեպարտամենտի Ազգային օրգանական ծրագրի կողմից՝ ԱՄՆ-ի և Կանադայի շուկաների համար:

Գյուղատնտեսության և արդյունաբերության ազգային քաղաքականությունում մեծապես կարևորվում է օրգանական գյուղատնտեսության դերը: Սակայն կառավարությունը ոչ միայն որևիցե աջակցություն չի նախատեսում օրգանական արտադրության ոլորտի զարգացման համար, այլև սուբսիդիաներ չի տրամադրում ֆերմերներին, ովքեր կարող էին անցում կատարել ավանդականից դեպի օրգանական արտադրություն: Այսպիսով, Հայաստանում հարակայուն օրգանական գյուղատնտեսության զարգացումը շարունակում է մնալ մարտահրավեր: Ինչպես յուրաքանչյուր նոր հայեցակարգի դեպքում, անհրաժեշտ է ֆերմերներին շահադրդել արտադրելու հավելյալ արժեք ունեցող, առողջարար և շրջակա միջավայրի համար անվտանգ օրգանական մթերք, ինչպես նաև սպառողների շրջանում բարձրացնել իրազեկվածությունը այդ մթերքների օգտակարության վերաբերյալ և վստահություն սերմանել օրգանական մթերք արտադրողների հանդեպ: Անհրաժեշտ է նաև կրթել և վերապատրաստել մանրածախ շուկայի տնտեսավարողներին, քանի որ նրանք դեռևս մեծ փորձ չունեն օրգանական մթերք վաճառելու գործում:

Մասնակցային երաշխիքների համակարգի (ՄԵՀ, PGS) հայեցակարգը, որը աշխարհով մեկ խթանվում է IFOAM–Օրգանիքս Ինթերնեշնլի կողմից, Հայաստանում դեռևս տարածում չունի: ՄԵՀ-ի հայեցակարգը կիրառելի է այն համայնքներում, որոնք կապեր են հաստատում իրենց հաճախորդների խմբերի հետ: Արտադրության, վերամշակման և առևտրի կազմակերպման համար արտադրողներն ու սպառողները համաձայնության են գալիս ընդհանուր կանոնների (չափորոշիչների) շուրջ: Նրանք նաև համաձայնության են գալիս այն հարցում, թե ինչպես ստուգել գործունեության համապատասխանությունը գործող կանոնակարգերին: ՄԵՀ-ը հիմնվում է սոցիալական վերահսկողության վրա և կարիք չունի որևիցե երրորդ կողմի հավաստագրման, բայց այն սահմանափակվում է այն շուկաներով, որտեղ տվյալ արտադրողին ճանաչում են:[5]

Ամփոփելով նշենք, որ Հայաստանն ունի օրգանական գյուղատնտեսություն զարգացնելու ներուժը, ինչպես նաև կան օրգանական մթերքի շուկայի զարգացման հեռանկարներ, բայց տեղական արտադրողները պետք է մեծ և շարունակական ջանքեր գործադրեն,

[5] Մանրամասները տես http://www.ifoam.bio/en/organic-policy-guarantee/participatory-guarantee-systems-pgs

որպեսզի եվրոպական օրգանական շուկայում դառնան հարակայուն և մրցունակ: Ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է կառավարության և արտերկրի օժանդակությունը:

1.3 Ներկայիս քաղաքականության և ռազմավարության հետ կապված հարցեր

Քանի որ Հայաստանում գյուղացիական տնտեսությունների միջին չափը շատ փոքր է, և մասշտաբի էֆեկտի հասնելն ու գնի հարցում մրցակցելը միշտ չէ, որ հնարավոր է, կառավարությունն ընդունել է բարձրարժեք գյուղատնտեսական մթերքների արտադրության խթանման ռազմավարություն: Բարձր արժեք ստեղծող գլխավոր ուղղություններից մեկը համարվում է օրգանական գյուղատնտեսությունը: Այս ճյուղի ռազմավարական կարևորությունը շեշտադրված է Գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունում:[6] Մասնավորապես, գերակա խնդիրներ են համարվում ազգային օրգանական չափորոշիչների մշակումը, բույսերի պաշտպանության օրգանական միջոցների ավելի լայն տեսականու ներդրումը, ինչպես նաև օրգանական մթերքի վերամշակումը:

Վերջին տասնամյակի ընթացքում կառավարությունն ընդունել է իրավակարգավորիչ մի շարք փաստաթղթեր[7].

1. ՀՀ օրենքը օրգանական գյուղատնտեսության մասին (2008թ.)
2. ՀՀ օրենքը «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (2012թ.)
3. ՀՀ օրենքը համապատասխանության գնահատման մասին (2004թ.)
4. ՀՀ կառավարության որոշումը օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների գրանցամատյանների և օրացուցային գրանցումների վարման կարգը սահմանելու մասին (2008թ.)
5. ՀՀ կառավարության որոշումը օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական արտադրության անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշման և պիտակավորման կարգը հաստատելու մասին (2009թ.)
6. ՀՀ կառավարության որոշումը օրգանական գյուղատնտեսության մեջ թույլատրելի և սահմանափակ թույլատրելի նյութերի, այդ թվում՝ պարարտանյութերի, հողի կառուցվածքի բարելավման և բերրիության բարձրացման, բույսերի պաշտպանության միջոցների, ախտահանող նյութերի անվանացանկն ու կիրառման կարգը սահմանելու մասին (2009թ.)
7. ՀՀ կառավարության որոշումը օրգանական գյուղատնտեսության կազմակերպման, բույսերի և բուսական ծագման մթերքի, գյուղատնտեսական կենդանիների և անասնապահական ծագման մթերքի (ներառյալ մեղվաբուծական մթերքը) արտադրության, օրգանական եղանակով վերամշակման, փաթեթավորման, պահպանման, փոխադրման, իրացման և մակնշման կարգը սահմանելու մասին (2009թ.)
8. ՀՀ կառավարության որոշումը օրգանական գյուղատնտեսության ոլորտում համապատասխանության սերտիֆիկատ տալու կարգը և օրգանական

[6] ARLIS վեբկայք, ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=63109:

[7] ARLIS վեբկայք - www.arlis.am

գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության նշանի, համապատասխանության սերտիֆիկատի ու օրգանական գյուղատնտեսության ոլորտի արտադրության մեթոդի համապատասխանության սերտիֆիկատի ձևերը հաստատելու մասին (2009թ.)

9. ՀՀ կառավարության որոշումը օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանի տևողությունը, դրա կրճատման կամ երկարաձգման կարգը սահմանելու մասին (2009թ.)
10. ՀՀ կառավարության որոշումը օրգանական գյուղատնտեսական սննդամթերքի ներմուծման և արտահանման կարգը և ներմուծվող օրգանական գյուղատնտեսական սննդամթերքն ուղեկցող օրգանական սերտիֆիկատի ձևը սահմանելու մասին (2012թ.)
11. ՀՀ կառավարության որոշումը կենդանիների, կենդանական ծագում ունեցող մթերքի, հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների ներմուծման, արտահանման, հանրապետության տարածքում փոխադրման համար անասնաբուժական ուղեկցող փաստաթղթեր և անվտանգության հավաստագրեր տալու կարգը, անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի ու անվտանգության սերտիֆիկատների ձևերը հաստատելու և ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (2010թ.)
12. ՀՀ կառավարության որոշումը բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ներմուծման թույլտվության և ներմուծման, արտահանման, վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման կարգը և ձևերը սահմանելու մասին (2007թ.):

Համաձայնեցվածությունը ապահովելու և իրավակարգավորումները պարզեցնելու նպատակով անհրաժեշտ է կատարելագործել և վերանայել որոշ կանոնակարգեր, որը թույլ կտա օրգանական արտադրության զարգացման համար ստեղծել ավելի նպաստավոր իրավական դաշտ:

2 Մեթոդաբանություն

OASI-ի շահակիցների կարողականության զարգացման՝ փաստաթղթում ներկայացված կարիքները հիմնված են հարցազրույցների, աշխատաժողովների ու կլոր սեղանի ձևաչափով քննարկումների արդյունքների վրա, որոնք իրականացրել են ԱՀԿՄԿ (ICARE) հիմնադրամը և IFOAM – Օրգանիքս Ինթերնշնլը: Հարցազրույցներն անցկացվել են հետևյալ 4 խմբերը ներկայացնող 48 շահակիցների հետ.

- նախարարություններ, այդ թվում ԳՆ-ի կառուցվածքում գտնվող ԳԱՄԿ-եր,
- հասարակական կազմակերպություններ,
- կրթական ոլորտ,
- օրգանական մթերք արտադրողներ և վերամշակողներ:

Շահակիցների առաջին խումբը ներառում էր գլխավորապես նախարարություններ, և դրանց կառուցվածքում եղած օրգանական մթերքի արտադրության հետ այս կամ այն կերպ կապված կառույցները ներկայացնող պաշտոնատար անձանց, որոնք մասնակցել են Հայաստանում օրգանական արտադրության ոլորտի զարգացումներին: Այս խմբի հետ ընդհանուր առմամբ անցկացվել է 21 հարցարույց, ըստ գերատեսչությունների՝ հետևյալ բաշխվածությամբ.

- գյուղատնտեսության նախարարություն – 6 հարցազրույց,
- բնապահպանության նախարարություն – 1 հարցազրույց,
- տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն – 1 հարցազրույց,
- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն - 1 հարցազրույց,
- Ստանդարտների ազգային ինստիտուտ - 1 հարցազրույց,
- ԳԱՄԿ-եր և ԳԱՀԿ (գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն) – 11 հարցազրույց:

ՀԿ ոլորտը ներկայացված էր 8 կազմակերպություններով, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում ոլորտում, ինչպես նաև՝ հավաստագրման տեղական մարմնով, օրգանական մթերք ներմուծող մի կազմակերպությամբ, օրգանական մթերքի պահեստավորման ոլորտի ներկայացուցչով և սննդամթերքի անվտանգության լաբորատորիայից մեկ փորձագետով (12 հարցազրույց):

Կրթության ոլորտից հետազոտության մեջ ընդգրկված էին Հայաստանի ազգային ագրարային համալսարանը (ՀԱԱՀ), Արմավիրի և Ստեփանավանի գյուղատնտեսական քոլեջները, ինչպես նաև Հայաստանի ամերիկյան համալսարանը և ԱՀԿՄԿ (ICARE) հիմնադրամի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը: Լրացվեց ընդամենը 4 հարցազրույց (Արմավիրի քոլեջի ներկայացուցիչը չկարողացավ լրացնել հարցաշարը՝ օրգանական գյուղատնտեսության ոլորտում զարգացումներին անտեղյակ լինելու պատճառով):

Չորրորդ խումբը (օրգանական արտադրողներ և վերամշակողներ) ներառում էր վերամշակող 2 գործարան, օրգանական պարարտանյութի մեկ արտադրող, գյուղատնտեսական երկու կոոպերատիվ և 4 ֆերմեր (ընդամենը՝ 9 հարցազրույց):

Բացի վերոնշյալից, ևս երկու հարցարույց է անցկացվել մասնավոր գիտատեխնիկական խորհրդատվական ծառայությունների ներկայացուցիչների հետ Դարակերտ և Վեդի համայնքներում:

Հարդյունս անցկացված հարցազրույցների, վեր հանվեցին տարբեր շահակիցների կարիքները, որոնք այնուհետև վավերացվեցին աշխատանքային խմբի՝ 2016թ. օգոստոսի

29-ին կայացած նիստի ժամանակ: Նիստի ընթացքում կարիքները նաև տեղակարգվեցին ըստ գերակայությունների:

Կարիքների գնահատումն իրականացվել է ADA-ի կարողությունների զարգացման ուղեցույց-ձեռնարկի[8] հիման վրա: Առանձնացվեցին և ուսումնասիրվեցին կարիքների երեք մակարդակներ՝ անհատական, ինստիտուցիոնալ և ոլորտային: Թեպետ կարիքների բոլոր երեք մակարդակներում էլ արտահայտվեցին տարբեր կարծիքներ, շահակիցների 4 խմբերի շատ ներկայացուցիչներ կարևորեցին որոշ ընդհանուր կարիքներ: Ընդհանուր ինստիտուցիոնալ և ոլորտային կարիքները մասնավորապես ներառում էին մասնագիտական հմտությունները, օրգանական ոլորտի իրավակարգավորման բարելավումը, ֆինանսական աջակցությունը և վերապատրաստման ու փոխանակումների ծրագրերը:

2.1 Հարցազրույցներ, ֆոկուս խմբերով քննարկումներ և գնահատումներ

Հարցազրույցները շատ արժեքավոր պատկերացումներ տվեցին ոլորտի առկա իրավիճակի մասին, շեշտադրեցին շահակիցներին հանդիպող հիմնական խնդիրները և երևան բերեցին նրանց ունեցած կարիքները: Սա տվյալների հավաքման հիմնական գործիքն էր, որին եկան լրացնելու ֆոկուս խմբերով քննարկումները, արդյունքների վավերացման աշխատաժողովները, ինչպես նաև արդյունքների քննարկումը OASI-ի շահակիցների՝ աշնանը կայացած ժողովի ժամանակ: Հարցազրույցներն անցկացվեցին նախօրոք ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ հարցազույցի մասնակիցների համար առավել հարմար տեղերում: Յուրաքանչյուր հարցազրույց տևում էր 1-ից մինչև 2,5 ժամ:

Գնահատման շրջանակում, Լուկաշին համայնքում իրականացվեց նաև օրգանական արտադրողների ֆոկուս խումբ (ՖԽ): ՖԽ քննարկմանը ընդհանուր առմամբ մասնակցեց 5 օրգանական արտադրող (չրերի, մրգերի և խաղողի): ՖԽ-ի նպատակն էր վավերացնել խորազնին հարցազրույցների միջոցով ստացված արդյունքները և ճշգրտել ֆերմերների անհատական կարիքները:

ՖԽ քննարկումը տևեց մոտ 2 ժամ: Համակարգողը քննարկումը վարում էր կիսակառուցվածքավորված հարցազրույցի ձևաչափով, օգտագործելով ֆերմերների հարցազրույցի հարցերը: Քննարկման որոշակի ժամանակահատված տրամադրվեց մասնակիցներին, ընդ որում համակարգողի կողմից որևիցե արտաքին միջամտություն թույլ չտրվեց: Քննարկման ընթացքում հնչած բոլոր արժեքավոր տեղեկությունները գրի առնվեցին:

Հարցազրույցները ձայնագրելու մի քանի փորձ եղավ, բայց այդ ձևաչափը մասնակիցների համար այնքան էլ հարմարավետ չէր, ուստի գնահատումն իրականացնող խումբը համալրվեց ևս մեկ անձով, որը գրի էր առնում պատասխանները՝մինչ հարցազրուցավարը վարում էր քննարկումը:

2.2 Աշխատաժողովներ և ոլորտի զարգացման վերաբերյալ երկխոսություններ

Ինչպես նշվել էր առաջարկի հայտում, հարցազրույցներն ավարտելուց հետո հարցազրույցի մասնակիցների հետ անցկացվեց արդյունքների վավերացման

[8]http://www.entwicklung.at/fileadmin/user_upload/Dokumente/Publikationen/Handbuecher/Kapazitaetsentwicklung/Manual_Capacity_Development.pdf

աշխատաժողով: Այս ձևաչափը ապացուցել է իր արդյունավետությունը՝ գաղափարների սկզբնավորման առումով, քանի որ հարցարույցի մասնակիցներն արդեն գիտեն, թե ինչի շուրջ է լինելու քննարկումը, և արդյունավետ քննարկում իրականացնելու համար «սառույց կոտրելու» կարիքը չկա: Բացի այդ, հարցազրույցից հետո մասնակիցները ժամանակ ունեին վերաիմաստավորելու իրենց տրված հարցերը և ավելի պատրաստ էին ակտիվ քննարկմանը:

Հարցազրույցին մասնակցած բոլոր շահակիցները հրավիրվել էին արդյունքների վավերացման աշխատաժողովին, որին, սակայն, մասնակցեցին 26-ը: Աշխատաժողովի մանրամասն օրակարգը ներկայացված է Հավելված 8.2-ում:

Վավերացման ընթացքում բոլոր մասնակիցները բաժանվեցին չորս խմբի, ինչպես արվել էր բուն հարցազրույցի ժամանակ, մի տարբերությամբ՝ԳԱՄԿ-երի ներկայացուցիչները միացան կրթական ոլորտի ներկայացուցիչների կլոր սեղանին. այսպիսով, քննարկումներ տեղի ունեցան հետևյալ խմբերի հետ՝

- նախարարությունների ներկայացուցիչներ, ներառյալ ԳԱՄԿ-եր
- հասարակական կազմակերպություններ,
- Կրթության ոլորտ
- Օրգանական մթերք արտադրողներ և վերամշակողներ:

Յուրաքանչյուր խմբի համար նշանակված համակարգողներին տրամադրվել էին վավերացման գործընթացի իրականացման ուղեցույցներ: Համակարգողները ներկայացրեցին հարցազրույցների ժամանակ յուրաքանչյուր խմբի կողմից բացահայտված կարիքները, իսկ մասնակիցներին խնդրեցին ավելացնել լրացուցիչ կարիքներ, որոնք նախկինում նշված չեն եղել, ինչպես նաև դասավորել նշված կարիքներն ըստ առաջնահերթության: Այնուհետև թե՛ հարցազրույցների ժամանակ բացահայտված կարիքները և թե՛ կլոր սեղանի քննարկման ժամանակ ավելացվածները խմբավորվեցին ըստ առաջնահերթ կարևորության:

Աշխատանքային խմբերից յուրաքանչյուրին հանձնարարվեց նաև բացահայտել ոլորտի զարգացման մեջ առկա թերությունները և թվարկել աշխատանքների ցանկը, որոնք պետք է նպատակաուղղվեն այդ թերությունների վերացմանը: Այդ աշխատանքները նույնպես խմբավորվեցին ըստ ոլորտի զարգացման տեսանկյունից դրանց կարևորության:

2.3 Համադրություն

Ընդհանուր առմամբ նշվում էր, որ նույնիսկ հիմնական շահակիցների շրջանում խիստ սահմանափակ է օրգանական արտադրության սկզբունքների իմացությունը և առհասարակ օրգանական գյուղմթերքի արժևորումը: Տվյալների հավաքման միևնույն ձևաչափին հետևելու նպատակով շահակիցների խմբերը համադրեցին արդյունքները:

Նախարարություններ և ԳԱՄԿ-եր

Գյուղատնտեսության նախարարության՝ օրգանական գյուղատնտեսության քաղաքականության մշակմամբ զբաղվող պաշտոնյաները քաջատեղյակ էին ոլորտի առջև ծառացած մարտահրավերներին, բայց շատերը չէին կարևորում օրգանական արտադրության կամ վերամշակման ոլորտների գերակայությունները, քանի որ արտադրողների թվաքանակը սահմանափակ է, իսկ արտադրանքի ծավալները՝ շատ փոքր բարձր արտադրողականություն ապահովելու համար: Սա առավել տեսանելի էր ֆերմերներին խորհուրդներ տալու և ուսուցանելու կոչված մարմինների՝ ԳԱՄԿ-երի

հարցազրույցների արդյունքների պարագայում: ԳԱՄԿ-երի ներկայացուցիրչներից շատերը վատ էին տեղեկացված օրգանական արտադրության սկզբունքների մասին, ուստի չէին կարող այդ հարցերում օժանդակել ֆերմերներին: Օրգանական գյուղատնտեսության մասին տեղեկատվությունը ԳԱՄԿ-երի բազմաթիվ ներկայացուցիչներ ստացել են ՕԳԱՆ (OASI) նախագծի շրջանակում արտադրողներին տրամադրված ֆինանսական աջակցության շնորհիվ, բայց օրգանական գյուղարտադրության արդյունքները դեռևս լայնորեն չեն ներկայացվել երկրի բազմաթիվ տարածաշրջաններում: Ուստի, օրգանական արտադրության փորձացուցադրական տնտեսությունները շատ օգտակար կլինեն օրգանական գյուղատնտեսության օգուտները ցուցադրելու նպատակով:

Շահակիցների այս խմբի հիմնական կարիքները. ընդհանուր տեղեկություններ օրգանական արտադրության սկզբունքների (շեշտադրելով օրգանականի և ավանդականի միջև եղած տարբերությունները), ինչպես նաև բույսերի պաշտպանության օրգանական միջոցների և բուսաբուծության մասին (օրգանական անասնաբուծական արտադրության ոլորտը շարունակում է մնալ խնդրահարույց՝ ԵՄ և ԱՄՆ գյուղդեպարտամենտի Ազգային օրգանական ծրագրի կողմից սահմանված պահանջներին չբավարարելու պատճառով):

Կոնկրետ **անհատական կամ ինստիտուցիոնալ մակարդակում** անհրաժեշտ է՝

- օրգանական արտադրության հայեցակարգի յուրացման նպատակով վերապատրաստել 1-2 մասնագետի՝ բուսաբուծական մթերքների արտադրության, անասնաբուծական մթերքների արտադրության և սննդամթերքի վերամշակման համապատասխան վարչություններից (բաժիններից).
- արտերկրի փորձի տեղայնացման նպատակով աշխատակիցներին ընդգրկել փորձի փոխանակման ծրագրերում:

Ոլորտային մակարդակում անհրաժեշտ է՝

- մշակել և շարունակաբար իրականացնել ուսուցանողների վերապատրաստում (թե՛ օրգանական գյուղատնտեսությանը վերաբերող և թե՛ ընդհանուր գյուղատնտեսական թեմաներով).
- օժանդակել նախարարությունների (ԳՆ, ԱՆ, ԲՊՆ, ԿԳՆ) միջև համագործակցությանը.
- վերանայել օրգանական արտադրության վերաբերյալ կանոնակարգերը,
- մշակել բուհական մակարդակի կրթական ծրագրեր և իրականացնել ուսուցման մեթոդների արդիականացում.
- նախաձեռնել օրգանական արտադրողների պետական աջակցություն (ներառյալ՝ հարկային արտոնությունները, աջակցությունը արտահանման և ներդրանքների ձեռք բերման գործում).
- մշակել հայկական օրգանական բրենդ.
- ֆերմերների արդյունավետ վերապատրաստման նպատակով յուրաքանչյուր մարզում հիմնել օրգանական գյուղատնտեսության փորձացուցադրական տնտեսություններ:

ՀԿ-ներ.

Այս ոլորտի ներկայացուցիչները կարևոր դերակատարություն են ունեցել Հայաստանում օրգանական գյուղատնտեսության ոլորտի քարոզչության, ինչպես նաև՝ օրգանական գործունեություն ծավալած ֆերմերային տարբեր խմբերի աջակցության գործում: Հարկ է նշել, որ մինչ այժմ ձեռք բերված հաջողությունները գլխավորապես եղել են շահակիցների հենց այս խմբի՝ ՀԿ-ների շնորհիվ: Էկոգլոբ ՍՊԸ-ն ակտիվորեն նպաստում է օրգանական գյուղատնտեսական արտադրության սկզբունքների արմատավորմանը, Շենը, Կանաչ արահետը և ՔԱՐԴ-ը աջակցում են թե՛ կոնկրետ արտադրողներին և թե՛ նպաստավոր միջավայրի ստեղծմանը՝ օգնելով ֆերմերներին մուտք գործել շուկա: Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի (ՀԿՀԱԱՄ) ՀԿ-ն և NABU-ն խթանում են առողջ կենսակերպը և շրջակա միջավայրի համար օրգանական գյուղատնտեսության օգտակարությունը:

Շահակիցների այս խմբի հիմնական կարիքներն են՝ կարողությունների զարգացումը՝ արտադրության նորարարական մեթոդների վերաբերյալ վերապատրաստումների առումով, որոնց ժամանակ ձեռք բերված գիտելիքներն այնուհետև կարելի է փոխանցել շահառու ֆերմերներին, ինչպես նաև հարմարությունների և ենթակառուցվածքների զարգացումը:

Անհատական կարիքներ

- Վերապատրաստում
  - Օրգանական արտադրություն
  - Օրգանական մթերքի մարքեթինգ և ապրանքի առաջխաղացում
- Տեղեկատվություն օրգանական ոլորտում եղած նորարարությունների վերաբերյալ
- Այլ երկրներում հաջողությամբ գործող օրգանական կոոպերատիվների օրինակներ

Հաստատութենական կարիքներ

- Վերապատրաստված մասնագետների (ագրոնոմիա, բուսաբուծություն) աշխատանք ֆերմերեների հետ
- Գործընկերության հաստատման անհրաժեշտություն (դոնոր կազմակերպությունների, շահադրդված օրգանական ֆերմերային խմբերի հետ)
- Շինությունների և սաքավորումների բարելավում.
  - գրասենյակային տարածք
  - տեխնիկական սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ
- Մասնակցություն արտերկրի ցուցահանդեսներին՝ հայկական օրգանական արտադրության մասին իրազեկության բարձրացման նպատակով:

Ոլորտային կարիքներ

- Գյուղատնտեսության ոլորտի՝ շահադրդված և լավ պատրաստված մասնագետներ.
- Օրգանական արտադրանքի մասին իրազեկության բարձրացում թե՛ սպառողների և թե՛ արտադրողների շրջանում.
- Շուկայամուտ / շուկայի առկայություն (որը հաճախ կարելի է իրականացնել ՀԿ հատվածի հետ գործակցությամբ).

- Միջազգային ճանաչում ունեցող հավատարմագրված լաբորատորիաների անհրաժեշտություն, որոնք կարող են Հայաստանում իրականացնել օրգանական մթերքի լաբորատոր ստուգումներ.
- Առցանց օրգանական հարթակի անհրաժեշտություն, որը կաջակցի շահակիցների գործունեությանը:

<u>Կրթական ոլորտ</u>

Շահակիցների այս խմբում առկա է ամենամեծ խզումը զարգացման ցանկալի մակարդակի և առկա իրավիճակի միջև: Հայաստանի ազգային ագրարային համալսարանում (ՀԱԱՀ) և քոլեջներում օրգանական գյուղատնտեսությանը վերաբերող առարկաներ չեն դասավանդվում: Հետևանքը լինում է այն, որ գյուղատնտեսության ոլորտի ապագա աշխատողները նույնիսկ բազային գաղափար չունեն օրգանական և ավանդական գյուղատնտեսության տարբերությունների մասին: ԱՀԿՄԿ (ICARE) հիմնադրամի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի բակալավրիատի ուսումնական պլանով նախատեսված է օրգանական գյուղատնտեսության, վերջինիս շուկաների և զարգացման միտումների վերաբերյալ 6-շաբաթյա մոդուլ, սակայն այն չի կարող վերածվել լիարժեք առարկայական դասընթացի՝ քանի դեռ ՀԱԱՀ-ը համապատասխան փոփոխություններ չի կատարել իր ուսումնական պլանում: Ներկայումս ՀԱԱՀ-ը և Վիեննայի բնական ռեսուրսների և կենսագիտության համալսարանը (BOKU) մշակում են Օրգանական գյուղատնտեսության մագիստրոսական ուսումնական ծրագիր, որը, սակայն, կյանքի է կոչվելու 2021թ.-ից ոչ շուտ:

Շահակիցների այս խմբի հիմնական կարիքները. ուսումնական պլանների մշակում, դասախոսների կարողությունների զարգացում, արդյունավետ դասավանդման նպատակով՝ հաստատությունների պայմանների բարելավում (փորձացուցադրական հողամասեր, լաբորատոր սարքավորումներ):

Անհատական և ինստիտուցիոնալ կարիքներ.

- Կարողականության զարգացում.
  - օրգանական արտադրության սկզբունքների վերաբերյալ վերապատրաստում, օրգանական հավաստագրում, օրգանական մթերքի մարքեթինգ.
  - ուսումնական պլանի մշակում,
  - տեխնիկական հարմարություններ (հողի անալիզի համար լաբորատոր սարքավորումներ և այլն)
- Դասախոսական կազմի շարունակական ներգրավում հետազոտական և բիզնես նախագծերում:

Ոլորտային կարիքներ.

- Ուսումնական պլանների թարմացումներ՝ ի արձագանք գյուղատնտեսության ոլորտի արագ փոփոխվող կարիքների.
- Գործընկերությունների հաստատման անհրաժեշտություն (կրթական ոլորտ և բիզնեսներ, դոնոր կազմակերպություններ, տեղական կամ արտերկրի այլ համալսարաններ).
- Իրազեկության բարձրացում օրգանական արտադրության վերաբերյալ, նախևառաջ՝ սպառողների շրջանում, քանի որ արտադրության և կրթության ոլորտները հաճախ արձագանքում են կոնկրետ ապրանքի և համապատասխան մասնագիտությունների պահանջարկի ավելացմանը:

Օրգանական արտադրողներ և վերամշակողներ

Շահակիցների այս խումբը քաջատեղյակ է օրգանական արտադրության բազային պահանջներին, բայց դեռևս անհրաժեշտ է իրազեկության բարձրացման աշխատանքներ իրականացնել ֆերմերների լայն հանրության շրջանում, ովքեր դեռևս չեն ուսումնասիրել ավանդականից օրգանական արտադրության անցնելու հնարավորությունը : Իսկ արտադրության և վերամշակման մեջ փորձ ունեցողներին գլխավորապես անհրաժեշտ է աջակցել շուկա մուտք գործելու հարցում: Տեղական սպառողը դեռևս պատրաստ չէ հավելյալ գին վճարել օրգանական եղանակով արտադրված ապրանքների համար, իսկ արտահանման շուկայում կատաղի մրցակցությունը, ինչպես նաև տեղական մթերքների փոքր ծավալները հաճախ անհնարին են դարձնում արտահանումը:

Շահակիցների այս խմբի հիմնական կարիքները. օրգանական մթերքի նկատմամբ պահանջարկի ավելացում (սրան կարելի է հասնել սպառողների շրջանում իրազեկության բարձրացման միջոցով), աջակցություն արտերկրի շուկա մուտք գործելու հարցում:

Անհատական և ինստիտուցիոնալ կարիքներ

- Օրգանական արտադրություն հիմնելու կամ եղածն ընդլայնելու համար լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով դրամաշնորհային ծրագրերին դիմելու հմտություններ.
  - անգլերենի իմացություն
  - գործարար առաջարկի հայտ գրելու հմտություն
- Մասնակցություն արտերկրի ցուցահանդեսների
- Վերապատրաստում.
  - Օրգանական արտադրության սկզբունքները
  - Օրգանական մթերքի առևտրայնացումը
  - Օրգանական արտադրության անցման՝ տարբեր երկրների հաջողված օրինակներ:

Ոլորտային կարիքներ.

- Կառավարության աջակցությունը.
  - սուբսիդիաներ օրգանական արտադրության համար անհրաժեշտ ներդրանքներ ձեռք բերելու համար
  - սուբսիդիաներ հավաստագրման ծախսերը փակելու համար
- Աջակցություն շուկայամուտի հարցում,
- Հավաստագրված օրգանական ներդրանքների (սերմացու, պարարտանյութեր) մատչելիություն,
- Շահադրդված երիտասարդ մասնագետներ,
- Օրգանական/էկո/բիո պիտակների վերաբերյալ կանոնակարգերի կիրառում:

3 Առկա կարողությունները և կարողությունների զարգացման կարիքները

Սույն զեկույցի շրջանակում իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակի ընթացքում շատ կարողություններ են զարգացվել: Այսուհանդերձ, շահակիցները համակարծիք են այն հարցում, որ ոլորտը բավարար չափով չի զարգացել: Նշվել են մի քանի պատճառներ, այդ թվում՝ համապատասխան կարողությունների պակասը ոլորտային, ինստիտուցիոնալ և անհատական մակարդակներում: Առավել բարդ խնդիրներից և զարգացումը սահմանափակող հանգամանքներից են տեղեկատվության պակասը և տեղերում մասնագիտական հմտությունների բացակայությունը, ներառյալ՝ ընդհանրապես ձեռնհաս մասնագետների պակասը: Կարևորվում են օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների երկու ուղղություններն էլ՝ թե՛ ինստիտուցիոնալ ու անհատական մակարդակում առաջնորդությունը և թե՛ ոլորտային մասնագետների բանիմացությունը: Ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ոլորտում չկան օրգանական արտադրության մասնագետներ, ինչպես օրինակ՝ ագրոնոմներ. բացի այդ, անհրաժեշտ են նաև համապատասխանության վերաբերյալ տեղեկատվությանը տիրապետող և հսկողություն իրականացնող մասնագետներ: Ներգրավված բոլոր կողմերը ցանկանում են օրգանական արտադրության վերաբերյալ խորը գիտելիքներ ստանալ և պատրաստ են մասնակցել սեփական կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների, ներառյալ՝ անհատական և ինստիտուցիոնալ մակարդակներում: Վերապատրաստման մասնակցելու պատրաստակամությունը վերաբերում է մասնավորապես արտադրության, իրացման և արտահանման գործընթացներին սեփական ներգրավվածության չափը գնահատելուն ու հասկանալուն: Վերապատրաստման՝ բարձրաձայնված կոնկրետ կարիքները ներառում են նաև իրավակարգավորման հարցերը և ենթակառուցվածքների ստեղծման հարցում աջակցությունը (օր.՝ օրգանական մթերքի պահպանում և փոխադրում, ներդրանքների մատակարարում, շուկայի մատչելիություն, ապագա կարողություններին ու ծավալներին բավարարելու համար լրացուցիչ հավաստագրող մարմինների ստեղծում):

3.1 Ոլորտի կարողականությունը

Չնայած օրգանական արտադրության փոքր ծավալներին, Հայաստանում նախնական քայլերն արդեն արված են ոլորտի առաջընթացի ուղղությամբ: Հայաստանի օրգանական գյուղատնտեսության ոլորտում առկա որոշ դրական զարգացումները դիտարկվում են որպես հետագա զարգացման համար լավ մեկնարկ: Հայաստանն ունի սեփական հավաստագրող մարմին, որի տրամադրած օրգանական հավաստագիրը ճանաչվում է ԱՄՆ-ի, Կանադայի, ԵՄ-ի և Շվեյցարիայի շուկաներում, ինչպես նաև Կովկասի տարածաշրջանում: Բացի հավաստագրման հիմնական գործառույթից, էկոգլոբը նաև ակտիվորեն ներգրավված է երկրում օրգանական գյուղատնտեսության զարգացման գործընթացներում:

էկոգլոբի հետ զուգահեռաբար, Հայաստանում օրգանական ոլորտի զարգացման նպատակով մի շարք ՀԿ-ներ շարունակաբար աշխատում են միջազգային կազմակերպությունների հետ: Այդ նախագծերը տեղական ՀԿ-ներին հնարավորություն են ընձեռում հետազոտելու Հայաստանի օրգանական ոլորտի զարգացման ներուժը, համագործակցություն ձեռնարկել ֆերմերների և միջազգային փորձագետների հետ և ձեռք բերելու օրգանական գյուղատնտեսության վարման փորձ: Այնպիսի ՀԿ-ներ, ինչպիսիք են Շենը, Կանաչ արահետը և ՔԱՐԴ հիմնադրամը, որոնք ոլորտի զարգացման գործում հարուստ փորձ ունեն, կարողացել են ստեղծել օրգանական արտադրողների

խմբեր, իրականացնել սպառողական շուկայի մատչելիությանն ուղղված աշխատանքներ, տրամադրել անհատ արտադրողների կարիքների և կարողությունների բավարարման համար նախատեսված վերապատրաստումներ կամ բարձրացնել օրգանական մթերք արտադրելու և սպառելու առավելությունների մասին իրազեկությունը: Ոլորտի նվաճումների թվում են Գրին Դեյ օրգանական խանութը և Գրին Լայֆ ՍՊԸ-ի կողմից իրականացվող ոչ հավաստագրված օրգանական փաթեթների սխեման: Բացի այդ, Գրին Լայֆը և Շենը հիմնել են օրգանական արտադրության թեմաներով ուսումնական կենտրոններ և մշակել ուսումնական ծրագիր օրգանական արտադրության անցմամբ հետաքրքրված ֆերմերների համար:

Պետությունը նույնպես ճանաչել է գյուղատնտեսությունը օրգանական արտադրության ուղղությամբ բազմազանեցնելու կարևորությունը՝ 2008թ.-ին ընդունելով «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը և իրավական այլ ակտեր, որոնք իրենց հերթին նպաստում են ոլորտի զարգացմանը երկրում:

Ոլորտը որոշակիորեն զարգացել է, սակայն դեռևս զարգացման նախնական փուլից անդին չի անցել՝ չնայած միանգամայն ուժեղ արտաքին (ֆինանսական) աջակցությանը: Կարողությունների զարգացումը սահմանափակող հիմնական հանգամանքները կարելի է հանգեցնել հետևյալին.

- Քաղաքականության հետևողական մշակում՝ ոլորտի զարգացման **հստակ տեսլականի և ռազմավարության** հիման վրա: Պակասում է շահակիցներին միավորելու կարողականությունը: Ո՛չ մասնավոր, ո՛չ պետական խաղորդներին և ո՛չ էլ արտաքին աջակիցներին չի հաջողվել ստեղծել **միասնական ոլորտ**: Իսկ առավել ակնհայտ թերությունը **օրգանական գյուղատնտեսության գործողությունների ազգային ծրագրի** բացակայությունն է, որը ներառի ընդհանուր ռազմավարություն, սեփականության հետ կապված հստակ դերեր և գործողություններ, ինչպես նաև պետական ու մասնավոր խաղորդների հանձնառությունը:
- **Օրինական ղեկավարություն**՝ մասնակցային ուժեղ հմտություններով, որին ընդունում են շահակիցները և որն ի վիճակի է երկարաժամկետ առումով պահպանել տեսլականն ու առաջնորդությունը:
- **Ակտիվ, բոլոր շահակիցների հետ գործակցող, նրանց աջակցող և տեսանելի շարժման** ստեղծում, որն ի վիճակի լինի թափ հավաքել և տպավորություն գործել հանրության վրա:
- **Օրգանական մթերքի ուժեղ դիրքավորում տեղական շուկայում**՝ ակտիվ տեսլականի և գործնական օրինակների օգնությամբ, որոնք համոզիչ լինեն սպառողների ու քաղաքացիների համար: Չի եղել համապատասխան կարողություն՝ մշակելու ավանդական գյուղատնտեսության այլընտրանքի կոնկրետ հայաստանյան օրինակ, որը տեղական սպառողի համար համոզիչ կդարձներ օրգանական ապրանքի համար ավելի բարձր գին վճարելու անհրաժեշտությունը (օր.՝ աջակցություն տեղացի ֆերմերին, մնացորդային ապրանքի վաճառք, կենդանիների բարեկեցություն, որակյալ մթերք՝ յուրահատուկ տեղական համով, անհետացման եզրին գտնվող ավանդական սննդամթերքներ և այլն):
- **Պ**ահանջարկ վայելող մի քանի սննդամթերքների արեշղթայի զարգացում և միջազգային բրենդի ստեղծում:
- Հավաստագրման գործողությունից դուրս եղած **կանոնների կիրառում** (հավաստագրման առկայությունն, անշուշտ, ոլորտի առավել ուժեղ կողմն է)՝

կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումների, լրատվամիջոցների և ոլորտում ձեռնարկվող սոցիալական գործողությունների միջոցով: Այս առումով, **սպառողի վստահությունը շահելու շատ քիչ հնարավորություններ են եղել**:

3.2 Հաստատութենական կարողություններ

Նախարարություններ և հարակից մարմիններ

Հայաստանում օրգանական գյուղատնտեսության ոլորտով զբաղվող հիմնական պետական մարմիններն են գյուղատնտեսության նախարարությունն իր Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության հետ միասին, բնապահպանության նախարարությունն իր կենսառեսուրսների կառավարման գործակալության հետ միասին և Ստանդարտների ազգային ինստիտուտը: Գործառնությունների իր շրջանակով Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը կարող է պարբերաբար ծառայություններ մատուցել օրգանական ոլորտին, հատկապես՝ շուկայում օրգանական և բիո պիտակավորմանն առնչվող կանոնակարգերի և օրգանական արտադրության գործընթացի մշադիտարկման բնագավառում, իսկ Ստանդարտների ազգայն ինստիտուտը կարող է աջակցել ազգային օրգանական չափորոշիչների սահմանման և արտադրական գործունեության վերահսկման գործում: Ընդհուպ մինչև 2015թ.-ը նշված մարմիններից ոչ մեկը չէր զբաղվում օրգանական ոլորտով: Վերջին երկու տարվա ընթացքում հավաստագրման ազգային մարմին էկեգլոբը և Ստանդարտների ազգային ինստիտուտը համատեղ մշակեցին օրգանական չափորոշիչներ, հրապարակվել են և հասանելի են արտադրողների ու վերամշակողներն համար:

Ոլորտի զարգացման առումով, գյուղատնտեսության նախարարությունն իր ներկա կարողություններով կարող է բարեփոխել օրենսդրական դաշտը, օժանդակել քաղաքականության մշակման հարցում և ապահովել ենթակառուցվածքների զարգացում կամ ուղղակի օգնություն կոնկրետ ֆերմերներին:

Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունն էլ իր գործունեության շրջանակում և ունեցած կարողությունների սահմաններում ի վիճակի է աջակցել ոլորտին՝ միջազգային կազմակերպությունների հետ կապեր ստեղծելով և տեղական օրգանական արտադրողների համար արտերկրի շուկաներ գտնելով:

Օրգանական ոլորտի զարգացմանն ուղղակիորեն մասնակցելու կարողականություն ունեցող կազմակերպություններ են նաև Հայաստանում գործող գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունները: Գործում է գիտասփյուռ-խորհրդատվական բնույթի ակտիվ ծառայությունների երկու տեսակ՝ պետական ֆինանսավորում ունեցող գյուղատնտեսական աջակցության կենտրոնները (ԳԱՀԿ և ԳԱՄԿ-եր) և մասնավոր խորհրդատվական ծառայություններ՝ Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (ՔԱՐԴ) հիմնադրամի կողմից համակարգվող Գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոնները (տես «ՀԿ-ներ» բաժինը):

Հարցազրույցների ընթացքում ինտենսիվ կերպով քննարկվել է այն հարցը, որ պետությունը շարունակաբար կրճատում է ԳԱՄԿ-երի աշխատողների և տրանսպորտային միջոցների թիվը, ինչը դժվարացնում է նախատեսված աշխատանքների իրականացումը և աշխատակազմի կարողությունների պահպանման ու զարգացման գործընթացը: 2015թ.-ին իրականացված ԳԱՄԿ-երի համակարգի գնահատումից հետո արվեցին առաջարկություններ, որոնք ներկայումս քննարկման փուլում են: ԳԱՄԿ-երի առկա կարողությունները թույլ են տալիս կազմակերպել վերապատրաստումներ, պատասխանել ֆերմերների հարցումներին, տրամադրել խորհրդատվություն գյուղատնտեսական արտադրության գործընթացում առաջացող

հարցերի վերաբերյալ և տեղեկատվություն տարածել (թերթերի ու վեբ կայքերի միջոցով): Ֆերմերների հետ աշխատանքի արդյունավետ մեթոդներ մշակելու նպատակով անհրաժեշտ է արդիականացնել խորհրդատուների հմտություններն ու գիտելիքները և իրականացնել որոշակի կառուցվածքային փոփոխություններ:

Հավասարակից այլ երկրների համեմատ, Հայաստանի կառավարությունն ունի օրգանական ոլորտը կառավարելու ավելի լավ կարողություններ: Կառավարությունը կարողացել է ներգրավել արտաքին օգնություն և համագործակցել մասնավոր շահակիցների հետ: Ընդունված մի շարք քաղաքականություններ վկայում են ոլորտը զարգացնելու՝ կառավարության հանձնառության մասին: Ոլորտում կարողությունների հետագա զարգացման ներուժը կարելի է ամփոփել հետևյալ կետերով.

- **Օրենսդրական դաշտի պարզեցում**՝ավելի փոքրաթիվ, բայց ավելի լավ կիրառվող քաղաքականություններով ու իրավական ակտերով:
- **Առաջնորդի դերի ստանձնում ոլորտի միասնականությունն ապահովելու** և **օրգանական գյուղատնտեսության գործողությունների ազգային ծրագրի** մշակման գործում՝ հանձնառու և թափանցիկ ձևով (օր.՝ ռեսուրսների հատկացման հնարավորությունների և սահմանափակումների հարցում):
- **Իրավասու մարմնի** գործառույթն իրականացնելու կարողություններ, որը ներառում է համապատասխան կանոնակարգերի սահմանում և իրականացում, կեղծարարությունների քրեական հետապնդում, մասնակցություն միջազգային օրգանական երկխոսությանը և այլն:
- **Գիտասփյուռ-խորհրդատվության մեթոդաբանություն ֆերմերներին արդյունավետ աջակցության համար**՝ օրգանական արտադրության անցնելու և կենսամակարդակը բարձրացնելու հնարավորությունները բարելավելու նպատակով:
- **Ենթակառուցվածքների ստեղծում** (նախարարության ներսում և համապատասխան մարմիններում) օրգանական ոլորտում զարգացումներին նպաստելու համար (օր.՝ օրգանական գյուղատնտեսության մասնագետների առկայությունը նախարարության յուրաքանչյուր համապատասխան վարչությունում, ինչպես նաև օրգանական զարգացումներում ԳԱՄԿ-երի նեգրավումը):

ՀԿ-ներ

Հայաստանում օրգանական գյուղատնտեսության ոլորտի խթանմամբ զբաղվող հիմնական ՀԿ-ներն են Շենը, էկոգլոբը, NABU-ն, Կանաչ արահետը, ՔԱՐԴ-ը և ՀԿՀԱԱՇՄ-ն: Հարցազրույցին մասնակցած ՀԿ-ները երկար ժամանակ ակտիվորեն աշխատել են ոլորտում, որը թույլ է տալիս նրանց հաջողությամբ համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ և Հայաստան բերել օրգանական գյուղատնտեսությանը վերաբերող նախագծեր:

էկոգլոբը հիմնվել է 2002թ.-ին, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության և Շվեյցարական միջեկեղեցական օգնություն կազմակերպության աջակցությամբ: էկոգլոբը Հայաստանում օրգանական արտադրության ոլորտի միակ հավաստագրող մարմինն է: Այն կայուն կերպով ավելացնում է օրգանական հավաստագիր ստանալու համար դիմող արտադրողների թվաքանակը և արտերկրում հայաստանյան օրգանական սննդամթերքի մասին իրազեկությունը բարձրացնելու նպատակով արդեն կայուն համագործակցություն է հաստատել միջազգային կազմակերպությունների հետ: էկոգլոբի թիմը կազմված է բարձր որակավորում ունեցող մասնագետներից, ովքեր հավաստագրման ընթացակարգերի վերաբերյալ համակողմանի տեղեկություններ են հաղորդում թե՛

օրգանական արտադրություններ ունեցող մեծ ընկերություններին և թե՛ օրգանական գյուղատնտեսությամբ հետաքրքրված ֆերմերների խմբերին:

Շեն ՀԿ-ն առաջին կազմակերպություններից էր, որ ստեղծեց օրգանական մթերք արտադրող ֆերմերների խմբեր և աջակցեց օրգանական մթերքի արտահանմանը տարբեր երկրներ: Ոլորտի զարգացմանը նպաստող այլ ՀԿ-ների հետ միասին Շենը նախնական փուլում սկսեց աշխատել ֆերմերների հետ, իսկ այնուհետև, գիտակցելով արժեշղթայի բարելավման անհրաժեշտությունը, աստիճանաբար ընդլայնեց իր գործունեությունը՝ ներառելով արժեշղթայի զարգացումը: Շենը ներկայումս հիմնել է օրգանական արտադրության ուսուցողական կենտրոն և աջակցում է ֆերմերներին միջազգային առևտրային ցուցահանդեսներին մասնակցության հարցում:

ՔԱՐԴ հիմնադրամն իր Գրին Դեյ օրգանական խանութով (որը պատկանում է ՔԱՐԴ Ագրոսերվիս ՓԲԸ-ին) հայաստանյան օրգանական շարժման առաջամարտիկներից է: ՔԱՐԴ-ը լուրջ քայլեր է ձեռնարկել տեղական շուկայում իրազեկության բարձրացման և արտահանման շուկաների հետ կապերի հաստատման ուղղությամբ: ՔԱՐԴ-ը առաջին կազմակերպությունն էր, որ օրգանական արտադրության վերաբերյալ իրազեկության բարձրացման արշավ իրականացրեց մի հեռուստատեսային շոու ծրագրի միջոցով, որը հասանելի էր սպառողների շատ մեծ լսարանի: Կազմակերպության աշխատակիցները մշտապես կատարելագործում են իրենց հմտությունները՝ մասնակցելով տարբեր ցուցահանդեսների: Նարկայումս ՔԱՐԴ-ը շահագործում է օրգանական սննդամթերքի՝ Հայաստանում միակ մասնագիտացված խանութը, թեև մյուս կողմից չի պահպանում Հայաստանում օրգանական մթերքի արտադրության նախկին տեմպը այն պարզ պատճառով, որ օրգանական գյուղատնտեսությունը ՔԱՐԴ հիմնադրամի գործունեության հիմնական ուղղությունը չէ:

Կանաչ արահետ ՀԿ-ին աջակցում են օրգանական գյուղատնտեսության ոլորտում նոր ձեռքբերումների կողմնակից ֆերմերներ և հետազոտողներ: ՀԿ-ն ակտիվ է օրգանական թեմաներով վերապատրաստումների և հետազոտությունների, շրջակա միջավայրի պաշտպանության և օրգանական գյուղատնտեսության բնագավառներում: Կանաչ արահետ ՀԿ-ն ունի նաև ոչ պաշտոնական ֆերմերային կոոպերատիվներ, որոնք արտադրում են չհավաստագրված օրգանական մթերքներ և վաճառում Գրին լայֆ ՍՊԸ-ի միջոցով: Կանաչ արահետը նաև ստեղծել է օրգանական գյուղատնտեսության ուսուցողական կենտրոն Կոտայքի մարզում, որտեղ ֆերմերները հնարավորություն ունեն սովորելու և տիրապետելու օրգանական գյուղատնտեսության հմտություններին:

ՀԿ-ները օրգանական շարժման հիմնական շարժիչ ուժն են և ցույց են տվել, որ ունեն իրենց ծառայությունները և առհասարակ ոլորտը զարգացնելու ներուժ: Սակայն ՀԿ-ներից շատերը կախում ունեն արտաքին աջակցությունից և չունեն որևիցե բիզնեսից կամ իրենց շահակիցների աջակցությունից ստացվող կայուն եկամուտների աղբյուրներ: Սա ռիսկի տակ է դնում շահակիցների մոբիլիզացումը, ֆերմերների կողմից կայուն աջակցությունը և վերապատրաստման ծրագրերի շարունակականությունը: Ըստ մեր բացահայտումների, կարողությունների զարգացումը կարևորվում է հետևյալ կետերի առումով.

- **Առաջնորդության զարգացում և ՀԿ-ների կառավարում**, ներառյալ ընդհանուր կառավարումը, ռազմավարական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարումը.
- **Շահակիցների մոբիլիզացում** և գործակցային շարժման խթանում՝ լրատվամիջոցներին և կառավարությանը դրական ուղերձներ հղելու միջոցով ապահովելով ոլորտի ընդհանուր տեսանելիությունն ու ներկայացվածությունը:

- **Զանգվածային հաղորդակցություն** ավանդական և նոր սոցիալական լրատվամիջոցների միջոցով: Մշակել համապատասխան ռազմավարություն՝ ընտրելով և տարածելով լսելի և ազդեցություն թողնող ուղերձներ:
- **ՀԿ-ների կարողությունների զարգացում՝** նախագծերն ավելի լավ իրականացնելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և հմտությունների զարգացում:

Արտադրողներ

Հայաստանում օրգանական մթերք արտադրողների թիվը շատ փոքր է (մանրամասները տես գլուխ 1.2-ում): Արտադրողների լրիվ ցուցակը կարելի է տեսնել էկոգլոբի կայքում: Արտադրության առանձնահատկություններն այնպիսին են, որ ոլորտում աշխատում են միայն փոքր արտադրողներ: Ընդ որում վերամշակող ոլորտը լրջորեն ներկայացված չէ օրգանական արտադրության գործընթացում: Միևնույն ժամանակ վերամշակողները դժվարությունների են բախվում անհրաժեշտ որակի և քանակի մթերքների ձեռք բերման հարցում:

Ֆերմերների կարիքները մանրամասնորեն ներկայացված են անհատական կարիքների բաժնում: Հաստատութենական կարիքները, որպես հայեցակարգ, առանձնահատուկ են վերամշակող ձեռնարկությունների դեպքում: Սույն հետազոտության շրջանակում հարցման է ենթարկվել երկու մեծ վերամշակող և մեկ ներմուծող ընկերություն:

Հաստատութենական մանրամասն կարիքները հետևյալներեն են՝

- **Շուկայի** (թե տեղական և թե միջազգային) **հասանելիություն**. Տեղական շուկայում կա օրգանական արտադրանքի օգուտների մասին տեղեկացվածության պակաս, իսկ միջազգային շուկաներն էլ մեծապես մրցակցային են և շատ դժվարամատչելի:
- **Ներդրանքների հասանելիություն** և կայուն մատակարարում օրգանական արտադրողների համար:
- **Կարողությունների զարգացում**, որը հնարավորություն կտա օրգանական արտադրողներին և վերամշակողներին դիմել լրացուցիչ ֆինանսավորման համար. շահակիցների այս խմբում եղած գրեթե բոլոր անհատների ու կազմակերպությունների համար պահանջվում են գործարար առաջարկի հայտ գրելու հմտություններ, նախընտրելի է՝ անգլերենով:
- **Օրգանական արտադրության (վերամշակման) ոլորտում որակյալ աշխատուժի հասանելիություն**
- **Տեղեկատվության հասանելիություն** օրգանական արտադրանքի առևտրայնացման, ինչպես նաև օրգանական արտադրության (վերամշակման) ոլորտում եղած նորարարությունների վերաբերյալ:
- **Պետական աջակցություն** ներդրանքների գնումների և հավաստագրման ծախսերի համար:
- **Նպաստավոր միջավայր** օրգանական արտադրանքը տարբերակելու **կամ օրգանական (էկո, բիո) պիտակների վերաբերյալ կանոնակարգեր կիրառելու** համար՝ օրգանական արտադրանքի հանդեպ տեղական սպառողի վստահությունը շահելու նպատակով:

Կրթական ոլորտ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը երկրում միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որտեղ ուսուցանվում են գյուղատնտեսական արտադրանքին վերաբերող առարկաներ: Գործում են նաև մի քանի գյուղատնտեսական քոլեջներ (միջին մասնագիտական կրթություն), Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը

(ԱՈՒԿ/ ATC)՝ իր բակալավրիական և մագիստրոսական ծրագրերով) և Յակոբեան բնապահպանական կենտրոնը, որը վերջերս ներդրել է Սննդամթերք առարկան: Նշված բոլոր ուսումնական հաստատություններից միայն ՀԱԱՀ-ում է դասավանդվում հողի օրգանական մշակությանը վերաբերող առարկա, իսկ ԱՈՒԿ-ում էլ դասավանդվում է օրգանական գյուղատնտեսության, շուկաների և միտումների մոդուլը. Սահմանափակ լսարանը և դասերի փոքր ընդհանուր քանակը չեն նպաստում կրթական խողովակով մասնագիտական գիտելիքների փոխանցմանը:

Սակայն հարցազրույցին մասնակցած որոշ հաստատություններ վստահաբար ունեն օրգանական գյուղատնտեսության զարգացմանն օժանդակելու համապատասխան կարողություններ: ԱՈՒԿ-ն տեսակապի իր սրահի միջոցով ունի միջազգային փորձն ու գիտելիքները փոխանցելու տեխնիկական լավագույն հնարավորությունը, ինչպես նաև՝ միջազգային գործակիցների կայացած ցանց: Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջն ունի հողի կազմության մշտադիտարկման ծառայություններ տրամադրելու կարողություն, իսկ Հայաստանի ամերիկյան համալսարանը կարող է առաջարկել արտերկրի գործակիցների լայն ցանց:

Ընդհանուր առմամբ, կրթական ոլորտը առաջընթացի մեծ կարիք ունի: Կարողությունների զարգացման տեսակետից ամենամեծ հնարավորությունները կապված են հետևյալի հետ.

- **Ուսումնական պլանների մշակում** և օրգանական կրթության գերակայություն կառավարական մակարդակում
- Դասախոսների **մասնագիտական կարողությունների** զարգացում (վերապատրաստում)
- **Համագործակցություն այլ շահակիցների** (կոնկրետ վերապատրաստումներով և գիտասփյուռ-խորհրդատվական գործունեությամբ զբաղվողների) **հետ**՝ ավելի շատ տեղեկատվություն ստանալու և վերապատրաստման արդյունավետ մեթոդներին ծանոթանալու նպատակով
- **Կրթական ոլորտի հաստատությունների մասնակցություն** օրգանական արտադրության գործընթացին և գործնական վերապատրաստման հնարավորություն
- **Ենթակառուցվածքների զարգացում**, ներառյալ՝ լաբորատորիաները, շինությունները, սարքավորումները և փորձադաշտերը

3.3 Անհատական կարողություններ

Հայաստանում օրգանական ոլորտի զարգացումը կարելի է դիտարկել որպես շահակիցների սահմանափակ թվով խմբերի միջև սերտ գործակցության արդյունք, որոնցից յուրաքանչյուրն ունի միմյանցից խիստ տարբերվող կազմակերպչական և անհատական կարողություններ: Սույն ուսումնասիրությունը ոչ թե գնահատում է անհատների անձնական կարողությունները, այլ արտացոլում է առհասարակ անհատների կարողություններն ու դրանց զարգացման հնարավորությունները Հայաստանում:

Նախարարություններ և հարակից մարմիններ

Նախարարությունների և ԳԱՄԿ-երի ներկայացուցիչները քաջատեղյակ են կառավարության ընթացակարգերին և թե ինչպես է գործում կառավարության համակարգը, ներառյալ՝ ուժեղ և թույլ կողմերը և անհատների՝ հաջողության հասնելու

միտումով կատարած աշխատանքը: Նշվածը ներառում է քաղաքականության վերաբերյալ օրինագծերի մշակումը և գործընթացին հետևելը՝ ընդհուպ մինչև քաղաքական որոշումների ընդունումը: Նրանք նաև տեղյակ են առկա քաղաքական և ենթակառուցվածքային իրավիճակին միջամտելու հնարավորությունների և սահմանափակումների, ինչպես նաև կառավարությունից ակնկալվող ներդրումների հնարավորությունների և սահմանափակումների մասին: Հարցազրույցին մասնակցած բոլոր պաշտոնյաներից միայն գյուղատնտեսության փոխնախարարը և բուսաբուծության ու բույսերի պաշտպանության վարչության պետը հստակ պատկերացում ունեին ոլորտում առկա իրողությունների մասին:

ԳԱՄԿ-երի ներկայացուցիչները սերտորեն համագործակցել են ֆերմերների հետ, ուստի նրանց մեծ առավելությունը հենց ֆերմերների հետ հաջողված հաղորդակցությունն է, ինչպես նաև ակտիվ ֆերմերների առկա ուժեղ ցանցը: ԳԱՄԿ-երի որոշ ներկայացուցիչներ քաջատեղյակ էին օրգանական գյուղատնտեսության սկզբունքների մասին, որի հիմնական բացատրությունն այն է, որ տվյալ մարզում առկա է օրգանական գյուղատնտեսական արտադրություն: Բացի այդ, քանի որ ուղղակիորեն ԳԱՄԿ-երում շատ վերապատրաստումներ են իրականացվում, խորհրդատուները կարող են միշտ էլ օգտվել դրանց մասնակցելու հնարավորությունից և ինչ-որ նոր բան սովորել: Սակայն հարկ է նշել, որ ոչ գրավիչ վարձատրության պատճառով, շահադրդված և լավ պատրաստված խորհրդատուները ցանկություն չունեն աշխատելու ԳԱՄԿ-երում:

Հետագա ուսումնառության և օրգանական գյուղատնտեսության մասին պատկերացումներն ընդլայնելու առումով ցանկալի է աշխատել հետևյալ ուղղություններով.

ա) ղեկավար անձնակազմի անդամների համար՝

- Խորացնել **օրգանական գյուղատնտեսության հայեցակարգի մասին պատկերացումը**՝ որպես ամբողջական համակարգի, որը ներառում է բուն ոլորտում և այլ ոլորտներում գործող շահակիցների շրջանում օրգանական գյուղատնտեսության մասին պատկերացում (մեթոդաբանական հմտություններ) ստեղծելու կարողությունները:
- Ոլորտից տեղեկություններ ստանալու և դրանց հիման վրա քաղաքական դաշտում բարելավումներ կատարելու **մեթոդաբանական հմտություններ**, ներառյալ՝ ռազմավարական հմտություններ: Մասնակցային մեթոդներով ոլորտի զարգացմանը նպաստելու վերաբերմունքի սերմանում՝ նպատակ հետապնդելով հասարակության բարօրության համար հզորացնել մասնավոր հատվածի խաղորդներին:
- **Քարոզչական հմտություններ**, մասնավորապես օրգանական գյուղատնտեսության ոլորտում ազգային և միջազգային փորձը կառավարության համար ընդունելի օգտակար ուղերձների և հայեցակարգայնացված լուծումների հիմք դարձնելու հմտություններ:
- **Հաղորդակցական և ներկայացուցչական հմտություններ**
- Օրգանական գյուղատնտեսության խթանմանը և իրավակարգավորմանն առնչվող **քաղաքական միջոցառումների մշտադիտարկում և գնահատում**:
- **Միջազգային փորձը հայաստանյան համատեքստում կենսագործելու** անհատական կարողականություն (օր.՝ մասնակցային երաշխիքային համակարգերի (ՄԵՀ) փորձի կամ քաղաքականության պարամետրերի լավագույն փորձի կամ Organic 3.0-ի տեղայնացումը ՀՀ կառավարության համար):

բ) Գիտասփյուռ-խորհրդատվական ծառայություններ մատուցողների համար.

- Գիտասփյուռ-խորհրդատվական ծառայություններ մատուցողների **մեթոդաբանական հմտություններ**՝ օրգանական արտադրությանը անցում կատարելու և այդ արտադրության կառավարման համար:
- Աշխատանքային գործունեության ընթացքում առօրյա մարտահրավերները հաղթահարելու համար անհրաժեշտ **տեղեկատվությունը ձեռք բերելու հմտություններ**:
- **Ցանցաստեղծման կարողություններ** ամբողջ (օրգանական) արժեշղթայում և աջակցող ծառայություններում:

ՀԿ-ներ

ՀԿ ոլորտի խողորդները գլխավորապես ծանոթ են օրգանական գյուղատնտեսության զարգացման միտումներին, ունեն սովորելու ցանկություն և պատրաստ են կատարել իրենց առջև դրված խնդիրները: Սերտորեն համագործակցելով ֆերմերների հետ, ՀԿ-ների ներկայացուցիչները անհրաժեշտ են համարում մշտապես թարմացնել իրենց գիտելիքները օրգանական գյուղատնտեսության ոլորտում, որպեսզի կարողանան պատշաճ կերպով լուծել շահառու ֆերմերների խնդիրները: Որոշ ՀԿ-ներ ունեն իրենց աշխատակիցների մասնագիտական զարգացման տարեկան ծրագիր, որը ներառում է վերապատրաստումները և արտերկրում փոխանակման ծրագրերը: OASI-ի շահակից ՀԿ-ների այս խումբը հարցված խմբերի մեջ առավել պատրաստ էին համագործակցության:

Անհատական կարողությունների զարգացման գերակայությունները կարելի է համարել հետևյալները.

- ՀԿ-ների միջև **համագործակցության հմտություններ և վերաբերմունքի** ձևավորում: Համագործակցային գործողությունների նախանշում և իրականացում:
- **Նպատակամետ ռազմավարության** մշակում և իրականացում, ներառյալ մշտադիտարկումը և գնահատումը: Ծառայությունների նախագծում և ՀԿ ծառայությունների իրացվելիության գնահատում: Ծրագրերի կառավարման հմտություններ:
- **Արդյունավետ քարոզչական ռազմավարության** մշակում և իրականացում, որը կբավարարի քաղաքականություն մշակողների և արժեշղթայի պահանջներին:
- Համացանցային հաղորդակցություն և գրաֆիկական դիզայն:

Արտադրողներ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրգանական արտադրողների համար որևէ պետական աջակցություն նախատեսված չի եղել, ֆերմերները հաջողությամբ կիրառել են միջազգային փորձը և այն հնարավորությունները, որոնք ընձեռվել են միջազգային և մասնավոր հատվածի աջակցության ծրագրերից՝ արտադրությունն ընդլայնելու և տեղական ու արտերկրի շուկաներ մուտք գործելու համար:

Տարբեր արտադրողներ տարբեր հնարավորություններից են օգտվել: Ոմանք ունեն արտերկրի շուկա մուտք գործելու, ինչպես նաև իրենց արտադրանքը տեղական շուկայում վաճառելու համար անհրաժեշտ ցանցը և ֆինանսական միջոցները, բայց ուրիշներն էլ շուկա մտնելու, արտադրության համար անհրաժեշտ ներդրանքներ հայթայթելու և հավաստագրում ստանալու նպատակով օժանդակություն գտնելու համար մեծապես հենվում են պետական կամ միջազգային աջակցության վրա:

Հարցված օրգանական արտադրողների մեծամասնությունն ունի ապագա ծրագրերի հստակ տեսլականը և ի վիճակի է կազմակերպել արտադրական գործընթացը: Նրանցից

ոմանք ինքնակրթությամբ զբաղված անհատներ են, ովքեր սկսել են ինքնուրույն հետազոտել օրգանական ոլորտը համացանցային հոդվածների միջոցով և այժմ կարող են օգնություն տրամադրել և վերապատրաստել այն մարդկանց, ովքեր նոր-նոր են ծրագրում մտնել ոլորտ: Արտադրողներից ոմանք բիզնես գործընկերություն ստեղծելու, արտադրանքն արտահանելու և իրենց արտադրանքի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու համար օգտագործել են իրենց ցանցերը: Համեմատաբար փոքր արտադրողները տուժում են ներդրումների ֆինանսավորման անկարողությունից:

Առավել կարևոր ասպեկտները, որտեղ հմտությունները և արտադրողների կարողությունների զարգացումը կգործեն ի նպաստ զարգացման, հետևյալներն են.

- Օրգանական գյուղատնտեսության սկզբունքները, որոնք հիմք են հանդիսանում **գյուղատնտեսական արտադրանքի համակարգի ստեղծման** համար: Գտնել համապատասխան ռազմավարական լուծումներ ֆերմերային տնտեսության նախագծման գործում:
- **Օրգանական արտադրության խոչընդոտների վերացում**, օր.՝ բույսերի պաշտպանության, գյուղատնտեսական կենդանիների առողջության, հողի բերրիության, գենետիկ ռեսուրսների մատչելիության և այլ բնագավառներում:
- Օգնել **համակարգային օպտիմալացման** հասնելու գործում: Ֆերմերային տնտեսության զարգացման գործիքակազմ, ինչպես օրինակ մասնակցային տեխնոլոգիաների զարգացում (ՄՏՋ/PTD), ֆերմերը ֆերմերի հետ երկխոսություն և արտադրանքի բազմազանեցման ռազմավարություն:
- **Ֆերմերային տնտեսության կառավարման գործիքներ**, ինչպես օրինակ՝ եկամուտների և կանխիկ դրամահոսքի հաշվարկներ և տնտեսության գույքագրում: Ներդրումների և գործառնությունների ֆինանսավորման տարբերակների գնահատում:
- **Երաշխիքային ճիշտ գործիքների կիրառում**, ներառյալ սեփական անձին ներկայացվող պահանջները, ՄԵՀ և երրորդ կողմի հավաստագրումը՝ կախված տվյալ ֆերմերային տնտեսության իրավիճակից:
- **Ընտանեկան տեսլականի ստեղծում** և աջակցության ստացում՝ փոփոխությունների իրականացման և օրգանական արտադրության անցումը հեշտացնելու համար:
- Հասկանալ **արտահանման** պահանջները և ձեռք բերել օրգանական սննդամթերքի արտահանումը կազմակերպելու հմտություններ:

Կրթական ոլորտ

Օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ կրթական ոլորտի ներկայացուցիչների գիտելիքները սահմանափակ են, բայց նրանք կայուն գիտելիքներ ունեն առհասարակ գյուղատնտեսության մասին: Կրթական ոլորտի ներկայացուցիչներից ոմանք ներգրավված են եղել օրգանական գյուղատնտեսության և հարակից թեմաներով մի քանի հետազոտական նախագծերում՝ ի տարբերություն այն գործընկերների, ովքեր միայն մոտավոր գաղափար ունեն օրգանական գյուղատնտեսության մասին: Ուստի, կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումները պետք է վերաբերեն հետևյալին.

- **Գյուղատնտեսական գործունեության հանդեպ օրգանական մոտեցման** ընկալումը և վերջինիս տարբերությունները ավանդական գյուղատնտեսական գործունեությունից՝ իրենց բոլոր հետևանքներով: Սա ներառում է ոչ միայն

գիտելիքը, այլև դասավանդման գործընթացում ներգրավված անձանց դիրքորոշումը և համապարփակ մտածելակերպը:

- **Ուսումնական պլանի կազմում** զուտ օրգանական (օրգանական գյուղատնտեսության ուսուցում, սովորաբար՝ օրգանական ոլորտի (ապագա) մասնագետներին) և օրգանականի նկատառումով (ընդհանուր գյուղատնտեսության ուսուցում՝ հաշվի առնելով օրգանական մտածելակերպը, սովորաբար՝ (ապագա) ընդհանուր գյուղատնտեսական մասնագետներին) դասավանդման գործընթացի համար:
- **Մեթոդաբանական հմտություններ** դասավանդման և ուսումնառության սովորողամետ մեթոդի խթանման բնագավառներում:

4 Ոլորտի ենթադրվող ռազմավարություն

4.1 Հավանության արժանացած ռազմավարական տարրեր

Հայաստանում առկա է օրգանական շարժում, բայց այն միասնական չէ և չի ղեկավարվում որևիցե ինստիտուցիոնալ կառույցի ներքո: Ոլորտը չունի շահակիցների կողմից հավանությանն արժանացած՝ ո՛չ հստակորեն ձևակերպված և ո՛չ էլ նույնիսկ ենթադրելի ռազմավարություն: Որոշ շահակիցներ առաջարկում են Օրգանական գյուղատնտեսության Հայաստանի ազգային գործողությունների ծրագիր[9], սակայն նման ծրագրի մշակումը դեռևս ձեռնարկված չէ: Օրինականացված ռազմավարական տարրեր են բովանդակում կառավարության հրապարակած քաղաքականությունները, օրենքները և որոշումները: Այդ տարրերը հիշատակված են գլուխ 1.3-ում, իսկ հանգամանորեն նկարագրված են ICARE հիմնադրամի «Հայաստանում օրգանական գյուղատնտեսության համար քաղաքականության և իրավական դաշտի գնահատում» զեկույցում:

2004թ.-ին մի խումբ շահակիցներ ստեղծեցին Օրգանական գյուղատնտեսության հայկական հիմնադրամը (ՕԳՀՀ), որի նպատակն էր ամպհովանի մարմնի դեր ստանձնել և որը իրավաբանորեն այսօր էլ գոյություն ունի: Հիմնադրամը գործեց մի քանի տարի, սակայն այժմ այլևս չի գործում: Սա նշանակում է, որ ոլորտն այսօր բաղկացած է ակտիվ կազմակերպություններից ու անհատներից, որոնց գործունեությունը ֆորմալ առումով չի համակարգվում: Չնայած այն հանգամանքին, որ օրգանական գյուղատնտեսության մասին ՀՀ կառավարության ընկալումները որևիցե միջազգային պաշտոնական գնահատման չեն ենթարկվել (օր.՝ գնահատում IFOAM-ի Օրգանական չափորոշիչների ընդհանուր խնդիրների և պահանջների (COROS) տեսակետից, որևիցե օրգանական հավաստագրման մարմնի (ՀՄ) մասնակցություն IFOAM-ի հավատարմագրմանը՝ վերջինիս սահմանումների, սկզբունքների կամ չափորոշիչների օգտագործմամբ կամ այլ երկրների հետ համարժեքության վերաբերյալ համաձայնագրերի միջոցով), Հայաստանում օրգանական քաղաքականության մասին ICARE-ի զեկույցը[10] եզրակացնում է, որ օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ օրենսդրությունը համահունչ է միջազգայնորեն ընդունված կանոնակարգերին (բացառությամբ կենդանիների բարեկեցության և վերամշակման ճյուղի): Գործում է «Կանաչ Կովկաս» մասնավոր տարածաշրջանային չափորոշիչը, որը պաշտոնապես գնահատվել է ԵՄ օրենսդրությանը համապատասխանության տեսակետից և գերմանական հավատարմագրող մարմնի՝ DAkkS-ի կողմից ճանաչվել որպես ԵՄ օրգանական կանոնակարգերին համարժեք: Օրգանական ոլորտում գործող հայաստանյան տնտեսավարող սուբյեկտները հավաստագրվում են Օրգանական գյուղատնտեսության մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան (որը հիմնվում է Կոդեքս Ալիմենտարիուսի վրա), ընդ որում նրանց մեծամասնությունը հավաստագրվում է նաև օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ ԵՄ և (կամ) ԱՄՆ կանոնակարգերի համաձայն, որոնք միևնույն ժամանակ ճանաչվում են Շվեյցարիայի և Կանադայի կողմից: Անցակացվել են նաև զանազան ուսումնասիրություններ և գնահատումներ,[11] որոնց հիման վրա արվել են երկրի օրգանական ոլորտի զարգացմանն ուղղված ռազմավարական առաջարկություններ և հանձնարարականներ:

[9] Նունե Դարբինյան, օրգանական սննդամթերքի հետազոտություն «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» դրամաշնորհային 2-րդ ծրագրի շրջանակում (ECAPDEV No. TF05171), 2014:

[10] «Հայաստանում օրգանական գյուղատնտեսության համար քաղաքականության և իրավական դաշտի գույքագրում», որն անցկացրել է ICARE հիմնադրամը 2015թ.-ին՝ OASI-ի ներքին օգտագործման նպատակով:

[11] http://unep.ch/etb/publications/green%20economy/organic%20agriculture%20%20eecca%20study%20on%20green%20economy/unep%20organic_eecca%20country%20study.pdf

Առհասարակ, գոյություն ունի ընդհանուր ըմբռնում, որ օրգանական գյուղատնտեսությունն առաջարկում է ավելի քիչ ներդրանքներով բարձրարժեք արտադրանքի ստեղծման ռազմավարություն, որը թույլ կտա բարելավել գյուղատնտեսական արտադրությունն ու վերամշակումը՝ մասնավորապես պտղաբուծության, խոտաբույսերի, մեղրի, վայրի ուտելի բույսերի և որոշ առանձնահատուկ մթերքների արտադրության հեռանկար ունեցող փոքր ու կտրված երկրում: Բարձրարժեք մթերքների և Հայաստանի՝ որպես կենսաբազմազանության առումով ճանաչված համաշխարհային «թեժ կետերից» մեկը լինելու առավելության (ավելի քան 3500 բուսատեսակ 29000 ք. կմ-ի վրա[12]) օգտագործումը ինքնին արդեն ռազմավարություն պետք է լինի:

Փոխհամաձայնություն կա նաև այն հարցում, որ մեծ ուշադրություն է դարձվում արտահանման վրա, մասնավորապես՝ դեպի Ռուսաստան, Շվեյցարիա և ԱՄՆ, և այս առումով անհրաժեշտ է արդյունավետորեն օգտագործել Հայաստանի բարի համբավը (որն էլ ավելի տարածվելու ներուժ ունի, մասնավորապես ԵՄ-ում և ԱՄՆ-ում) և հայերի լավ զարգացած կապերը (որի առումով քիչ դեր չեն խաղում նպատակային բոլոր տարածաշրջաններում առկա Սփյուռքի հոծ համայնքները): Հայաստանն ունի ԵՄ և ԱՄՆ օրգանական սննդամթերք արտահանելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքը, քանի որ հայաստանյան հավաստագրող էկոգլոբ կազմակերպությունը հավատարմագրված է այդ տարածաշրջաններում: էկոգլոբի հավաստագրած օրգանական մթերքները ճանաչում են նաև Կանադան և Շվեյցարիան:

Սակայն միայն արտահանումը գրավիչ չէ ֆերմերների համար: Անհրաժեշտ է ավելացնել ուշադրությունը հայրենական շուկայի կարիքների հանդեպ, որպեսզի հնարավոր լինի ցանքաշրջանառության մեջ մտնող այլ մշակաբույսերը նույնպես վաճառել որպես օրգանական: Սովորաբար արտահանվող մթերքների ցանկը շատ կարճ է լինում, այնպես որ բազմազան մթերքներ արտադրող ֆերմերային տնտեսություններ կարելի է զարգացնել միայն ուժեղ հայրենական շուկայի պարագայում: Ուստի ռազմավարությունը պետք է ներառի այնպիսի հնարավորությունների զարգացումը, որոնք կնպաստեն բնակչության, տևական ժամանակով Հայաստանում աշխատող արտերկրի քաղաքացիների և զբոսաշրջիկների շրջանում օրգանական սննդամթերքի մասին իրազեկության անընդհատ բարձրացմանը:

Անհրաժեշտ է ավելի արդյունավետ օգտագործել ՀՀ կառավարության ռազմավարական այլ նպատակների հետ համընկնող հնարավորությունները (օր.՝ էկոտուրիզմը կամ հեռավոր տարածաշրջաններում եկամուտների ստեղծումը):

Ռազմավարական այլ տարրերը, ինչպիսիք են օրգանական ոլորտի դիրքավորումը, ոլորտի և գործող հաստատությունների կայացումը, մասնավոր և պետական խաղորդների միջև պատասխանատվության և առաջնորդության բաժանումը, ինչպես նաև ներդրումների գերակայությունները, ներկայումս քննարկման փուլում են: Մենք չենք կարող պնդել, որ օրգանական ոլորտի զարգացման վերաբերյալ գոյություն ունեն լայնորեն համաձայնեցված գաղափարներ: Ուստի հաջորդ գլուխներում մենք նկարագրում ենք մեր ենթադրություններն այն մասին, թե որը կարող է լինել նպատակահարմար ռազմավարությունը՝ հիմնվելով շահակիցների արտահայտած մտքերի, որոշ այլ ուսումնասիրությունների և միջազգային փորձի վրա: Այս նկարագրությունները կարևորվում են կարողությունների զարգացման պլան կազմելու

[12] "Coping with Climate Change: Principles and Asian Context" By Ramesha Chandrappa, Sushil Gupta, Umesh Chandra Kulshrestha, Heidelberg, 2011

տեսակետից, քանի որ ռազմավարական պլանի իրականացումը ոլորտի մակարդակով պահանջվող կամ նախատեսվող կարողություն է:

4.2 Զարգացման նպատակները և խնդիրները

Հայաստանը ձգտում է հասնել **սոցիալական մակարդակի խնդիրների** (կենտրոնանալով քաղաքանության ավելի լայն ընդգրկում ունեցող նպատակների վրա, որոնց թվում ներառված է նաև օրգանական արտադրությունը) և **ոլորտային մակարդակի խնդիրների** (կենտրոնանալով օրգանական գյուղատնտեսության ոլորտի զարգացման վրա) լուծմանը: Սա հաստատում է այն, որ օրգանական արտադրությունը ինքնանպատակ չէ, այլ ազգային (և համաշխարհային) մարտահրավերներին դիմակայելու ռազմավարություն:

Նպատակը

Օրգանական գյուղատնտեսությունը նպաստում է գյուղատնտեսության հարակայուն զարգացմանը և մարդկանց առողջությանն ու բարեկեցությանը Հայաստանում: Գյուղատնտեսության ոլորտում օրգանական արտադրության քաղաքականությունը գլխավորապես իրականացնում են ՀՀ կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը և մասնավոր հատվածը: Հատուկ շեշտադրում է արվում պարենային անկախության և պարենային ապահովության վրա՝ ազգային, տեղական և անհատական մակարդակներում, միևնույն ժամանակ զորացնելով շահակիցներին, զարգացնելով հասարակությունը, հարգելով բնությունը և արժևորելով մշակութային ինքնարտահայտումը: Օրգանական գյուղատնտեսությունը նպաստում է Կայուն զարգացման նպատակ 2-ի իրականացմանը, այն է՝ *«Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը»*, ինչպես նաև՝ Կայուն զարգացման նպատակ 3-ին՝ ապահովել առողջ կյանք և բարեկեցություն, ԿԶՆ 15-ին և մյուսներին:

Տեսլականը

Հայաստանի գյուղատնտեսությունն ընդունում է օրգանական գյուղատնտեսության սկզբունքների վրա հիմնված՝ էկոլոգիապես, սոցիալապես և տնտեսապես կայուն համակարգեր (առողջություն, էկոլոգիա, անաչառություն և հոգատարություն): Այն նախատեսում է՝

- գյուղատնտեսական գործունեության, գյուղատնտեսական արժեշղթաների և սպառման իսկապես 100% հարակայունություն,
- օրգանական շարժման լավագույն կազմակերպում և կառավարության աջակցությունը ոլորտի կողմից հայրենական և միջազգային շուկաները սպասարկելու գործում:

Ընդհանուր խնդիրները և օգուտները

Շահակիցներ – Պետական և մասնավոր հատվածների գործընկերության շրջանակում օրգանական արտադրության ոլորտի շահակիցների և ՀՀ կառավարության համատեղ իրավասու համաժողովի ղեկավարությամբ զարգացնել օրգանական ոլորտը և ընդլայնել հայաստանյան արտադրության օրգանական մթերքների միջազգային և հայրենական շուկաները: Շահակիցներն ու կառավարությունը նպատակ են հետապնդում ընդլայնել օրգանական գյուղատնտեսության ծավալները՝ միաժամանակ օրգանական գյուղատնտեսության ոլորտը մշտապես ուղղորդելով դեպի հարակայուն զարգացում:

Ընդհանուր ռազմավարություն

Ռազմավարությունը հենվում է չորս հենանիշների վրա՝ 1) արդյունավետ և հարակայուն օրգանական հաստատություններ,[13] 2) հաղորդակցություն և խթանում, 3) աջակցություն նորարարությանը, 4) նպաստավոր քաղաքական դաշտ:

Ոլորտում ստեղծվում է ինստիտուցիոնալ ենթակառուցվածք, որը նախանշված թիրախներին մոտենալուն զուգահեռ ունենա գործելու և զարգանալու լիարժեք կարողականություն: Այն նկարագրում է, թե ինչպես են տարբեր հաստատություններ միասին աշխատում օրգանական գյուղատնտեսության գործողությունների ծրագրի շրջանակում, որը ցույց է տալիս խնդիրները (թիրախները), շահակիցների դերակատարությունը, ինչպես և՝ կառավարությունից, մասնավոր հատվածից և քաղհասարակությունից ակնկալվող գործողությունները: Արտադրական գործունեության ուղղությունների պահմանումն ու ավելացումը նշանակում է, որ գյուղմթերքի ներկայիս արտադրության ու վերամշակման ոլորտները զարգանում են և որ գործարկվում են նոր ուղղություններ: Սա նաև նշանակում է, որ գործունեությունը գնահատվում և բարելավվում է՝ հանուն արտադրվող մթերքի որակի բարձրացման: Հղում **ռազմավարական հենանիշ 1-ին. Արդյունավետ և հարակայուն օրգանական հաստատություններ:**

Ոլորտը միավորվում և կերտում է օրգանական գյուղատնտեսության սեփական հայեցակարգը՝ հասարակության առջև եղած մարտահրավերները հաղթահարելու և բարձրորակ սննդամթերք ու գյուղատնտեսական այլ մթերքներ արտադրելու նպատակով: Այդ հայեցակարգևն օգտագործվում է օրգանական գյուղատնտեսության ՝ որպես արդիական, նորարարական, անաչառ, առողջ ապրելակերպին ու առողջ շրջակա միջավայրին նպաստող և զուտ հայաստանյան երևույթի, ընկալումը ձևավորելու համար: Օրգանական սննդամթերքը դիրքավորված է որպես վստահելի, հարակայուն, առողջարար և բնական: Ոլորտը լրատվամիջոցների, ապրանքի առաջխաղացման աշխատանքների, հանրային միջոցառումների և մարքեթինգային ակտիվ աշխատանքների միջոցով ակտիվորեն հաղորդակցվում է հանրության հետ: Իր դիրքորոշումներն ընդգծելու նպատակով ոլորտն ակտիվ մասնակցություն է ունենում նաև հանրային բանավեճերում (օր.՝ ԳՄՕ-ների, կլիմայափոխության, սննդային սկանդալների, գյուղատնտեսական քաղաքականության և այլ թեմաներով): Հղում **ռազմավարական հենանիշ 2-ին. Հաղորդակցություն և ապրանքի առաջխաղացում**:

Ոլորտը խթանում է նորարարությունը: Գործնական փորձի վրա հիմնված գյուղատնտեսական հետազոտությունները զարգացնում են արտադրության, արտադրողականության և հարակայունության բարելավմանն ուղղված նորարարությունը: Հետազոտական աշխատանքը վերաբերում է արտադրության մարտահրավերներին և տեղեկատվություն է տրամադրում հաղորդակցության ու շուկայի ընդլայնմանն ուղղված գործողությունների խթանման նպատակով: Գյուղատնտեսական խորհրդատվական համակարգերը, բիզնեսի զարգացման ծառայությունները և երկրի ներսում հավաստագրման հնարավորությունը նպաստում են նորարության զարգացմանը: Հղում **ռազմավարական հենենիշ 3-ին. Նորարարության խթանում**:

Կառավարությունը ստեղծում է օրգանական գյուղատնտեսության համար նպաստավոր միջավայր և օրգանական գյուղատնտեսության առաջընթացը խթանում ոլորտի

[13] **Հաստատությունները** «վարքագծի կայուն, արժեքավոր, կրկնվող մոդելներ են»: Որպես հասարակական կարգի կառուցվածքներ և մեխանիզմներ, դրանք կառավարում են որոշակի համայնքի ներսում մարդկանց որոշակի խմբի վարքագիծը: Հաստատությունները տարբերակվում են ըստ իրենց սոցիալական նպատակի, որը վեր է անհատներից ու մտադրություններից և իրենցով միջնորդավորում են հանրային կյանքը կառավարող կանոնները: (Վիքիպեդիայի սահմանում)

ներկայացուցիչների հետ սերտ համագործակցությամբ: Պարզեցված իրավական դաշտը, կանոնակարգերի կիրառումը և հաղորդակցության գործընթացին մասնակցությունը նպաստում են ՕԳ զարգացմանը: Քաղաքականության բնագավառում ձեռնարկվող միջոցառումները ներառում են բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ճանաչումն ու խթանումը, նպաստավոր իրավական դաշտի առկայությունը, ինչպես նաև սուբսիդիաների կիրառումը՝ գյուղատնտեսական արտադրության վրա ազդող արտաքին դրական ազդեցությունները (օր.՝ էկոհամակարգի ծառայություններ) խրախուսելու, իսկ բացասական արտաքին ազդեցությունների դեպքում՝ աղտոտող սուբյեկտների կողմից վճարումների սկզբունքը կիրառելու համար: Հղում **ռազմավարական հենանիշ 4-ին. Նպաստավոր քաղաքական դաշտ:**

Կոնկրետ խնդիրները և ռազմավարական հենանիշները

Ընդհանուր նպատակին հասնելու համար Հայաստանի միասնական օրգանական ռազմավարությունը նախանշում է չորս կոնկրետ խնդիրներ՝ իրենց կոնկրետ ռազմավարական ծրագրերով:

Կոնկրետ խնդիր 1. Արդյունավետ և հարակայուն օրգանական հաստատություններ

Հաստատություններն ունեն օրգանական արտադրության հնարավորությունները օգտագործելու և հասարակության և ոլորտի զարգացման նպատակներին հասնելու կարողություն:

Հենանիշի ռազմավարությունը. Միասնական դիրքորոշում մշակելու, ղեկավարության և հանրության ներկայացվածությունն ապահովելու, բոլոր կազմակերպություններում ղեկավարության կարողությունները զորացնելու և պահանջարկի ավելացման ու տնտեսավարողների արտադրական հզորություններն ուժեղացնելու միտումով ինստիտուցիոնալ կարողությունները զարգացնելու նպատակով՝ ստեղծել ազգային ամպհովանի կազմակերպություն: Ոլորտի զարգացման շրջանակը մեծապես կախված է բազմաշահակից ազգային օրգանական գործողությունների պլանի իրականացումից:

Ցուցանիշներ. Հաստատութենական լանդշաֆտը և դրա կատարողականությունը

Կոնկրետ խնդիր 2: Հաղորդակցություն և խթանում

Հայաստանյան սպառողները և թիրախային շուկաներում (Ռուսաստան, ԵՄ, ԱՄՆ, Չինաստան) ներմուծողները ընդունում են Հայաստանի օրգանական ոլորտի հայեցակարգը և բարձր են գնահատում առաջարկվող արժեքները: Պետական հաստատությունները ճանաչում են հանրային արժեքը և հասարակության առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում օրգանական ոլորտի ներդրումը:

Հենանիշի ռազմավարությունը. Հայեցակարգի մասնակցային մշակում. հասնել շահակիցների հավանությանը և ապահովելով ստեղծագործ մոտեցումը՝ հայեցակարգը դարձնել հանրության սեփականությունը տարբեր խողովակներով (դասական լրատվամիջոցներ, սոցիալական լրատվամիջոցներ, վաճառքի խթանում): Ստեղծել հաղորդակցության և մարքեթինգի գրավիչ գործիքներ (օր.՝ վաճառքի կետերի մասին տեղեկատվություն, ապրանքների փաթեթներ և այլն), որոնք կարող են օգտագործել տեղեկատվություն տարածողներն ու տնտեսավարողները:

Ցուցանիշներ. Սպառողների և արտադրողների ընկալումները օրգանական գյուղատնտեսության առանցքային հարցերի վերաբերյալ (վստահություն, արժեք, նպատակ, հավելյալ գին վճարելու պատրաստակամություն, օրգանական մթերքի և ավանդական եղանակով աճեցված մթերքի գների տարբերությունը և այլն):

Կոնկրետ խնդիր 3. Նորարարության խթանում

Արտադրության մեջ հանդիպող խոչընդոտների հաղթահարման և ավանդականից օրգանական արտադրության անցնելու հնարավորությունների և արտադրության զարգացման հարցերը լուծվում են հետազոտությունների և ֆերմերների, վերամշակողների, առևտրականների և օժանդակ ծառայությունների (օր.՝ հավաստագրող, գիտասփյուռ-խորհրդատվական և այլն) կարողությունների զարգացման միջոցով:

Հենանիշի ռազմավարությունը. Խթանել ֆերմերների և գիտական հաստատությունների կողմից իրականացվող հետազոտությունները: Փորձացուցադրական աշխատանքների, հրապարակումների, միջոցառումների միջոցով և գիտասփյուռ բնույթի այլ եղանակներով հետազոտությունների արդյունքներն անհրաժեշտ է դարձնել ոլորտում գործող սուբյեկտների սեփականությունը՝ արտադրողականության, շահութաբերության և հարակայունության բարձրացման նպատակով: Արտադրության մեթոդների օպտիմալացումից զատ, համակարգի նկարագրությունը, առկա փորձի տարածումը և անմիջական ազդեցություն ունեցող հետազոտությունները նպաստում են ինստիտուցիոնալ զարգացմանը և երկրի օրգանական ոլորտի՝ հանրային դրական ընկալմանը:

Ցուցանիշներ. Օրգանական գյուղատնտեսության առաջընթաց (ըստ արտադրողների, հեկտար), արտադրողականություն, շահութաբերություն և հարակայունություն:

Կոնկրետ խնդիր 4. Նպաստավոր քաղաքական միջավայր

Տնտեսավարողները հայտնվում են արտադրական և իրացման լավ պայմաններում այն իմաստով, որ արտադրությանը ներկայացվող պահանջները թափանցիկ են, իրատեսական և բարենպաստ, իսկ արտադրության վրա ազդող արտաքին գործոնները յուրացվում և դառնում են ներքին գործոններ:

Հենանիշի ռազմավարությունը. Տնտեսավարողներն օգտվում են կիրառության համար դյուրին պայմաններից՝ տեղական շուկայի համար արտադրելու ազգային չափորոշիչներին համապատասխանող ապրանք, չափորոշիչ, որը լավագույնս հարմարեցված է հայաստանյան արտադրողի կարիքներին և հայաստանյան սպառողի գերակայություններին: Տվյալ չափորոշչի միջազգային համարժեքը այս դեպքում գերակա չէ: Ինչ վերաբերում է արտահանման շուկաներին, այս դեպքում գործում են տվյալ նպատակային շուկայում ընդունված չափորոշիչները կամ համարժեք մասնավոր չափորոշիչը (ինչպես օրինակ՝ Կանաչ Կովկասը): Ավանդականից օրգանականի անցման, էկոհամակարգերի ծառայությունների (օրգանական տարածքի համար վճարումներ) և ապրանքի առաջխաղացման համար տրվում են սուբսիդիաներ: Միաժամանակ, արտաքին բացասական ազդեցություններ առաջացնող սուբսիդիաները վերացվում են: Մինչև որոշակի շեմ (օր.՝ ԱՄՆ-ում դա 5000 ԱՄՆ դոլարն է[14]) ուղղակի մարքեթինգի համար հավաստագրի անհրաժեշտություն կարող է չլինել, փոխարենը, ոչ անանուն հայրենական շուկայում կարելի է կիրառել ՄԵՀ-ը՝ Մասնակցային երաշխիքային համակարգը (մասնակցության հիման վրա որակի երաշխավորման համակարգ):

Ցուցանիշներ. Օրգանական գյուղատնտեսական արտադրության (տարածք, արտադրողներ, արտադրություն) և վերամշակման (արտադրություն) յուրացում: Օրգանական արտադրանքի գնումներ հայրենական շուկայում և արտահանում (արժեք):

Թիրախներ և հիմնական ցուցանիշներ

[14] ԱՄՆ գյուղդեպարտամենտի կայք - https://www.ams.usda.gov/services/organic-certification/need-be-certified

Արտադրություն. Մինչև 2025թ.-ը Հայաստանում օրգանական մշակության տակ դրված հողատարածությունն ավելանում է մինչև 10.000 հա (ներկայիս 1000 հա-ի դիմաց) կամ գյուղատնտեսական հողերի 0,5%-ը (0,1%-ից) կամ վարելահողերի 2%-ը, իսկ վայրի ուտելի բույսերի հավաքչության տարածքը՝ մինչև 50.000 հա (2%): Ընդ որում այդ հողատարածքների 75%-ն ունի երրորդ կողմի հավաստագրում:

Արտադրողներ. Մինչև 2025թ.-ը 1000 ֆերմերներ արտադրում են օրգանական մթերքներ՝ հավաստագրված կամ չհավաստագրված, լիովին օրգանականի փոխարկված կամ փոխարկման գործընթացում գտնվող:

Վերամշակում և առևտուր. Մինչև 2025թ.-ը 100 ընկերություններ (վերամշակող և առևտրային) ձեռք են բերում օրգանական հավաստագրում:

Շուկաներ. Մինչև 2025թ.-ը հայրենական օրգանական շուկայի ծավալը հասնում է 8 միլիարդ դրամի (5 մլն ԱՄՆ դոլար): Արտահանումը կազմում է 10 մլն ԱՄՆ դոլոր:

4.3 Շահակիցների դերն և առաքելությունը

Ամփոփ ձևով ներկայացնենք առյն ռազմավարությունը՝ նշելով, թե շահակիցներից յուրաքանչյուրն ինչ դերակատարություն պետք է ստանձնի:

Կառավարություն. կառավարում, հաղորդակցություն, արտահանման նպաստավոր պայմաններ, հայրենական շուկայի համար օրգանական գյուղատնտեսության մասին օրենսդրության կիրարկում, քաղաքականության խթանում, ֆինանսներ հաստատությունների համար: Գործընկերություն ազգային օրգանական շարժման հետ: Պատասխանատու է հենանիշ 4-ի համար, աջակցում է շահակիցներին բոլոր մյուս հենանիշների հարցում:

Ազգային օրգանական շարժում. Բոլոր շահակիցների միավորում մեկ համախմբի ներքո՝ ընդհանուր դիրքորոշումների և ռազմավարության շուրջ համաձայնության գալու նպատակով: Գործընկերություն կառավարության հետ՝ օրգանական ոլորտի զարգացման համար նպաստավոր միջավայր ստեղծելու համար. հանդես է գալիս որպես ոլորտի շահակիցների ներկայացուցիչ: Պատասխանատու է հենանիշներ 1-ի և 2-ի համար, քարոզչություն է անում հենանիշ 4-ի համար և նպաստում հենանիշ 3-ին:

Կրթական ոլորտ. ա) Ոլորտի կարողությունների զարգացում անհատական և ինստիտուցիոնալ մակարդակներում. բ) Օրգանական գյուղատնտեսության թեմաներով մասնագիտացված վերապատրաստման դասընթացներ (օր.՝ օրգանական խաղողագործություն, արտահանման պահանջներ և ընթացակարգեր, օրգանական արտադրության խթանում և հաղորդակցություն և այլն). գ) Օրգանական մասնագիտացմամբ բակալավրիական և մագիստրոսական բուհական դասընթացներ և գյուղատնտեսական կրթական ծրագրերում օրգանականին հատուկ տեղի հատկացում. դ) Օրգանականի մասին տեղեկացվածությանը հատուկ տեղի հատկացում դպրոցական կրթական ծրագրերում:
Մասնակցություն 1-3 հենանիշներին:

Գյուղատնտեսական գիտատեխնիկական խորհրդատվական ծառայություն և ՀԿ-ներ. ա) Խորհրդատվություն ֆերմերային տնտեսությունների՝ օրգանական արտադրության անցման և արտադրական գործունեության վերաբերյալ. բ) Ֆերմերային խմբերի կողմից օրգանական փորձացուցադրական տնտեսությունների ստեղծում. գ) Օժանդակություն արժեշղթաների ստեղծմանը և նորարարությունների ու զարգացման վերաբերյալ տեղեկատվական հոսքի ապահովում. դ) Ոլորտի մոբիլիզացում. ե) Սպառողների մոբիլիզացում և իրազեկության ապահովում. զ) Օրգանական հարցերի վերաբերյալ

քարոզչություն: Մասնակցություն 1-3 հենանիշներին:

Աջակցության ծառայություններ. ա) Նորարարությանը և զարգացմանն ուղղված հետազոտական աշխատանք (պետական և մասնավոր հովանու ներքո). բ) Հավաստագրման ծառայություններ և օժանդակություն ՄԵՀ-ներին. գ) լրատվամիջոցների ծառայություններ (ոլորտի հովանու ներքո). դ) Գիտական ծառայություններ (լաբորատոր փորձեր, մասնագիտական օժանդակություն, գնահատումներ և այլն, մասնավոր հովանու ներքո), գործառնական և լոգիստիկ ծառայություններ (մասնավոր հովանու ներքո): Աջակցում է հենանիշ 2-ին և 3-ին:

Ֆերմերներ. Գյուղատնտեսական արտադրություն և էկոհամակարգի՝ շուկայական ուղղվածության ծառայություններ: Շահակիցների այս խմբի թիրախը հենանիշ 3-ն է, ինչպես նաև շահակից է բոլոր մյուսներին:

Վերամշակողներ և առևտրային կազմակերպություններ. Նոր ապրանքատեսակների մշակում, վերամշակում և շուկայահանում: Ներդրանքների մատակարարում ֆերմերներին:
Թիրախը՝ հենանիշ 3, շահակից է բոլոր մյուսներին:

5 Կարողականության զարգացման ռազմավարություն

Կարողականության զարգացման ռազմավարությունը լրացնում է 4-րդ գլխում նկարագրված՝ ոլորտի ռազմավարությանը, քանի որ կարողությունների զարգացման համար անհրաժեշտ գիտելիքները, հմտությունները և դիրքորոշումները հենց այն են, ինչը պահանջվում է ընդհանուր պլանն իրականացնելու համար: Այս գլխում նկարագրվում են կարողությունների զարգացման՝ նպատակին հասնելու համար անհրաժեշտ կարիքները, խնդիրները և թիրախները, ընդ որում դա չի սահմանափակվում միայն առկա ռեսուրսների հիման վրա իրականացվող աշխատանքներով կամ կոնկրետ ծրագրերի և նախագծերի շրջանակներով, ինչպես օրինակ OASI-ն է:

Մենք տարբերակում ենք ոլորտային, ինստիտուցիոնալ և անհատական կարողությունները, ռազմավարական հենանիշները (տես գլուխ 3-ը), ինչպես նաև կարողականության զարգացման հետևյալ ձևերը.

A. Շահակիցների կարողությունների ֆորմալ զարգացում

Սա ներառում է ֆորմալ վերապատրաստումները և միջոցառումները, որոնք տեղի են ունենում սովորական աշխատանքային գործընթացից դուրս՝ լսարաններում, ընկերություններում, դաշտում: Վերապատրաստման այդ դասընթացները կարող են վարել պետական կամ մասնավոր հաստատությունները, ներառյալ գիտասփյուռ ծառայությունները, բուհերը, խորհրդատվական ծառայությունները կամ միջոցառումների կազմակերպիչները:

B. Շահակիցների հրահանգավորում (քոուչինգ) անհատի (հաստատության, ոլորտի) զարգացման նպատակով

Հրահանգավորումը հիմնվում է ծառայություններ մատուցողների հետ կնքված պայմանագրերի վրա՝ որոշակի նպատակների հասնելու նկատառումով: Հրահանգավորումը շահակիցներին անմիջականորեն աջակցում է օրգանական ուղղվածության իրենց արտադրական գործընթացներում:

C. Ցանցաստեղծում, կապեր և գիտելիքների փոխանակում

Կարողությունների զարգացման այս ձևը ներառում է գործակցային գործողություններ և օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ գիտելիքների փոխանակում շահակիցների միջև:

Չնայած այն հանգամանքին, որ վերապատրաստման ծրագրի գլխավոր նպատակը հաստատության կամ ոլորտի կարողականության զարգացումն է, բայց քանի որ վերապատրաստումը ուղղված է անհատ մարդկանց, ծրագրում միշտ էլ ներառվում է անհատական ուսուցման բաղադրիչ: Խմբային կարողությունների զարգացման աշխատանքները միշտ էլ ունենում են ինստիտուցիոնալ էֆեկտ, նույնիսկ՝ եթե դրանք ուղղված են ոլորտի զարգացմանը: Մենք որոշակի ջանքեր ենք գործադրել՝ ապահովելու, որ կարողությունների զարգացման առաջարկվող միջոցառումներում ներառվեն ոլորտային, ինստիտուցիոնալ և անհատական կարիքները: Պարզության համար չենք կազմել միջոցառումների կատեգորիաներ նշված երեք մակարդակներում: Փոխարենը կատեգորիաները կազմել ենք՝ ելնելով գլուխ 3-ում բացատրված ռազմավարական խնդիրներին համապատասխանությունից: Երբեմն առաջարկվող միջոցառումները վերաբերում են մեկից ավելի հենանիշների (օր.՝ առաջնորդության զարգացմանը): Նման դեպքում կատեգորիաները նշվում են միայն մեկ անգամ:

Ռազմավարությունը նախատեսում է կարողությունների զարգացման 44 միջոցառումներ՝ A1 – A23, B1 – B12 և C1 – C9, որոնք մանրամասնվում են գլուխ 6-ում: Իրականացնողները կարող են միջոցներն ընտրել մեկ առ մեկ կամ միմյանց համահունչ մի քանի միջոցների փաթեթներով: Առաջարկվում է, որ OASI-ն ժամանակավորապես պահպանի վերահսկողական և համակարգման գործառույթը, մինչև հնարավոր լինի այն փոխանցել շահակիցների օրինական ամպհովանի համաժողովին:

5.1 Հենանիշ 1) Արդյունավետ և հարակայուն օրգանական հաստատություններ

Նպաստում է այն իրավիճակին, երբ՝ հաստատություններն օժտված են օրգանական հնարավորություններն օգտագործելու և հասարակության ու ոլորտի զարգացման նպատակներին հասնելու բավարար կարողականությամբ:

Շահակիցներին օժտել համապատասխան կարողությամբ՝ ստեղծելու ազգային ամպհովանի համաժողով՝ միասնական դիրքորոշումների հանգելու, առաջնորդությունը և հանրային ներկայությունը զարգացնելու, առաջնորդության կարողությունները բոլոր կազմակերպություններում զարգացնելու և պահանջարկը բարձրացնելու ու տնտեսավարողի արտադրողական հզորություններն ավելացնելու նպատակով ինստիտուցիոնալ կարողականությունը զարգացնելու համար: Զարգացման շրջանակը ձևավորվում է մեծաթիվ շահակիցների մասնակցությամբ ազգային օրգանական գործողությունների ծրագրի իրականացման միջոցով:

Կարողությունների զարգացման միջոցառումներ.

A1. **Օրգանական ոլորտի առաջնորդության դասընթաց**. Առաջնորդության թեմայով վերապատրաստում ոլորտային մակարդակում առաջնորդություն և պատասխանատվություն ստանձնող անձանց համար: Կարճաժամկետ դասընթացների համար Հայաստանում նախատեսվում է ներգրավել շուրջ 15-25 անձ:[15]

A2. **Օրգանական գյուղատնտեսության Հայաստանի ազգային գործողությունների ծրագրի (ՕԳՀԱԳԾ) վերաբերյալ դասընթաց**. Օրգանական գյուղատնտեսության ազգային ծրագրի կազմման մասին վերապատրաստում:

A3. **Շահակիցների սեմինար ամպհովանի կառույցի ստեղծման և ՕԳՀԱԳԾ-ին մասնակցելու նպատակով.** Օժտել համապատասխան գիտելիքներով, հմտություններով և դիրքորոշումներով՝ հաստատություններում համագործակցության ոգին սերմանելու և «ներքևից վերև» սկզբունքով օրգանական ամպհովանի կառույց ստեղծելու նպատակով:

A4. **Օրգանական գործառնությունների կառավարման դասընթաց.** Ուշադրությունը կենտրոնացնել օրգանական կազմակերպությունների կառավարման հմտություններին (տնտեսավարողներ և աջակցող ծառայություններ):

A5. **ՕԳ-ին հատուկ տեղ հատկացնել բուհերի, գյուղատնտեսական քոլեջների և դպրոցների ուսումնական պլաններում**. Ուսումնական պլանների մշակում բուհերում և դպրոցներում:

B1. **Հրահանգավորում (քոուչինգ) ՕԳՀԱԳԾ-ի վերաբերյալ**. Աջակցություն Օրգանական գյուղատնտեսության Հայաստանի ազգային գործողությունների՝

[15] IFOAM Organics International-ի ուսումնական պլանը հասանելի է

բազմաշահակից ծրագրի մշակման, հաստատման, իրականացման և մշտադիտարկման համար պատասխանատու խմբին:

B2. **Ամպհովանի կառույցի ուսուցում.** Նպաստել բազմաշահակից գործուն օրգանական ամպհովանի կառույցի լավ աշխատանքին՝ ուշադրությունը կենտրոնացնելով հարակայուն կառավարման (բիզնես մոդելի և բիզնես պլանի ստեղծում) և համագործակցության ու կառույցի համար պատասխանատվության ձևավորմման վրա:

B3. **Աջակցություն շուկայական արդիական հետազոտության անցկացմանը.** Հրահանգավորել որևիցե խմբի՝ անցկացնելու խորազնին շուկայական հետազոտություն, որը ի հայտ կբերի սպառողների նախընտրությունները և դիրքորոշումը թե տեղական և թե միջազգային շուկաներում:

B4. **Բիզնեսի զարգացման ծառայություններ.** Կազմակերպությունների ղեկավարներին խորհուրդներ տալ այն մասին, թե կառավարման ու բիզնեսի զարգացման հարցերով որտեղից ստանան օգնություն և աջակցություն:

C1. **Բազմաշահակից միջազգային ուսումնաճանաչողական շրջագայություններ** նորահայտ և կայացած այլ օրգանական ոլորտներ, օրինակ՝ գերմանական BIOFACH:

C2. Հայաստանի օրգանական շարժման **ամենամյա ազգային համաժողով** (գիտաժողով, ցուցահանդես և փառատոն):

5.2 Հենանիշ 2) Հաղորդակցություն և խթանում

Նպաստել այն իրավիճակին, երբ հայաստանյան սպառողները և արտերկրի թիրախային շուկաներում (Ռուսաստան, ԵՄ, ԱՄՆ, Չինաստան) գործող ներմուծողները ընդունեն Հայաստանի օրգանական գյուղատնտեսության ոլորտի հայեցակարգը և գնահատեն առաջարկվող արժեքները: Պետական կառույցներն ընդունում են հանրային արժեքներն ու օրգանական գյուղատնտեսության դերը հասարակության առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու հարցում:

Շահակիցներին օժտել հետևյալ աշխատանքներն իրականացնելու կարողությամբ. Հայեցակարգի մասնակցային մշակում, հասնել շահակիցների հավանությանը և տարբեր ուղիներով (դասական ՁԼՄ-ներ, սոցիալական լրատվամիջոցներ, վաճառքի խթանում) այն ստեղծագործաբար վերածել հանրային հաղորդակցության: Ստեղծել գրավիչ հաղորդակցական և մարքեթինգային գործիքներ (օր.՝ տեղեկատվություն վաճառքի կետերի մասին, ապրանքների փաթեթավորում և այլն), որոնք կօգտագործեն հաղորդակցության ոլորտի պատասխանատուներն ու տնտեսավարողները:

Կարողականության զարգացման միջոցառումներ.

A6. **Հաղորդակցության ռազմավարության մշակման դասընթաց.** Հաղորդակցության հմտություններ, հայեցակարգի մշակման և օրգանական քարոզարշավի իրականացման բազային հմտություններ:

A7. **Ամենօրյա հաղորդակցության վերաբերյալ վերապատրաստում** (օրգանական/ ոչ օրգանական ոլորտների վերաբերյալ). հաղորդակցության մասնագետները յուրացնում են օրգանական գյուղատնտեսության առանձնահատկությունները՝ իրենց աշխատանքում օգտագործելու համար:

A8. **Օրգանական գյուղատնտեսության մասին մոդուլներ կրթական ծրագրերում**. Կրթական ծրագրերում հատուկ տեղ տալ օրգանական ոլորտին:

A9. **Օրգանական կենսակերպը քարոզող միջոցառումներ** հանրության համար:

B5. **Հաղորդակցության ուղղորդում.** Ամպիովանի կառույցին օժտել հաղորդակցության ռազմավարություն մշակելու և իրականացնելու կարողությամբ:

B6. **Արտահանման քարոզարշավների հրահանգավորում (քոուչինգ).** Հայաստանյան արտադրության հիմնական օրգանական մթերքների (խոտաբույսեր, մրգեր, հատապտուղներ, մեղր՝ թարմ և վերամշակված) քարոզարշավ արտերկրի ներմուծողների համար:

B7. **Հրահանգավորման վերաբերյալ սպառողների ազգային քարոզարշավներ**. օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ տեղեկատվական արշավների իրականացում սպառողների շրջանում:

B8. **Լրատվամիջոցների տարեկան խորհրդաժողովի հրահանգավորում.** Օրգանական ամպիովանի կազմակերպությանն աջակցել խորհրդաժողովի նախապատրաստման, վիճակագրական տվյալների, ոգեշնչող պատմությունների և ոլորտի վերջին զարգացումների հարցում:

C3. **Կապ օրգանական թեմաներ արծարծող լրատվամիջոցների հետ**. Իրենց աշխատանքի բնույթով օրգանական թեմաներ արծարծող անձանց (օր.՝ լրագրողների, մանրածախ բիզնեսը խթանողների, պետական լրատվական ծառայությունների, ՀԿ-ների տեղեկատվության պատասխանատուների, սպառողների համար լույս տեսնող ամսագրերի և այլն) կարողությունների զարգացում՝ միմյանց հետ օրգանական արտադրության հիմունքների մասին մտքերի փոխանակում (ֆորումի ստեղծում) իրականացնելու հարցում:

5.3 Հենանիշ 3) Օժանդակություն նորարարությանը

Նպաստել այն իրավիճակին, երբ օրգանական արտադրությանն անցման և արտադրության զարգացման գործում առկա խոչընդոտները հաղթահարվում, իսկ հնարավորություններն օգտագործվում են՝ հետազոտողների և ֆերմերների, վերամշակողների, առևտրական կազմակերպությունների և օժանդակող ծառայությունների (օր.՝ հավաստագրման, գիտասփյուռ) կարողությունների զարգացման միջոցով:

Շահակիցների կարողությունների ստեղծում՝ ֆերմերների և գիտական հաստատությունների կողմից հետազոտական աշխատանքների խթանման նպատակով: Հետազոտությունների արդյունքներն անհրաժեշտ է հասցնել ոլորտում գործող սուբյեկտներին՝ փորձացուցադրական միջոցառումների, հրապարակումների և գիտասփյուռ բնույթի այլ մեթոդաբանական ձեռնարկումների միջոցով՝ նպատակ ունենալով բարձրացնել արտադրողականությունը, շահութաբերությունը և արտադրության հարակայունությունը: Բացի արտադրության մեթոդների օպտիմալացումից, համակարգի նկարագրությունը, փաստահավաք և ազդեցության գնահատմանն ուղղված հետազոտությունները նպաստում են Հայաստանի օրգանական գյուղատնտեսության ոլորտի ինստիտուցիոնալ զարգացմանը և դրական հանրային ընկալմանը:

Կարողությունների զարգացման միջոցառումներ.

A10. **Հետազոտությունների օրակարգի մշակման աշխատաժողով.** Հետազոտությունների օրակարգը կազմողների աշխատաժողով՝ բուն օրգանական և օրգանական տարրեր պարունակող իրենց

հետազոտություններում օրգանական մոտեցումներին պատշաճ տեղ հատկացնելու նպատակով:

A11. **Գիտասփյուռ ծրագրի աշխատաժողով.** Օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ աշխատաժողով գիտասփյուռ ծառայության ղեկավարների և գիտասփյուռի օրակարգ կազմողների համար:

A12. **Գիտասփյուռ ծառայության վերապատրաստում միկրոմիջամտությունների մշակման համար**. Գիտասփյուռի գործակալներին հնարավորություններ ընձեռել խթանելու նորարարությունները ֆերմերների շրջանում:

A13. **Օրգանական նորարարությունների խթանման դասընթաց** գիտնականների, գիտասփյուռի և գործող մասնագետների համար:

A14. **Վերապատրաստում տոնավաճառների (օրգանական մթերքի առևտրի) կազմակերպման վերաբերյալ**. Ինչպես կազմել համաձայնագրեր վերամշակողների և ֆերմերների միջև:

A15. **Սեմինար դրամաշնորհների մատչելիության վերաբերյալ**. Արտադրողների (կազմակերպությունների) համար հնարավորություն ընձեռել օգտվելու օրգանական արտադրության ոլորտում առկա դրամաշնորհներից:

A16. **Օրգանական ոլորտի վերապատրաստման ծրագրեր ոլորտային մասնագետների համար:**

A17. **Նեղ մասնագիտական (օր.՝ խոտաբույսերի, խաղողի) օրգանական վերամշակման և մարքեթինգի դասընթացներ:**

A18. **Օրգանական պարարտանյութերի օգտագործումը.** վերապատրաստում արտադրողների համար:

A19. **Միջին մասնագիտական կրթություն ապագա օրգանական ֆերմերների համար.** ֆերմերների կրթության երկակի համակարգ:

A20. **Օրգանական մթերքի մարքեթինգի դասընթաց:**

A21. **Օրգանական մթերք արտադրողների կոոպերատիվներ, համայնքային աջակցության վրա հիմնված գյուղատնտեսություն և ՄԵՀ-ներ:**

B9. **Դաշտային ցուցադրություններ գիտասփյուռ ծառայությունների կողմից.** գիտասփյուռին օժանդակել տեղերում նորարարությունների ցուցադրման գործում:

B10. **Նորարարությունների համակարգողների քոուչինգ (հրահանգավորում):** Գյուղական ծառայություններ մատուցողներին տեղեկացնել օրգանական ոլորտի նորարարությունների մասին:

C4. **Գյուղական ծառայություններ մատուցողների հարթակ**. Սոցիալական կապեր և գիտելիքների փոխանակում գյուղական ծառայություններ մատուցողների համար:

C5. **Ուղևորություններ շուկայի գնահատման և արտահանման մատակարարման շղթայի գնահատման նպատակով**. Արտահանողներին օժանդակել օրգանական մթերքի արտահանման պայմանների գնահատման հարցում:

C6. **Փորձի փոխանակում օրգանական ոլորտի միջազգային հետազոտական կազմակերպությունների հետ:**

5.4 Հենանիշ 4) Նպաստավոր քաղաքական միջավայր

Նպաստել այն իրավիճակին, երբ տնտեսավարողները գտնում են արտադրության և իրացման լավ պայմաններ՝ ի դեմս արտադրությանը ներկայացվող թափանցիկ, իրատեսական և բարենպաստ պահանջների և երբ յուրացվում են արտադրության արտաքին ազդեցությունները:

Շահակիցներին օժանդակել այնպիսի պայմանների կիրառման հարցում, որոնք կնպաստեն տեղական շուկայի պահանջարկին համապատասխանող մթերքի արտադրությանը ազգային չափորոշիչներով, որոնք լավագույնս հարմարեցված են հայ արտադրողի կարիքներին և հայ սպառողի նախընտրություններին:

Կարողականության զարգացման միջոցառումներ.

A22. **Օրգանական ոլորտի լավագույն կառավարում.** Պետական պաշտոնյաների համար աշխատանքից չկտրված մեկամյա վերապատրաստում՝ օրգանական ոլորտի խթանման և կանոնակարգման լավագույն գործելակերպերի թեմաներով:

A23. **Վերապատրաստում քարոզչական աշխատանքի վերաբերյալ**՝ օրգանական ոլորտի ներկայացուցիչների, այդ թվում՝ ֆերմերների, վերամշակողների (առևտրական կազմակերպությունների) և սպառողների համար:

B11. **Աջակցություն օրգանական հավաստագրման մարմիններին (ՀՄ)՝ հավատարմագրման ծառայությունների մատուցման հարցում.** օժանդակել ՀՄ պետական հավատարմագրման գործընթացին:

B12. **Քաղաքականության մշակում և իրավասու օրգանական մարմին.** Գյուղնախարարությանը հրահանգավորել օրգանական իրավասության հարցում: Շուկայի վերահսկում, կանոնակարգում, քաղաքականության մշակում (իրականացում) և կանոնների կիրարկում:

C7. **Պետական փոխանակման ծրագրեր.** Հայաստանի և այլ երկրների նախարարները և իրավասու մարմինները հանդիպում են՝ գնահատելու համար, թե օրգանական ոլորտում ընթացող զարգացումները որքանով են բարենպաստ:

C8. **Օրգանական ոլորտի քաղաքականության մեջ փոփոխությունների մասին տեղեկատվական արշավներ** քաղծառայողների և մասնավոր հատվածի համար:

C9. **Օրգանական ոլորտի ռազմավարական քաղաքականության վերաբերյալ ամենամյա հավաք-երկխոսություն.** Ոլորտի և կառավարության բարձր մակարդակի հանդիպում:

6 Կարողականության զարգացման գործողությունների տարբերակներ

Այս գլխում թվարկվում են կարողականության զարգացմանն ուղղված՝ գլուխ 5-ում առաջարկվող գործողությունների մանրամասները: Յուրաքանչյուր գործողության նկարագրությունը ներառում է ձեռք բերված հիմնական կարողությունը, մասնակիցներին, տվյալ գործողության տևողությունը և գերակայության աստիճանը: Այդ ցանկը նման է ճաշացանկի, որից ընտրություն ենք կատարում՝ ելնելով այն մարդկանց կարիքից, գերակայությունից և հնարավորություններից, ովքեր պատրաստակամ են ներդրում անել Հայաստանի օրգանական ոլորտի կարողականության զարգացման գործում:

6.1 Կարողականության զարգացման հենանիշ 1: Օրգանական գյուղատնտեսության ոլորտում գործող արդյունավետ և հարակայուն հաստատություններ

Ա1 Օրգանական ոլորտում առաջնորդության դասընթաց.

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռքբերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ [16]	Նշումներ
Առաջնորդության զարգացում ոլորտի առաջնորդություն ու պատասխանատվությունը ստանձնող անձանց համար	ՕԳ-ի ծագումը, օրգանական ոլորտի համար մշակված ուղենիշներ, երկրագործական համակարգեր, օրգանական վիճակագրություն, գենետիկորեն ձևափոխված ապրանքներ/պեստիցիդներ/պարարտանյութեր, վերամշակում/առևտուր, շուկաներ/մարքեթինգ, օրգանական երաշխիք, աջակից կառույցներ, քարոզչություն և քաղաքականության սահմանում, հաղորդակցություն, առաջնորդություն և կառավարում, մասնակցային մեթոդաբանություն, «Օրգանիկ 3.0» (ՕԳ շարժման զարգացման 3-րդ փուլ): Սեփական զարգացման պլանի մշակում	Բոլոր հաստատություններից ընտրված 20-25 մասնակից	Շաբաթական 2 անգամ և 10 վեբինար	Շատ բարձր,միջնաժամկետ	Միջազգային ուսուցում և ազգային փորձագետների վերապատրաստում: Մանրամասնել IFOAM-ում առկա ուսումնական պլանը և փորձը: Հաշվի առնել լեզվական պատնեշը:

[16] Կարճաժամկետ է համարվում մինչև 1 տարի, միջնաժամկետ՝1-3 տարի և երկարաժամկետ՝ 3 տարուց ավելի ժամանակահատվածում իրականացվող ծրագրերը: Սա վերաբերում է ակնկալվող արդյունքին:

Ա2 Օրգանական գյուղատնտեսության Հայաստանի ազգային գործողությունների ծրագրի (ՕԳՀԱԳԾ) վերաբերյալ դասընթաց.

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Օրինակական աշխատանքային խմբի համար դասընթաց, որը մշակում, իրականացնում և մշտադիտարկում է ՕԳՀԱԳԾ-ն	ՕԳՀԱԳԾ-ի նպատակը, գործընթացը, սեփականությունը և զարգացմանը թափ հաղորդելը, ռեսուրսների մոբիլիզացումը, կառուցվածքը, SMARTխնդիրները / ցուցիչները/ պլանի կազմում, օրգանական ռազմավարություն, որոշումների ընդունում, մշտադիտարկում, իրականացում: Համակողմանի տեղեկատվություն օրգանական ոլորտի լավագույն գործելակերպերի մասին	Պաշտոնական աշխատանքային խմբի անդամներ	3 անգամ 3 օր	Շատ բարձր, կարճաժամկետ	Orgap.org հարթակն ունի համապատասխան բովանդակություն: Վերապատրաստում/ խմբային աշխատանք՝ առանձին, բայց փոխկապակցված: Միջազգային ուսուցում:

Ա3 Շահակիցների սեմինար ամպհովանի կառույցի ստեղծման և ՕԳՀԱԳԾ-ին մասնակցելու համար

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Տարածաշրջանային համատեղ սեմինարներ ամպհովանու ստեղծման նպատակով՝ շահակիցների բոլոր խմբերի համար	Երկրում ոլորտի զարգացման պատասխանատվության ստանձնում: ՕԳ-ի հիմնական դիրքորոշումների և ոլորտի ազգային կառուցվածքի ստեղծում՝ մասնակացային մոտեցմամբ: Օրգանական ոլորտի քարոզչության հիմնադրույթների և զարգացման գերակայությունների մշակում: Մասնակցություն ՕԳՀԱԳԾ-ին	Մարզերում շահակիցների բոլոր խմբերը	1 օր յուրաքանչյուր մարզում	Բարձր: Կարճաժամկետից մինչև միջնաժամկետ	Նախապայմանը վստահելի և կարողունակ ամպհովանու ստեղծումն է: Նպաստում է Ա2-ին, Բ1-ին և Գ2-ին:

Ա4 Օրգանական արտադրության կառավարման դասընթաց

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Ֆերմերային տնտեսությունների օրգանական կառավարման,	ՕԳ-ի հիմունքներ, ինստիտուցիոնալ կառավարում և ինքնակառավարում:	Օրգանական արտադրության ոլորտում ղեկավար	Աշխատանքային մեկ տարվա	Բարձր,կարճաժամկետից մինչև միջնաժամ	Ենթադրվող պահանջարկը, լրացնում է

վերամշակման և առևտրային միավորների ու օժանդակ ծառայությունների վերաբերյալ դասընթաց:	Կառավարման գործիքների կիրառում, ինչպես օր.՝ պլանավորում, բյուջետավորում, հաշվետվությունների կազմում, աշխատակազմի կառավարում, ռազմավարական պլանավորում և այլն:	պաշտոններ զբաղեցնող անձինք:	ընթացքում ամսական 1 – 2 օր վերապատրաստում:	կետ:	Ա1-ին՝ այլ մակարդակով և բովանդակությամբ:

Ա5 ՕԳ-ին հատուկ տեղի հատկացում բուհերում և դպրոցներում

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
ՕԳ-ի ուսումնական պլանի մշակման դասընթաց ՀԱԱՀ-ում, ՀԱՀ-ում և հայաստանյան 4 գյուղատնտեսական քոլեջներում	Բազային գիտելիքներ և ծանոթություն ՕԳ-ի գործելակերպերին, ուսումնական պլանի տարբերակներ ՕԳ իրազեկության գծով: Առարկան դասավանդող մասնագետների առկայություն	ՀԱԱՀ-ի, գյուղատնտեսական քոլեջների, ICARE-ի, ՀԱՀ-ի ուս. պլաններ մշակողներ և առաջատար մասնագետներ	2-3-օրյա դասընթաց, ներառյալ էքսկուրսիա	Միջին,կարճաժամկետ	ՀԱԱՀ դասախոսների համար ծախսեր չեն լինի (ծախսերը ներառված են BOKU-ի ՕԳ ուսպլանի մշակման նախագծում)

Բ1 ՕԳՀԱԳԾ-ի վերաբերյալ հրահանգավորում (քոուչինգ)

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
ՕԳՀԱԳԾ-ի համար պատասխանատու աշխատանքային խմբի համար նվազագույնը մեկ տարի կատարել արտադրությունից չկտրված հրահանգավորում:	ՕԳՀԱԳԾ-ի մշակման գործընթացի վերահսկում, արձանագանքում կոնկրետ խոչընդոտներին և ընթացքին, այդ թվում՝ հակամարտությունների լուծում անձնական ու բովանդակային մակարդակներում:	Աշխատանքային խմբի նախագահ/քարտուղար՝ ՕԳՀԱԳԾ ամբողջ աշխատանքային խմբի հետ փոխգործակցությամբ:	Ամիսը 1 օր, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի:	Շատ բարձր Կարճաժամկետ	Կապված է Ա2 և Ա1 կետերի հետ: Ազգային հրահանգիչ՝ ցանկալի է՝ միջազգային կողմի գործակցությամբ:

Բ2 Ամպիովանի կառույցի հրահանգավորումը

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռքբերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Երկու տարի ժամկետով իրականացնել ամպիովանի կառույցի դիտորդ խորհրդի և	Գիտելիքներ փոխանցել շարժումը միավորելու վերաբերյալ՝ շեշտադրելով առօրյա կոնկրետ խնդիրների լուծումը և	Ամպիովանի կառույցի խորհուրդը և ղեկավա	Ամսական 1 օր և անհատական հրահանգավորման	Բարձր, խիստ անհրաժեշտության դեպքում՝ կարճաժա	Նախապայմանը հանձնառու հաստատություն ունենալն է (այս պահին դեռևս

ղեկավարության՝ աշխատանքից չկտրված հրահանգավորում	մասնակցության մեթոդաբանությունը, քարոզչությունը, ռազմավարությունը, գործառնական կառավարումը, դրամահավաքը, ֆինանսական կառավարումը, հանրային հաշվետվությունը և հաղորդակցությունը	րությունը	հանդիպում ներ	մկետ, այլապես՝ երկարաժ ամկետ	առկա չէ) Ա1-ին մասնակցությունը նախապայման է, խորհուրդ է տրվում օգտվել միջազգային աջակցությունից

Բ3 Աջակցություն խորազնին շուկայական հետազոտություններին

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Հրահանգավորել մի խմբի, որն ունի թե տեղական և թե միջազգային շուկաներում խորազնին շուկայական հետազոտություն անցկացնելու մանդատ:	Շուկայի ուսումնասիրության մեթոդաբանություն, օրգանական շուկայի առանձնահատկությունները (հայրենական և միջազգային), վերաբերելի ցանցերի և տեղեկատվական բազաների մատչելիություն, առկա հետազոտական նյութերի (օր.՝ UNEP/IFOAM-ի) յուրացում:	Շուկայի ուսումնասիրություն անցկացնելու մանդատ ունեցող տնտեսագետներ	Ամսական 1 օր կամ անհատական հրահանգավորում ուսումնասիրության ամբողջ ընթացքում	Միջնաժամկետ, կարճաժամկետ՝ մանդատի առկայության դեպքում	Միայն եթե շուկայի ուսումնասիրությունը լիազորված է ինչ-որ մեկի կողմից

Բ4 Բիզնեսի զարգացման ծառայություններ

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Անհատական խորհրդատվություն ղեկավարներին՝ կառավարման և բիզնեսի զարգացման գործում աջակցություն ստանալու նկատառումով:	Սեփական բիզնեսի ինքնավերլուծություն, Հայաստանում և արտերկրում բիզնեսի զարգացման ուրվագիծ: Աջակցությունն ձեռք բերելու մեթոդներ:	Գործառնական գծով կառավարիչ, նույն թիրախային խումբը, ինչ Ա11-ի դեպքում:	Մեկ անգամ, կես օր	Միջին Կարճաժամկետից մինչև միջնաժամկետ	Շարունակական առաջարկներ ամպիովանի կառույցում գործող կառավարիչներին:

Գ1 Բազմաշահակից միջազգային ճանաչողական գործուղումներ

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Արտադրողների և նախարարության պաշտոնյաների	Համակողմանի տեղեկատվություն օրգանական	Արտահանմանը միտված արտադրողնե	1-2 շաբաթ, գումարած նախապա	Ցածրից մինչև միջին,	Միայն պահանջարկի

համար ճանաչողական գործուղումներ եվրոպական առաջատար երկրների (օր.՝ Մոլդովա, Ուկրաինա, Ռումինիա, Ավստրիա, Շվեյցարիա) օրգանական արտադրություն	գյուղատնտեսության (վերմշակման) լավագույն գործելակերպերի մասին, հաջողության և ձախողումների ռազմավարությունը և գործոնները հասկանալու ունակություն: Գիտելիքների փոխանցում ոլորտի քաղաքականություն մշակողներին (մասնավոր և պետական հատվածներում) և այլ կազմակերպությունների հրահանգավորում: Բարձր մակարդակի ցանցաստեղծում:	ր, ոլորտի առաջատարներ, ԳՆ	տրաստման և յուրացման համար անհրաժեշտ օրերը	միջնաժամկետ	առկայության և ծախսերի փոխհատուցման դեպքում: Կատարյալ ժամկետը կլինի Նյուրեմբերգի BIOFACH-ի կամ Օրգանական գյուղատն. համաշխարհային կոնգրեսի ժամկետը

C2 Ամենամյա ազգային բաց համաժողով

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Օրգանական գյուղատնտեսությանը նվիրված ամենամյա ազգային միջոցառում, ներառյալ ոլորտի և սպառողների համար նախատեսված գիտաժողով, ցուցահանդեսներ, համագումարներ և փառատոն:	Ազգային ցանցաստեղծում, փորձի փոխանցում, ՕԳ ոլորտի ազգային ինքնության ու պատկանելության ստեղծում: Քննարկումներ գիտնականների, ոլորտի մասնագետների և սպառողների հետ, ցուցահանդեսներ և տոնակատարություններ: Ազգային քաղաքականության շուրջ երկխոսություն և շահակիցների ոգեշնչում:	Բոլոր խմբերը, 100 - 200 փորձագետներ/ հյուրեր և մի քանի հարյուր այցելուներ (որոնց թիվը տարեց-տարի ավելանալու է)	1-2 օր	Շատ բարձր, ամենամյա	Նախապայմանը բանիմաց, շահակիցներին շաղկապող կազմակերպիչն է: Բազմաթիվ օրինակներ այլ երկրներից: Հնարավոր են միջոցառման կազմակերպման զանազան հայեցակարգեր: Կարելի է զուգակցել Կանաչ Արահետ ՀԿ-ի ամենամյա բերքի փառատոնի հետ:

6.2 Կարողականության զարգացման հենանիշ 2. Հաղորդակցություն և խթանում

A6 Հաղորդակցության ռազմավարության մշակման դասընթաց

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Հաղորդակցության ռազմավարության մշակման վերաբերյալ դասընթաց	Հաղորդակցության, հայեցակարգի մշակման և քարոզարշավի իրականացման հմտություններ	ՀԿ-ներ, ԳՆ՝ հաղորդակցութ. ռազմավարութ. համար պատասխանատու անձինք	2 անգամ 4 օր 3 ամսվա ընթացքում	Շատ բարձր, Միջնաժամկետից մինչև երկարաժամկետ	Միջազգային ուսուցման ինտեգրում ԳՆ-ի կարողականության զարգացման աշխատանքների (ENPARD նախագիծ) մեջ ներառելու դեպքում ծախսեր չեն առաջանա:

A7 Ամենօրյա հողորդակցության թեմայով վերապատրաստում

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Հաղորդակցական առանձին հմտությունների ուսուցման դասընթաց	Հաղորդակցական հմտությունների տիրապետում տարբեր իրավիճակներում (գրավոր, տեսողական և բանավոր): ՕԳ-ի մասին ուղերձի հղում կորպորատիվ հաղորդակցության, քարոզարշավների, ճգնաժամային իրավիճակներում հաղորդակցության ժամանակ և այլն:	Հաղորդակցության մասնագետներ	6 ամսվա ընթացքում 3 անգամ 3 օր	Միջին Երկարաժամկետ	Ուսուցում հաղորդակցության և ՕԳ գծով ԳՆ-ի կարողությունների զարգացման աշխատանքների (ENPARD նախագիծ) մեջ ներառելու դեպքում ծախսեր չեն առաջանա:

A8 Օրգանական գյուղատնտեսության կրթական մոդուլներ

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ մոդուլի զանազան տարբերակներ, որոնք կարելի է օգտագործել բուհերում, դպրոցներում և այլն:	ՕԳ-ի հիմունքներ քաղաքացիների և սպառողների համար: Բազմակի օգուտներ սպառողների և հասարակության համար: Տարբերակները՝ շատ կարճատևից (1 ժ) մինչև դասաշար (շաբաթը մեկ՝ կիսամյակի ընթացքում)	Աշակերտներ և ուսանողներ	1 ժամից մինչև դասաշար	Միջին Երկարաժամկետ	Տես՝ A 5

Ա9 Օրգանական կենսակերպին նվիրված միջոցառումներ

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Օրգանական կենսակերպին նվիրված հանրային միջոցառումներ կազմակերպելու ցանկություն ունեցող անձանց խմբի վերապատրաստում:	ՕԳ հիմունքներ, միջոցառումների կազմակերպում, օրգանական կենսակերպ, առողջության և հարակայունության կենսակերպ, խոհարարություն, հասարարական սնունդ, հայտնի մարդիկ և ՕԳ	Նման միջոցառման կազմակերպիչներ	2 օր	Ցածր Երկարաժամկետ	Նախապայմանն այն է, որ որևիցե կազմակերպություն ցանկանա իրականացնել օրգանական կենսակերպին նվիրված միջոցառումներ:

Բ5 Հաղորդակցության վերաբերյալ հրահանգավորում

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Փոքր խմբերով հաղորդակցության մասնագետների ամենօրյա աջակցություն և վերահսկում աշխատավայրում	Խնդիրների լուծում, ուղերձի ձևակերպում, ճգնաժամի մասին հաղորդում և տեղեկատվական ու աջակցող ցանցերի հետ կապակցում	Հաղորդակցության մասնագետներ	Եռամսյակը 1 օր խմբային հրահանգավորում	Միջին Երկարաժամկետ	Կապակցում Ա4, Ա5 և Բ2 կետերի հետ

Բ6 Արտահանման արշավների վերաբերյալ հրահանգավորում

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Հրահանգավորման արշավների կազմակերպում հայկական արտադրության հիմնական մթերքների (խոտաբույսեր, մրգեր, հատապտուղներ, մեղր և այլն) արտասահմանյան ներմուծողների համար:	Արձագանք հայաստանցի արտահանողների կազմած պլաններին, ինչպես և արտահանման խթանմանը՝ ներմուծողի տեսակետից: Արշավի հասցեատերերի հասանելիության ապահովում:	Արշավի կազմակերպիչներ, ովքեր ներկայացնում են արտահանող ընկերությունները, ամպհովանի կազմակերպությունները և ԳՆ-ն	Հանդիպումներ տարբեր ժամանակներում՝ արշավի ընթացքում և դրանից հետո	Միջին Միջնաժամկետ	Ըստ պահանջի՝ եթե նման արշավ մեկնարկի, ընդորում կապակցելով Բ3-ի և Գ1-ի հետ: Պահանջվում է նաև միջազգային տեսակետ

Բ7 Ազգային սպառողին ուղղված արշավների հրահանգավորում

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/	Նշումներ

	կարողությունը			ժամկետ	
Ազգային մակարդակով ՕԳ-ի խթանմանն ուղղված իրազեկության բարձրացման արշավների հրահանգավորում	ՕԳ դիրքավորում և այդ դիրքի արտացոլում ընկերության ամփոփ փաստաթղթերում, գործարար առաջարկներում՝ ներառյալ շահակիցների մասնակցությունը և արշավի վերաբերյալ որոշումների ընդունումը	Ազգային սպառողին ուղղված արշավի իրականացնող (ամպիովանի կառույց, տնտեսավարող, մանրածախ առևտրական ընկերություն և այլն)	Հանդիպումներ տարբեր ժամանակներում՝ արշավից առաջ և դրա ընթացքում	Շատ բարձր Կարճաժամկետ	Ըստ պահանջի՝ եթե կա սպառողներին ուղղված արշավի նման նախաձեռնություն:

Բ8 Մամուլի ամենամյա ասուլիսի հրահանգավորում

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Միջոցառումների նախապատրաստական աշխատանքների հրահանգավորում	Միջոցառման նախապատրաստական աշխատանքներ, վիճակագրություն, ոգեշնչող պատմություններ, քարոզչական ուղերձներ և վերջին զարգացումներ, լրատվամիջոցների ցանց, կազմակերպական աշխատանքներ և այլն:	Ամպիովանի կազմակերպություն	Մամուլի ամենամյա ասուլիսի նախապատրաստման համար տարբեր հանդիպումներ	Բարձր Կարճաժամկետ	Նախապայմանն այն է, որ ամպիովանի կազմակերպությունը ստանձնի մամուլի ամենամյա ասուլիսների պատասխանատվությունը

Գ3 Կապակցություն օրգանական թեմաներ լուսաբանող լրատվամիջոցների հետ

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Օրգանական և ոչ օրգանական ոլորտների հաղորդակցության գծով պատասխանատուների ամենամյա հեղինակավոր ցանցային միջոցառումներ ՕԳ-ի հիմունքների և առկա իրավիճակի մասին փորձի փոխանակման նպատակով:	Ոլորտի զարգացման ընթացքը Հայաստանում և աշխարհում: Կոնկրետ թեմաներ, ներառյալ ճգնաժամերը և հրատապ լուրերը: ՕԳ-ի և կենսակերպի կապակցում: Առանցքային թեզիսներ և հայտնի մարդիկ: Մամուլի ամենամյա ասուլիս	Լրագրողներ, մանրածախ բիզնեսի աջակիցներ պետական լրատվական ծառայություններ, ՀԿ-ների հաղորդակցության գծով պատասխանատուներ, ժողովրդական լսություն վայելող ամսագրեր	Երեկոյան միջոցառում	Միջին Միջնաժամկետ	Կապակցել Գ2, Ա3, Ա4, Բ4 և Բ6 կետերի հետ

6.3 Կարողականության զարգացման հենանիշ 3. Օժանդակություն նորարարությանը

Ա10 Հետազոտական աշխատանքների օրակարգի սահմանման աշխատաժողով

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Հետազոտական աշխատանքի օրակարգը կազմողների սեմինար	Բուն օրգանական և վերջինիս առնչվող հետազոտություններ: Օրգանական արտադրության, դրա օգուտների և վիճակագրության մասին տեղեկատվության ընդլայնում: ՕԳ-ին առնչվող խնդիրների, ռազմավարության և հետազոտական մթոդաբանության համոզիչ ձևակերպումներ:	Բուհեր,հետազոտությունների օրակարգը որոշողներ, ԳՆ, ՀԿ-ներ	1-2 օր	Միջին Միջնաժամկետ - երկարաժամկետ	Աշխատաժողովը հասցեագրված է հետազոտական աշխատանքում փորձառու մասնակիցներին, ում անհրաժեշտ է տեղեկանալ միայն ՕԳ-ի առանձնահատկությունների մասին

Ա11 Գիտասփյուռ-խորհրդատվական ծրագրի վերաբերյալ աշխատաժողով

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Սեմինարների կազմակերպում գիտասփյուռ-խորհրդատվական ծառայության պատասխանատուների համար	Օրգանական ոլորտին առնչվող գիտասփյուռ-խորհրդատվական քաղաքականության առանձնահատկությունները, ՕԳ-ի բազմակի օգուտները, ՕԳ-ի մասին նյութերի տարածման մեթոդաբանությունը, մասնակցություն և գիտասփյուռ-խորհրդատվության քարոզչություն	Խորհրդատվական ծառայության ղեկավարներ, ՀԿ-ներ, նախարարություն	2 օր	Բարձր Կարճաժամկետ	Աշխատաժողովը հասցեագրված է գիտասփյուռ-խորհրդատվական ծառայության օրակարգը սահմանելու լիազորություն ունեցող անձանց

Ա12 Գիտասփյուռ-խորհրդատվական ծառայությունների գծով վերապատրաստում՝ միկրո մակարդակով միջամտությունների մշակման համար

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Դասընթաց գիտասփյուռ-խորհրդատվության շահագրգիռ	ՕԳ-ի հիմունքները և ՕԳ համակարգի ստեղծումը, մասնակցային հետազոտությունների և	Գիտասփյուռի շահագրգիռ	Ավելի քան 9 ամիս, 2 անգամ	Շատ բարձր Կարճաժամկետ-	IFOAM-ն ունի նման վերապատրաստման

գործակալների համար՝ ֆերմերային տնտեսության մակարդակով միկրոմիջամտություններին օժանդակելու նպատակով	գիտասփյուռ խորհրդատվության մեթոդաբանություն, ֆերմերային տնտեսությունների զարգացման մոտեցում, գիտասփյուռ-խորհրդատվական ոլորտի կողմից միկրոմիջամտություններ՝ պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացում: Պոտենցիալ միկրոմիջամտությունները ներառում են ոչ ծախսատար ջերմոցները, ֆերմերային տնտեսություններում մրգերի վերամշակումը կամ նորարարական սորտերն ու մշակաբույսերը:	գործակալներ (մասնավոր և պետական)	1 շաբաթ և 1-2 օր տևող մի քանի հանդիպումներ	Միջնաժամկետ	ուսումնական պլան: Առաջարկվում է ապահովել միջազգային ներգրավվածությունը:

Ա13 Օժանդակություն օրգանական նորարարությանը

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Տարբեր դասընթացներ գիտության և արտադրության փոխգործակցությանը նպաստող առանցքային թեմաներով	Մեծ հետաքրքրություն ներկայացնող իրական թեմաներ, օր.՝ ՕԳ-ի անցում, տնտեսության պլանավորում, բույսերի պաշտպանություն, կենդանիների առողջություն, հողերի սնուցում և պարարտացում, հավաստագրում, տնտեսության կառավարում և այլն: Կոնկրետ հետաքրքրություն՝ ջերմոցային արտադրության, ոչ ավանդական մշակաբույսերի (բազմազանեցում), հետբերքահավաքյան տեխնոլոգիաների և ֆերմերային տնտեսությունում վերամշակման իրականացման հանդեպ: Դասընթացը ներառում է մասնակիցների անհատական խորհրդատվությունը՝ իրենց պլանների կազմման վերաբերյալ	Գիտության, գիտասփյուռ ոլորտի ներկայացուցիչներ և արտադրողներ	Յուրաքանչյուրը՝ 3-5 օր	Բարձր Միջնաժամկետ	Սա գյուղական ուսուցողական կենտրոնի կողմից առաջարկվող վերապատրաստումների կանոնավոր շարք է:

Ա14 Վերապատրաստում արդար առևտրի գործելակերպերի թեմայով

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Արտադրողների և վերամշակողների միջև արդարացի	Աշխատաժողով արտադրողների և վերամշակողների համար	Արտադրողներ և վերամշակ	1 - 2 օր	Բարձր Միջնաժա	Աշխատաժողովները կախված են

համաձայնագրերի մշակում	առևտրի արդարացի և հստակ պայմաններ սահմանելու վերաբերյալ: Ապրանքի տեխնիկական բնութագիրը, որակը, գնագոյացումը, արդարացիության ասպեկտները (հուսալիություն, երկարաժամկետություն, գնագոյացում, հաղորդակցություն և այլն):	ողներ		մկետ	կոնկրետ ապրանքից

Ա15 Սեմինար դրամաշնորհների հասանելիության վերաբերյալ

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցների թիվը	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Աշխատաժողով, որը կնպաստի միջազգային կազմակերպություններից դրամաշնորհներ ստանալուն:	Դրամաշնորհների հնարավորություններ և պայմաններ: «Կարելիները» և «չի կարելիները»՝ դիմումների ձևակերպման ընթացքում: Ինչպես գաղափարներն ու իրողությունները դարձնել հայեցակարգեր, որոնք համահունչ լինեն դոնորների չափանիշներին:	Արտադրողներ և կազմակերպություններ	2 օր	Ցածր Կարճաժամկետ	Արդյունավետությունը բարձրացնելու միտումով՝ դոնորներին հրավիրել հասկանալու պոտենցիալ շնորհառուներին:

Ա 16 Վերապատրաստման ծրագրեր ոլորտային մասնագետների համար

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Մասնագետներին գործուղել ՕԳ-ի գծով միջազգային վերապատրաստման՝ - բույսերի պաշտպանության - բույսերի սնուցման - օրգանական ներդրանքների - անասնաբուժության - մեծ ներուժ ունեցող մթերքների (մրգեր, խոտաբույսեր, կաթնամթերք, մեղր) վերամշակման թեմաներով՝ ուսուցանիր ուսուցանողին սկզբունքով:	Նեղ մասնագիտական գիտելիքներ, ներառյալ 5 ոլորտներում դասավանդելու և խորհրդատվություն տրամադրելու կարողությունը	2 մասնագետ յուրաքանչյուր թեմայի համար, որոնք վերապատրաստման ծրագրով նախատեսված են կառավարության, գիտատեխնոլոգիական խորհրդատվական ծառայության և տնտեսավարողների համար:	1 տարի	Բարձր Միջնաժամկետ	Կարելի է զուգակցել մագիստրոսական ծրագրի հետ

Ա17 Ոլորտային (օր.՝ խոտաբույսեր, խաղողագործություն) վերամշակում և մարքեթինգի դասընթաց

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Ոլորտային դասընթացներ, վարպետաց դասեր մեծ ներուժ ունեցող մթերքների թեմաներով	Մեծ ներուժ ունեցող մթերքների (մրգեր, խաղող, խոտաբույսեր, մեղր) վերամշակում և մարքեթինգ՝ արտահանման նպատակով	Ձեռնարկատերեր, արտադրության (ապագա) աշխատողներ, ԳՆ ագրովերամշակման վարչության մասնագետներ		Միջին Միջնաժամկետ	ICARE-ն անցկացնում է գինու բիզնեսի դասեր:

Ա18 Նպաստել օրգանական պարարտանյութերի օգտագործմանը

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Գիտասփյուռ-խորհրդատվական ծառայության կողմից դասընթացներ օրգանական պարարտանյութերի օգտագործման վերաբերյալ	Պարարտացման տարբերակներ և օրգանական պարարտանյութերի արտադրություն, փորձարարություն և արդյունավետության ապահովում	Ֆերմերներ	4 անգամ 1 օր	Միջին Միջնաժամկետ	Ապակենտրոնացված է, կարելի է զուգակցել Ա12-ի հետ:

Ա19 Միջին մասնագիտական կրթություն ապագա օրգանական ֆերմերների համար

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Երիտասարդ ֆերմերների միջին մասնագիտական կրթություն: Երկակի համակարգ, արտադրական պրակտիկա օրգանական ֆերմերային տնտեսությունում:	Ամբողջական օրգանական տնտեսության ստեղծում և կառավարում, ներառյալ՝ նորմալ կենսամակարդակի ապահովման համար անհրաժեշտ արտադրական բոլոր տեխնոլոգիաները	Ապագա օրգանական ֆերմերներ	2 տարվա պրակտիկա 6 ամիս լսարանային ուսուցում	Միջին Երկարաժամկետ	ՇԵՆ-ի ուսումնական կենտրոն կամ Կանաչ արահետի ուսումնական կենտրոն

Ա 20 Օրգանական մարքեթինգի դասընթաց

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Օրգանական	Մարկետինգի ընդհանուր	(պոտենցիա	1 շաբաթ	Միջին	Անհրաժեշտ է

մարքեթինգի վերաբերյալ ուսուցում՝ օրգանական մթերքի վաճառքի խթանման և դրա ապրանքի առաջխաղացման համար հաջողված մարքեթինգային մոտեցումների յուրացման համար	եղանակներ, ՕԳ-ի դիրքավորման և օրգանական բրենդի հեռանկարների մասին հրահանգավորում Հաջողությունների և ձախողումների միջազգային փորձը Կոնկրետ մթերքների մարքեթինգ, օրգանական մթերքի ապրանքի առաջխաղացում	լ) մանրածախ բիզեսներ Ջեռնարկատերեր, ոլորտի (ապագա) աշխատողներ, ԳՆ մասնագետներ	և 2 օր (10 ամսից հետո	Կարճաժամկետ	համադրել տեղական և միջազգային փորձը: «Գրին դեյ» օրգանական խանութի մասնագետներ ը պոտենցիալ դասընթացավարներ են:

Ա 21. Օրգանական մթերք արտադրողների կոոպերատիվներ, ՀԱԳ-ներ և ՄԵՀ-եր

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Վերապատրաստում օրգանական արտադրողների կոոպերատիվներ և ՄԵՀ-եր հիմնելու և զարգացնելու վերաբերյալ	Արտադրական կոոպերատիվներ և համայնքից աջակցվող գյուղատնտեսություն, ՄԵՀ և սոցիալական գործընթացներ	ՀԿ-ներ (Շեն, Կանաչ արահետ) և համայնքային զարգացման գործակալներ	2 ուսուցում՝ տարեկան 5 օր ժամկետով, ընդորում, ուսուցումների միջև ընկած ժամանակամիջոցում անցկացնել հրահանգավորման աշխատանքներ:	Միջին Միջնաժամկետ	Ակնկալվում է գերմանականափորձի յուրացում:

Բ 9 Դաշտային փորձացուցադրական աշխատանքներ գիտատեխնիկական ծառայությունների կողմից

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Մեծ ներուժ ունեցող մշակաբույսերի (մթերքների) փորձացուցադրումներ	Մեծ ներուժ ունեցող մշակաբույսերի (մթերքների) փորձադաշտերի ստեղծում և կառավարում	Տվյալ տարածաշրջանի արտադրողներ	1-օրյա տարբեր փորձացուցադրություններ սեզոնի ընթացքում	Միջին Երկարաժամկետ	Համադրել Ա 12-ի, Ա 18-ի և Ա19-ի հետ

Բ10 Նորարարության համակարգողների հրահանգավորում (քոուչինգ)

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցների թիվը	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Գիտատեխնիկական գործակալները, ովքեր հանդես են գալիս որպես նորարարության համակարգողներ (ներառյալ ֆերմերային խմբերը և ՄԵՀ-երը),	Նորարարությունների համակարգման ընթացքում առօրյա խնդիրների, այդ թվում՝ տեխնիկական, կառավարչական, մեթոդաբանական և	Գիտատեխնիկական խորհրդատվության գործակալներ, ոլորտի խորհրդա	Եռամսյակային խմբային և անհատական հանդիպումներ	Միջին Միջնաժամկետ	Համադրել Ա 12-ի և Ա 21-ի հետ

անձնական խորհրդատվություն ստանալու հնարավորություն են ունենում:	ինստիտուցիոնալ խնդիրների լուծում:	տուներ և ֆերմերայի ն խմբերի համակարգ ողներ (ՀԿ-ներ)	(հեռախոս ազանգեր)՝ ըստ պահանջի		

C4 Գյուղական ծառայություններ մատուցողների հարթակ

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնա կիցները	Տևողու թյունը	Գերակա յություն/ ժամկետ	Նշումներ
Գյուղական ծառայություններ մատուցողները վարում են սոցիալական հարթակ՝ գիտելիքների փոխանակման նպատակով	Գիտասփյուռի գործակալներին հետաքրքրող ամեն տեսակի գիտելիքներ և փորձ, ներառյալ՝ փաստահավաքությունը և սոցիալական կապիտալի ու շահադրդվածության համար անհրաժեշտ գիտելիքները: Դեմառդեմ հավաքներ (օր.՝ ազգային բաց համաժողովի (C2) ժամանակ), վիրտուալ փոխգործողություններ:	Գյուղակ ան ծառայու թյուններ ի մատուցո ղներ	Մշտակ ան	Միջին Միջնաժա մկետ	IFOAM OI-ը տարբեր երկրներում վարում է նման հարթակ (MAAN հարթակ): Համադրել Ա12-ի հետ:

C5 Շուկայի գնահատման և արտահանման մատակարարման շղթայի գնահատման նպատակ հետապնդող գործուղումներ

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնա կիցները	Տևողությ ունը	Գերակայ ություն/ ժամկետ	Նշումներ
Շուկայի (արագ) գնահատում՝ մեծ ներուժ ունեցող մթերքների ամբողջ արժեշղթայում: Ճանաչողական գործուղում թիրախային շուկա:	Ընտրված մատակարարման շղթայում առկա խոչընդոտների գնահատում, ներառյալ որակին, հավաստագրմանը ներկայացվող և օրինական այլ պահանջներ, ծախսերի հաշվարկը և մրցունակության վերլուծությունը: Ցանցաստեղծում և սպառողների վստահության ստեղծում:	Մեթոդա բանությ ան գծով փորձագ ետներ և ոլորտի ներկայա ցուցիչնե ր	2-3 շաբաթ՝ կախված տվյալ շուկայի բարդությ ան աստիճան ից	Բարձր Միջնաժամ կետ	Լավ հնարավորությ ուն է BIOFACH-ը: Կապակցել Բ 3-ի հետ:

Գ 6 Փորձի փոխանակում օրգանական գյուղատնտեսության ոլորտի միջազգային հետազոտողների հետ

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակի ցները	Տևողու թյունը	Գերակայ ություն/ ժամկետ	Նշումներ
Ճանաչողական գործուղում ՕԳ միջազգային գիտահետազոտա կան հաստատություննե	Այցելություն միջազգային հետազոտական հաստատություններ, ծանոթություն օրգանական մթերքների, հատկապես՝ օրգանական	Հետազոտ ողներ և ՀԿ-ների (Կանաչ արահետ) մասնագետ	1-2 շաբաթ	Միջին Միջնաժամ կետ	Համաշխարհայի ն օրգանական կոնգրես և TIPI-ի գիտական օրերը BIOFACH-

ր (օր.՝ FiBL) և հետազոտական ցանցեր (օր.՝ TIPI)	հատապտուղների գծով կատարված հետազոտություններին:	ներ			շրջանակում

6.4 Կարողականության զարգացման հենանիշ 4. Նպաստավոր քաղաքական դաշտ

Ա 22 Օրգանական գյուղատնտեսության լավագույն կառավարման դասընթաց

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Պետական ծառայողների համար աշխատանքից չկտրված մեկամյա դասընթաց օրգանական ոլորտի խթանման և կանոնակարգման լավագույն գործելակերպերի վերաբերյալ: Դիտարկել այլոց փորձը ուսումնասիրելու նպատակով արտերկիր, օր.՝ Ավստրիա գործուղման տարբերակը:	ՕԳ հիմունքներ, օրգանական կառավարման լավագույն գործելակերպեր, ներառյալ՝ ոլորտի զարգացումը, խթանումը և կանոնակարգումը: «Կարելիները» և «չի կարելիները» քաղաքականության սահմանման գործում և կանոնակարգի և դրա կիրարկման համապատասխանությունը: Պետական միջամտության հնարավորություններն ու ծուղակները հայաստանյան համատեքստում: Սպառողի վստահության ստեղծման ուղիներ:	Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ	2 անգամ 4 օր և ամենամսյա հանդիպումներ	Շատ բարձր Միջնաժամկետից մինչև երկարաժամկետ	Հասանելի է IFOAM-ի գրականությունը և փորձը: Միջազգային ուսուցում

Ա 23 Վերապատրաստում քարոզչության վերաբերյալ

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Հայաստանի համար քարոզչության վերաբերյալ դասընթացի լավագույն գործելակերպը	Քաղաքականության համատեքստը Հայաստանում, քաղաքական գործընթացները և մասնակցության տարբերակները քաղաքական համակարգի պայմաններում: Քարոզչության մեթոդաբանությունը և ռազմավարությունը: Օրգանական արդյունաբերության շահերը: ՕԳ-ի բազմակի սոցիալական օգուտները: Հրահանգավորում (քոուչինգ) և ԶԼՄ-ների հետ աշխատանք: Քարոզչության միջոցով վստահության և հարգանքի ձևավորում:	ՀԿ-ներ, ֆերմերներ, վերամշակողներ, առևտրականներ, սպառողների ներկայացուցիչներ, լրատվամիջոցներ	4 անգամ 4 օր և հանդիպումներ դրանց միջև եղած ժամանակահատվածներում՝ մեկ տարվա ընթացքում:	Շատ բարձր Միջնաժամկետ	Փոխգործակցություն Ա 21-ի հետ՝ եթե համընկնում են իրականացման ժամկետները:

Բ 11 Աջակցություն օրգանական հավաստագրման մարմինների հավատարմագրման ծառայության ստեղծմանը

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Խորհրդատվական աջակցություն օրգանական ՀՄ-ների հավատարմագրման պետական ծառայության ստեղծման հարցում	Հավատարմագրման չափորոշիչներ (օր.՝ ISO 17065 կամ IFOAM-ի հավատարմագրման պահանջները), հավատարմագրման աուդիտի իրականացում: Հավատարմագրման մարմնի ստեղծման ժամանակ խորհրտատվություն կառավարությանը՝ պլանավորման, կանոնակարգման, հիմնադրման և գործունեություն ծավալելու հարցերում: Համապատասխան տեղեկատվություն ԶԼՄ-ներին:	Հավատարմագրման մարմնի և դրա աշխատակազմի համար պատասխանատու անձինք	Զանազան հանդիպումներ 2-3 տարվա ընթացքում	Միջինից մինչև ցածր Երկարաժամկետ	Նախապայմանը ոլորտում տնտեսավարողների և ՀՄ-ների ուժեղ զարգացումն է, պահանջվում է նաև կառավարության կողմից պաշտոնական պահանջ: Միջազգային փորձագիտական ուժերի, օր.՝ IOAS-ի, կարճաժամկետ ներգրավում

B12 Քաղաքականության մշակում և իրավասու օրգանական մարմին

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Հայաստանում գործող իրավասու մարմնի հրահանգավորում (քոուչինգ)	Իրավասու մարմնի լիազորությունների շրջանակը և ամենօրյա գործունեության լավագույն գործելակերպերը: Պատասխանատու անձանց հրահանգավորում՝ արձագանքելով աշխատանքի և խնդիրների լուծման վերաբերյալ նրանց հարցերին:	Հայաստանի ՕԳ ոլորտում իրավասու մարմնի աշխատակազմ	Հրահանգավորման ամենամյա հանդիպումներ	Միջին - ցածր Երկարաժամկետ	Պահանջվում է ԳՆ-ից պաշտոնական պահանջ: Պահանջվում է միջազգային փորձի ներգրավում:

Գ 7 Քաղաքականության փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն և փոխանակման միջոցառումներ

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Քաղաքականության մեջ փոփոխություններին նվիրված ամենամյա տեղեկատվական միջոցառումներ	Հանրային իրազեկում օրգանական քաղաքականության ընդունման և վերջին զարգացումների վերաբերյալ	Հանրությունը	2 ժամ	Շատ բարձր Միջնաժամկետ	Հնարավոր է զուգակցել Գ 2-ի և ԶԼՄ-ների համար ամենամյա մամուլի ասուլիսի հետ

Գ 8 Կառավարությունների փոխանակման ծրագիր

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Միջազգային փոխանակման միջոցառումներ այլ, օր.՝ ԱՊՀ երկրների կառավարությունների հետ	ԱՊՀ-ի շրջանակում ՕԳ ոլորտում լիազոր կառույցների միջև կանոնավոր համակարգում, հնարավոր է՝ այլ (օր.՝ թիրախային շուկա հանդիսացող) երկրներից հրավիրված հյուրերի հետ միասին: Այցելություններ տնտեսավարողներին՝ վերջիններիս խնդիրներին ծանոթանալու նպատակով:	ՕԳ ոլորտի ԱՊՀ իրավասու կառույցներ	1-2 օր Տարեկան երկու անգամ	Միջին Միջնաժամկետ	IFOAM Եվրասիան՝ որպես պոտենցիալ գործընկեր

Գ 9 Քաղաքականության մշակման հարցերի գծով ամենամյա ռազմավարական երկխոսություն

Նկարագրություն	Ուսումնական պլան/ձեռք բերված կարողությունը	Մասնակիցները	Տևողությունը	Գերակայություն/ժամկետ	Նշումներ
Նախարարության և ոլորտի (ամպհովանի կազմակերպության) բարձր մակարդակի հանդիպում՝ նպաստավոր և փոխհամաձայնեցված քաղաքականության գնահատման նպատակով	Ոլորտի և քաղաքանության իրավիճակային, ներառյալ՝ ՕԳՀԱԳԾ-ի և քաղաքանության իրականացման տվյալ փուլի և կանոնակարգերին համապատասխանության գնահատում	ԳՆ բարձրաստիճան պաշտոնյաներ և օրգանական ամպհովանի կազմակերպություն, առավելագույնը՝ 10 անձ:	Կես օր	Բարձր Կարճաժամկետ	

7 Եզրակացություններ

Տարբեր մակարդակների (անհատական, ինստիտուցիոնալ և ոլորտային) բոլոր շահակիցների կարողությունների զարգացումը OASI նախագծի կարևոր բաղադրիչ է: Սույն ուսումնասիրությամբ իրականացված՝ կարողականության զարգացման կարիքների համակողմանի գնահատումը ի հայտ բերեց օրգանական ոլորտում առկա կարիքները, մարտահրավերները և խնդիրները:

Ոլորտի զարգացման գործընթացում հիմնական բացը միասնական օրգանական շարժման ղեկավարման և համակարգման բացակայությունն է: Մասնակցային սկզբունքով մշակված Օրգանական գյուղատնտեսության Հայաստանի ազգային գործողությունների ծրագիրը, բոլոր շահակիցների սեփականությունը դառնալու և իրավասու ամպհովանի կազմակերպության ու կառավարության կողմից համատեղ ղեկավարվելու պարագայում հնարավորություն կտա հասնել ռազմավարական հստակության և գերակա ուղղություններում արդյունավետ գործողությունների իրականացմանը:

Հայաստանում մեծ մարտահրավեր է հայկական արտադրության օրգանական մթերքների շուկայի բացակայությունը: Ըստ հետազոտության արդյունքների, դրա պատճառը հայկական օրգանական մթերքների մասին սպառողների շրջանում իրազեկվածության և վստահության ցածր մակարդակն է: Սպառողների շրջանում իրազեկվածության բարձրացման արշավների կարևորությունը չի կարելի թերագնահատել: Այս նպատակով իրականացվելիք աշխատանքները ներառում, բայց չեն սահմանափակվում հեռուստատեսային հաղորդումներով, համտեսներով, սեմինարներով, օրգանական ագրոտուրիստական ուղևորություններով (ապրանք-սպառող կապի հաստատման նպատակով), դպրոցների, մանկապարտեզների և ֆերմերների համար նախատեսված գրքերով, բրոշյուրներով, դպրոցական օրգանական նախաճաշիկներով: Առավել մեծ արդյունքի համար կարելի է մշակել և կիրառել սպառողների իրավունքների պաշտպանության և օրգանական պիտակների վերաբերյալ կանոնակարգեր:

Արտերկրում հայաստանյան մթերքի ճանաչումն ընդլայնելու համար անհրաժեշտ է իրականացնել հայկական հիմնական մթերքների (խոտաբույսեր, մրգեր, հատապտուղներ, մեղր և այլն) վերաբերյալ արտերկրի ներմուծողների հրահանգավորում: Պետք է հետազոտել հայկական մթերքների արտահանման պոտենցիալ շուկաները: Անհրաժեշտ է նաև ապահովել օրգանական գյուղատնտեսության ճյուղերի, արտադրության և վերամշակման ծավալների մասին իրազեկումը:

ՕԳ ոլորտի գլխավոր հիմնախնդիրներից մեկը համապատասխան մասնագետների պակասն է: Այս խզումը վերացնելու համար անհրաժեշտ է կատարել մի քանի կարևոր քայլեր: Պետք է մշակել ՕԳ գծով վերապատրաստման ճեռնարկ՝ կարճաժամկետ մոդուլներով և կրթական նյութերով: Պետք է կազմակերպել և իրականացնել վերապատրաստումներ ՀԿ-ների, գյուղատնտեսական գիտասփյուռ ոլորտի մասնագետների, ինչպես նաև մասնավոր հատվածի մասնագետների համար (սույն զեկույցի Բաժին 6-ում տրված է տարբեր շահակիցների համար նախատեսվող վերապատրաստումների ցանկը): Միջազգային փորձ ճեռք բերելու առումով օգտակար կարող են լինել փոխանակման ծրագրերը: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև դասախոսների պարբերական վերապատրաստումների, ինչպես նաև միջազգային չափորոշիչների վրա հիմնված բակալավրիական և մագիստրոսական կրթական ծրագրերի մշակման անհրաժեշտությունը: Այս մոդուլը կարելի է ընդգրկել բուհերի ուսումնական պլանի մեջ որպես ընտրովի առարկա: Պետք է պարբերաբար կազմակերպել օրգանական գյուղատնտեսության գործելակերպերի վերաբերյալ գործնական վերապատրաստումներ և փորձացուցադրումներ, փորձի փոխանակում և

Հայաստանի օրգանական այգեգործության լավագույն գործելակերպերի ցուցադրումներ օրգանական այգիներում (դրանցից ամենահինները գտնվում են Արգինա, Լուկաշին և Շենիկ համայնքներում):

Բացի կանոնավոր վերապատրաստումներից և սեմինարներից, անհրաժեշտ է նաև ներկայացնել օրգանական արտադրողների և վերամշակողների շահերը՝ շուկայի և ներդրանքների մատչելիության ապահովման նկատառումով: Օրգանական արտադրության զարգացման նախագծերը, հատկապես դրանց իրականացման սկզբնական փուլում, պետք է ստանան պետական աջակցություն, իսկ դոնորների ֆինանսավորումը կարելի է օգտագործել որպես լրացուցիչ աջակցություն: Ինչ վերաբերում է ոչ հավաստագրված օրգանական գյուղատնտեսությանը, այդ մասին անհրաժեշտ է մշտապես տեղեկատվություն տրամադրել հավաստագիր չունեցող օրգանական ֆերմերներին (ինչպես նաև՝ այլ շահակիցներին): Հայաստանյան օրգանական մթերքի մասին սպառողների իրազեկվածությունը և որպես սպառող դրանց նկատմամբ հավատարմությունը բարելավելու համար նախատեսված են հատուկ վերապատրաստումներ ՄԵՀ-ի (Մասնակցային երաշխիքային համակարգ) գծով: Պլանավորված է նաև խորհրդատվություն և աջակցություն տրամադրել օրգանական հավաստագրում ստանալու համար դիմող ֆերմերներին և վերամշակողներին՝ հավաստագրման լավագույն տարբերակի ընտրության վերաբերյալ, ինչպես օրինակ՝ անհատական հավաստագրում, երկակի հավաստագրում՝ գնորդի հետ միասին (ընդ որում հավաստագրման ծախսը կատարում է գնորդը և (կամ) վերամշակողը), խմբային հավաստագրում՝ վերահսկողության ներքին համակարգով (հատկապես կոոպերատիվների դեպքում) և այլն:

8 Հավելվածներ

8.1 Օգտագործված գրականության ցանկ

1. ADC Capacity Development Manual http://www.entwicklung.at/fileadmin/user_upload/Dokumente/Publikationen/Handbuecher/Kapazitaetsentwicklung/Manual_Capacity_Development.pdf
2. ARLIS website - RA decree on activities to be implemented within the scope of “2010-2020 Sustainable Strategy Program for Agricultural and Rural Development". http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=63109 (not available in English language). Last assessed in Jan, 2017
3. Chandrappa R., Gupta S., Kulshrestha U "Coping with Climate Change: Principles and Asian Context", Heidelberg, 2011
4. Ecoglobe, List of Organic Operators - http://ecoglobeorganic.com/operators/ Las assessed in Jan. 2017.
5. ICARE for OASI project “Stocktaking of Policies and legal framework for organic agriculture in Armenia" 2015
6. IFOAM Organics International – curriculum is available
7. Nune Darbinyan "Survey on Organic Products" within the scope of Grant program "Preparation of second Program 2 for competitiveness of community agricultural resources" (ECAPDEV No. TF05171) 2014.
8. National Statistical Services – 2014 Agricultural Census Data - http://www.armstat.am/en/?nid=82&id=1860 . Last assessed on Jan. 2017.
9. OASI project information on Austrian Development Agency website - http://www.entwicklung.at/en/ada/news/detail-en/artikel/organic-agriculture-support-initiative-oasi-proj-1/ . Last accessed in Jan. 2017
10. UNEP "Organic Agriculture A step towards the Green Economy in the Eastern Europe, Caucasus and Central Asia region Case studies from Armenia, Moldova and Ukraine" http://unep.ch/etb/publications/green%20economy/organic%20agriculture%20-%20eecca%20study%20on%20green%20economy/unep%20organic_eecca%20country%20study.pdf, Geneva, 2011. Last assessed in Jan. 2017
11. USDA website - https://www.ams.usda.gov/services/organic-certification/need-be-certified. Last assessed in Jan. 2017
12. Wikipedia definition - https://en.wikipedia.org/wiki/Institution. Last assessed in Jan. 2017

8.2 Աշխատաժողովի օրակարգը

Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության (OASI) շահակիցների կարիքների գնահատման արդյունքների վավերացման աշխատաժողով

29 օգոստոսի, ժ. 13:30

Դաբլթրի բայ Հիլթոն հոթել հյուրանոց, 3-րդ հարկ, Միլանո սրահ

Հասցե՝ Գրիգոր Լուսավորիչ, 4/2

Օրակարգ

13:30 - 14:00	Գրանցում
14:00 - 14:30	Բացման և ողջույնի խոսք • Դեյվիդ Մուքենհուբեր, OASI • Ջոն Բարքեր, Հայաստանում ԵՄ պատվիրակություն • Արմեն Հարությունյան, ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ • Մարկուս Արբենց, IFOAM Օրգանիքս Ինթերնեշնլ
14:30 -16:00	OASI-ի շահակիցների կարիքների գնահատման հարցազրույցների արդյունքների վավերացում *Խմբային աշխատանք՝ ոլորտի փորձագետների և համակարգողների մասնակցությամբ*
16:00 -16:20	Ընդմիջում սուրճի համար
16:20 - 16:45	Խմբերի աշխատանքի արդյունքների ներկայացում զեկուցողների կողմից
16:45- 17:15	Ոլորտի զարգացման իրական դեպքերի ուսումնասիրություն • Մարկուս Արբենց, IFOAM Օրգանիքս Ինթերնեշնլ
17:15- 17:45	Հարցուպատասխան, մասնակիցների առաջարկությունները հետագա քայլերի վերաբերյալ, փակման խոսք

Ապահովված էր անգլերեն-հայերեն համաժամանակյա թարգմանություն:

8.3 Հարցաշարեր

Որպես օրինակ, ստորև ներկայացված է նախարարությունների համար նախատեսված հարցաշարը, ընդ որում հարցերը հարմարեցված են հարցաշարերի 6 տարբերակների, այն է՝ նախարարությունների, ԳԱՄԿ-երի, ՀԿ-ների, կրթական ոլորտի, արտադրողների ու վերամշակողների և հավաստագրող մարմնի համար:

Նախարարություններ

1. Ձեր կարծիքով Հայաստանում առկա՞ է արդյոք օրգանական մթերքի պահանջարկ (խնդրում ենք հիմնավորել):
2. Հայաստանում արտադրվող ո՞ր օրգանական ապրանքները կարող են ունենալ մեծ պոտենցիալ:
3. Խնդրում ենք նշել, թե ֆերմերները ի՞նչ խնդիրների կարող են հանդիպել օրգանական արտադրություն իրականացնելիս:
4. Ինչպե՞ս շահադրդել ֆերմերներին, որ արտադրեն օրգանական մթերք:
5. Ի՞նչ դժվարությունների են հանդիպում ֆերմերները հավաստագրման գործընթացում:
6. Որտե՞ղ կարելի է գնել օրգանական մթերք և որտե՞ղ կարող են ֆերմերները վաճառել օրգանական արտադրանք:
7. Ինչպե՞ս դրդել սպառողին օգտվելու օրգանական մթերքից:
8. Խնդրում ենք նշել, թե օրգանական գյուղատնտեսության խթանման համար որ տարբերակները կգործեն լավագույնս:
9. Խնդրում ենք նշել, թե ինչ խզումներ կան առկա փորձի և հմտությունների մեջ, որոնք լրջորեն խոչընդոտում են ընդհանրապես օրգանական ոլորտի զարգացումը երկրում:
10. Ձեր կազմակերպությունը լրացուցիչ ի՞նչ հմտությունների կամ մասնագետների կարիք ունի՝ երկրում օրգանական ոլորտի զարգացմանն ավելի արդյունավետ կերպով նպաստելու համար:
11. Խնդրում ենք քննարկել ձեր կազմակերպության ինստիտուցիոնալ կարիքները՝ օրգանական ոլորտի զարգացմանն ավելի լավ նպաստելու առումով:
12. Արդյոք տեղյա՞կ եք քաղաքանության մեջ պլանավորված այն փոփոխությունների մասին, որոնք կնպաստեն Հայաստանում օրգանական ոլորտի զարգացմանը: Եթե այո, խնդրում ենք մանրամասնել:
13. Հայաստանի օրգանական ոլորտի և օրգանական մթերքի առևտրի զարգացմանը նպաստելու համար ի՞նչ կարելի է փոխել ներկա քաղաքականության (օրենսդրական, կանոնակարգային, արտահանման) մեջ՝ ենթակառուցվածքների առումով (շինություններ, սարքավորումներ, լաբորատորիաներ, արտահանման խթանման կենտրոններ. *տարբերակները կարդացեք միայն այն դեպքում, եթե հարցվողը դժվարանա հարցը ընկալել*):
14. Կարո՞ղ եք արտահայտել ձեր կարծիքը պետական խորհրդատվական ծառայությունների կարողությունների մասին, թե դրանք որքանո՞վ կարող են ծառայել որպես օրգանական ոլորտի գիտասփյուռ-խորհրդատվական գործակալներ:

Դոնորները՝

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Ֆրիկի փող. 21, Երևան, 0002 Հայաստան
Հեռ.՝ +374 (10) 54 64 94
Ֆաքս՝ +374 (10) 54 64 95
էլ-փոստ՝ Delegation-Armenia@eeas.europa.eu

AUSTRIAN DEVELOPMENT AGENCY

Ավստրիական կառավարության աջակցությունը Հայաստանին սկսվել է 1988թ.-ի ծանր երկրաշարժից հետո հումանիտար օգնություն տրամադրմամբ: 2011թ.-ից սկսած Հայաստանը Ավստրիայի զարգացման համագործակցության (ԱԶՀ) թիրախային երկրներից է: ԱԶՀ հիմնական ուղղություններից է գյուղատնտեսության զարգացումը և նպատակն է խթանել երկրում տնտեսական գործունեությունը՝ բարելավելով ընդհանուր պայմանները և հմտությունների ու փորձի («նոու- հաու») փոխանցման միջոցով նպաստ՝տել գյուղատնտեսական արտադրության արդիականացմանը

Ավստրիական զարգացման գործակալություն
Ցելինկագասսե 2 1010, Վիեննա, Ավստրիա
Հեռախոս `+43 1 90399 - 0

Կառավարության կողմից գործընկեր՝

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում եւ իրականացնում է գյուղատնտեսության եւ անտառային տնտեսության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Երեւան 0010 , Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Հեռ.՝ +374 10 52-46-41
էլ-փոստ՝ agro@minagro.am

ՕԳԱՆ ծրագիր

oasi
ORGANIC AGRICULTURE SUPPORT INITIATIVE

Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն (ՕԳԱՆ) ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և համաֆինանսավորվում ու իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) կողմից, որն, իր հերթին, հանդիսանում է Ավստրիական զարգացման համագործակցության (ԱԶՀ) գործառնական միավորը: Ծրագրի նպատակն է զարգացնելու Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը: Ծրագիրը կնպաստի հայկական օրգանական մթերքի արտադրության ընդլայնմանը և տեղական ու միջազգային շուկաներում հաջող իրացմանը՝ բարելավելով իրավական և օրենսդրական դաշտը:

Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն
Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ
Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, ՀՀ, Երևան 0010 7-րդ հարկ, սեն. 714 – 716, Վ. Սարգսյան 26/1
Հեռ.՝ +374 60 650281
էլ. հասցե՝ oasi@ada.gv.at

Մշակել են՝

IFOAM ORGANICS INTERNATIONAL

Օրգանական գյուղատնտեսության շարժումների միջազգային դաշնություն (IFOAM – Օրգանիքս Ինթերնեշնլը)

Շառլ դը Գոլ փող 5, Բոննն 53113, Գերմանիա
Հեռ.՝ +49-228-92650-10
Ֆաքս՝ +49-228-92650-99
էլ-փոստ՝ headoffice@ifoam.bio

ICARE INTERNATIONAL CENTER FOR AGRIBUSINESS RESEARCH AND EDUCATION

Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնը (ICARE)

ՀՀ, ք. Երևան 0009, Տերյան 74
Հեռ.՝ +374-10-522-839
Ֆաքս՝ +49-228-92650
էլ-փոստ՝ info@icare.am

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության աջակցությամբ: Այս հրապարակման բովանդակության համար պատասխանատվություն են կրում միայն Օրգանական գյուղատնտեսության շարժումների միջազգային դաշնությունը (IFOAM – Օրգանիքս Ինթերնեշնլ) և Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնը (ICARE): Սույն բովանդակությունը որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության տեսակետները: